Ճանաչի՛ր ինքդ քեզ

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 26.04.2023թ. չորեքշաբթի թիվ 18-19 (1095-1096)

Կգա օրը, եւ մենք կվերադառնանք Հայրենիք
...Լինի 108, թե էլի մի քանի տարի անց

Ապրիլի 24-ին երկիրը խնկարկեց Հայոց Մեծ Եղեռնի զոհերի՝ սուրբ նահատակների հիշատակը

1915-2023
Հայոց Ցեղասպանության
108-րդ տարելից

Հիշում եմ
եւ պահանջում

Պատմության դասը

Հայ ժողովուրդն այլեւս երբեք թույլ չի տա իր հետ վարվել այնպես, ինչպես 1915 թվականին ու դրանից առաջ, դրանից հետո... Հայ ժողովուրդն այլեւս երբեք չի խաբվելու, որովհետեւ անվերադարձ թոթափել է մշուշը իր գիտակցության վրայից եւ այսուհետեւ ապավինելու է **միայն ու միայն իր սեփական ուժին**...

Հայ ժողովուրդն այլեւս երբեք չի պարտվելու, որովհետեւ յուրացրել է արդեն պատմության մեծագույն դասը. *չկան լավ կամ վատ ժողովուրդներ, այլ կան միայն ազգային շահեր*, որոնք կարող են համընկնել կարճատեւ պահերի միայն, իսկ ընդհանրապես՝ գտնվում են հավերժական բախման ու պայքարի մեջ, եւ *«հաղթում է ոչ թե արդարը, այլ՝ ուժեղը»*:

* * *

Ու որպեսզի աշխարհը թոթափի իր գերանտարբերությունն ու դառնա փոքր-ինչ հայասեր, մենք ստիպված ենք թոթափել մեր գերմարդասիրությունն ու դառնալ փոքր-ինչ եսասեր: Մնացածը՝ մեր պատմական, քաղաքակրթական, բանական ու բարոյական գերներուժով՝ ժամանակի հետ:

Պիտի կերտենք նո՛ր արշալույս

Այն, ինչ տեղի ունեցավ 1915-ին ու դրանից առաջ եւ շարունակվեց մինչեւ 1923 թվականը, սկսվել էր 1878 թվականին, երբ միջազգային դիվանագիտության պատմություն մտավ Հայկական հարցը: Թուրքիան, օգտվելով առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորություններից, հղացավ մարդկային պատմության մեջ մինչ այդ չլսված, նույնիսկ իրենց՝ թուրքերի պատմության համար աննախադեպ հրեշավոր մի ծրագիր եւ ձեռնամուխ եղավ դրա պետականորեն կազմակերպված իրագործմանը՝ Հայկական հարցից ազատվել Հայաստանում հայ բնակչության ոչնչացմամբ, մեկընդմիշտ տիրանալ հայ ժողովրդի պատմական հայրենիքին:

Տարիներ հետո «հայր» Ստալինը պիտի ասեր՝ չկա մարդը, չկա պրոբլեմը: Ֆյուրեր Հիտլերը պիտի ավելացներ՝ ո՞վ է այսօր հիշում հայկական կոտորածները: Բայց իրենք՝ թուրքերը, արդյո՞ք բավականաչափ հիմքեր ունեին մտածելու, որ մնալու են անպատիժ: Եվ արդյո՞ք հայերի ցեղասպանության համար ողջ պատասխանատվությունը ընկնում է միայն Թուրքիայի վրա, թե՞ կան նաեւ մեղսակիցներ: Կայզերական Գերմանիա՞ն... Ռուսաստա՞նը... Անգլիա՞ն... Առայժմ մեզ անծանոթ են եվրոպական պետությունների, Ռուսաստանի դիվանագիտական խարդավանքների ու խաղերի բոլոր մանրամասները, որ հիմքեր դառնային ուղղակի մեղադրականի, Հայկական հարցի պատմության՝ 1915-ին նախորդած 37 տարիների ընթացքում: Սակայն տարրական տրամաբանությունը մեզ հուշում է, մանավանդ, երբ համադրում ենք պատմական իրադարձությունները եւ հայտնի բազմաթիվ փաստեր, որ ե՛ւ եվրոպական պետությունները, ե՛ւ Ռուսաստանը իրենց քաղաքական շրջապտույտներով այնուամենայնիվ նպաստեցին Թուրքիայի ոճրագործ դիրքորոշմանը...

Հիշենք Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, ապա՝ Բեռլինի կոնգրեսը եւ Խրիմյան Հայրիկի «Երկաթե շերեփի» պատվիրանը... Հիշենք դրանից առաջ քաջ զեյթունցիների՝ դեռեւս 1862-ին ժայթքած հերոսական ապստամբությունը: Ավաղ, 1915-ին Արեւմտյան Հայաստանի միայն մի քանի գավառներ ու քաղաքներ հետեւեցին քաջ զեյթունցիների օրինակին: Իսկ ընդհանրապես՝ 600 տարի պետականությունը կորցրած հայ ժողովուրդը, այլեւս անվստահ սեփական ուժերի հանդեպ, հույսեր էր փայփայում օտար միջամտությամբ եւ օգնությամբ ազատագրվել դեռեւս 11-րդ դարից Առաջավոր Ասիա եւ Հայաստան ներխուժած սելջուկ-թուրքերից... Սկսած 1722 թ. Դավիթ Բեկի ապստամբության օրերից, մասնավորապես արեւելահայոց մեջ ձեւավորվեց ռուսական կողմնորոշումը: Հայության մի զգալի մասն էլ ուներ արեւմտյան (եվրոպական) կողմնորոշում: Երկարատեւ քաղաքական դեգերումներից հետո, վերջապես, 1878-ին կարծես թե «հասանք» մեր ուզածին. մեր դատը հանձնված էր օտար բարձր ատյաններին, մտել էր օրակարգ... Շուրջ 40 տարի մեր «հովանավորները» առեւտուր արեցին, եւ բոլորն էլ ինչ-որ մի բան շահեցին՝ բացի մեզանից: Ռուս-թուրքական պատերազմները հայոց հույսը միշտ վառ էին պահում, սակայն դա միայն Ռուսաստանին ձեռնտու հետեւանքներ էր ունենում: Ի վերջո, Հայկական հարցի «մենաշնորհը» Ռուսաստանն իր ձեռքը վերցրեց: Սակայն Ռուսաստանին Հայաստանը պետք էր առանց հայերի: Տնտեսական տեսակետից ձեռնտու էր Հայաստանի բնիկ բնակչության աքսորումը եւ ռուսներով բնակեցումը: Ռուսաստանի քաղաքական շահը պահանջում էր խոչընդոտել Արեւմտյան Հայաստանի ազատագրությանը, որպեսզի վերջնականապես ծուլեր, յուրացներ, սեփականացներ 1828-ից իրեն անցած Արեւելյան Հայաստանը...

Հիշենք 1914-ին Պետական Դումայում դեպուտատ Մարկովի ելույթը. *«Ինչո՞ւ համար, իսկապես, Ռուսաստանը պետք է Կովկասի սահմանագլխում ստեղծի Մեծ Հայաստան: Դա ավելի վատ կլինի, քան Մակեդոնիան: Դա կստեղծի երկրորդ Լեհաստան: Հայերը լավ են ապրում, թե վատ, դա նրանց գործն է, իսկ մենք, եթե օժանդակենք ստեղծելու հայկական պետություն, նշանակում է՝ օժանդակենք կորցնել ամբողջ Կովկասը»*:

19-րդ դարի վերջին, հատկապես՝ 90-ական թվականներից, հայ ազգային-քաղաքական կյանքը զարթոնք էր ապրում: Թվում է՝ ուր որ է պիտի արվեր ազգային-ազատագրական պայքարի մի վերջին հզոր ճիգ, եւ վերականգնվում էր Պատմական Հայրենիքը: Սակայն այդպես էլ չկարողացանք ի մի բերել մեր ուժերը, ապավինեցինք օտարին ու ոչ միայն չհասանք մեր ազգային բնականոն երազի իրականացմանը, այլեւ եղեռնազարկ եղանք, եւ ոսոխը տիրեց մեր հայրենիքի 9/10-րդ մասին...

տես՝ նաեւ էջ 8-10

Հայկական հարց՝ համայն հայության եւ յուրաքանչյուր հայի գերագույն խնդիրը մինչեւ ի սպառ լուծում

Հետահայաց

Նահանջ հազար տարով

Երկաթե շերեփի դասը

Ուզենք, թե չուզենք, լինենք հանրապետություն, թե միապետություն, ժողովրդավարությանն անկեղծորեն փարվենք, թե խաղանք ժողովրդավարություն, մեր իրական կամ արհեստականորեն մեր կողքին հայտնված հարեւանների հետ լինենք պատերազմի, թե բարիդրացիական հարաբերությունների մեջ, միեւնույնն է, մեր **խնդիրը** մնում է նույնը արդեն հազար տարի: Իսկ թե որն է մեր ընդհանրական խնդիրը, գիտե անգամ յուրաքանչյուր հայ երեխա. ձեւակերպենք այն գեղարվեստորեն՝ **վերադարձ դեպի Արարատ,** կուսակցականորեն՝ **ազատ, անկախ, միացյալ,** պատմագիտորեն՝ **Պատմական հայրենիքի վերականգնում**... թե մի այլ եզրով՝ էական չէ: Բովանդակությունը նույնն է: Ու քանի դեռ խնդիրը լուծված չէ, միշտ մնում է այժմեական:

Մեր (միջին սերնդի) պատանության տարիներին միջազգային դիվանագիտությունն ու նրա պատմությունը մեզ համար հետաքրքրական էին հենց այն մասերով, որ առնչվում էին **Հայկական հարցին**: Հետագայում այս հասկացության փոխարեն ավելի հաճախ սկսեցին կիրառվել **Հայ դատի խնդիր, պահանջատիրություն** եզրերը: Վերջին տարիներին առավել գործածականը **Հայոց ցեղասպանության ճանաչում** հասկացությունն է:

Առաջին հայացքից՝ երեքն էլ նույն իմաստն ունեն կարծես, բայց նրբերանգային մեծ տարբերություն կա դրանց միջեւ եւ նույնիսկ՝ ակնհայտ նահանջ: Ստացվում է, որ մեր *հազար տարով նահանջը* նորից նահանջ է ապրում: Այնինչ, Արցախի ազատագրական պայքարը եւ հաղթանակը որոշակիորեն կանգնեցրին մեր հազարամյա նահանջը. **վերականգնված է Հայաստանի Հանրապետությունը**՝ իբրեւ անկախ եւ ինքնիշխան պետություն, եւ **ազատագրված է** *Պատմական հայրենիքի* արեւելյան կողմի մի հատվածը: Թվում է, թե ժամանակն է պետականորեն անդրադառնալ **Սեւրի** դաշնագրից բխող մեր իրավունքներին...

Սակայն քաղաքագետը կամ պետական քաղաքականության մեջ գործող անհատը կարող է մեզ դիվանագիտական խրատ տալ, թե՝ քաղաքականությունը **հնարավորի** իրագործման արվեստն է, եւ Հայոց ցեղասպանության ճանաչումով այսօր բավարարվելը տրամաբանորեն ճշգրիտ տարբերակ է: Գուցե դա ճիշտ է արտաքին դիվանագիտության դաշտում, բայց ոչ երբեք՝ մեր *հասարակական գիտակցության* մեջ: Նկատի ունենք մեր հազարամյա նահանջի պատմական ցավալի փաստը եւ վերածնված Հայաստանի առաջիկա հաջողությունների հանդեպ մեր մեծ ակնկալիքը: Այն հզոր ներուժը, որ ունի աշխարհասփյուռ հայ ժողովուրդը, թերեւս կարոտ է հայության բոլոր հատվածները միմյանց սոսնձելու կարողությամբ օժտված մի **գաղափարախոսության**, որը չի վախենա **ազգայնական** հորջորջվելուց եւ միանշանակ կտարփողի **ազգային շահը**՝ առանց որեւէ այլեւայլության... մինչեւ որ դա կարողանանք անել նաեւ *պետականորեն*:

Ամեն մի կառույց, անգամ տիեզերքը՝ Արարչագործությունից առաջ, նախ հանդես է գալիս իբրեւ *միտք, գաղափար, նախագիծ* եւ նոր միայն *իրական* տեսք է ստանում: Ունենք մեր երազների երկիրը՝ իբրեւ **Հոգեւոր Հայաստան, Պատմական հայրենիքի** *տեսիլ*, այժմ արդեն պիտի ունենանք՝ իբրեւ *գաղափար, նախագիծ* ու *ծրագիր*: Ամեն մի ծրագրի (խնդրի) իրագործման համար անհրաժեշտ են **ռեսուրսներ** (թող ներվի *պաշար* բառի փոխարեն օտար բառի գործածումը)՝ *հոգեւոր, բարոյական, գաղափարական, տնտեսական, նյութական* եւ այլն...

Ուրեմն՝ ունենանք **գաղափարը** մեր ուղեղներում, **հավատը**՝ մեր սրտերում, **ծրագիրը**՝ մեր գործերում ու անդուլ, անդադար կուտակենք անհրաժեշտ պաշարները (ռեսուրսները)՝ առանց երկմտելու, առանց երկնչելու, առանց տարբեր ախտերով միմյանց վարակելու եւ, ամենակարեւորը՝ **ազատվելով ստրկախտից:** Կա ***քարերը հավաքելու*** ժամանակը, կա ***քարերը նետելու*** ժամանակը: Մենք միշտ այդ ժամանակը դիմավորել ենք *առանց քարերի, թղթե շերեփով* (հիշենք **Խրիմյան Հայրիկի** խրատը), դրա հետեւանքով էլ քարերը հավաքելու եւ քարերը նետելու ժամանակները հերթագայել են միմյանց (արդեն հազար տարի), ու այդպես էլ չի եկել **մեր ժամանակը**:

Արդ, ժամանակն է նախապատրաստելու *մեր ժամանակը*: Երկար թե կարճ, մեծ թե փոքր, ամեն մի ճանապարհ կամ գործ սկսվում է առաջին քայլից:

Սկսենք նաեւ մենք: Թեկուզ մեզ հետ տեղի ունեցածը հստակ պատկերացնելու, մեր պատմությունն ու մեզ ճանաչելու պարզ քայլից:

Գ.Մ.

«Կրթություն», թիվ 17-18, 22.04.2009 թ.

Հարգանքի տուրք՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին

Վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** ՀՀ նախագահ **Վահագն Խաչատուրյանի,** Ազգային ժողովի նախագահ **Ալեն Սիմոնյանի** եւ երկրի բարձրագույն ղեկավարության հետ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցել Մեծ Եղեռնի 1,5 միլիոն զոհերի հիշատակին:

Նիկոլ Փաշինյանը ծաղկեպսակ է դրել հուշակոթողին, ծաղիկներ խոնարհել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող անմար կրակի մոտ:

* * *

Դեռեւս ապրիլի 23-ի երեկոյան, լույս 24-ի գիշերը, ապա բացված օրվա ողջ ընթացքում չէր դադարում երեւանցիների, ՀՀ բոլոր մարզերից, Սփյուռքից եկած մեր հայրենակիցների եւ բազմաթիվ օտարերկրացիների հոսքը դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր...

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ուղերձը՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի 108-րդ տարելիցի կապակցությամբ

Սիրելի՛ ժողովուրդ,

Սիրելի՛ հայրենակիցներ,

Ապրիլի 24-ին մենք ոգեկոչում ենք 20-րդ դարասկզբում Օսմանյան կայսրության կողմից իրականացված Հայոց ցեղասպանության 1.5 միլիոն զոհերի հիշատակը, եւ տասնյակ հազարավոր քաղաքացիներ այսօր հարգանքի, հիշատակի եւ խոկումի երթ կիրականացնեն դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Ապրիլքսանչորսյան երթը, թերեւս, մեր իրականությունը կանխորոշած ու կանխորոշող ամենաազդեցիկ երեւույթն է, մեր պատմության, անցյալի եւ ապագայի մասին մտածելու մի բացառիկ օր: Ի՞նչ են մտածում դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր հաճախ մանկահասակ երեխաների ձեռքերը բռնած քայլող երիտասարդ ծնողները, կամ կյանքի ավելի մեծ փորձառություն ունեցող տատիկներն ու պապիկները:

Նրանք, թերեւս, խորհում են երկու հարցի շուրջ. ինչո՞ւ Մեծ Եղեռնը տեղի ունեցավ եւ ի՞նչ է պետք անել՝ դրա կրկնությունը բացառելու համար: Հայոց ցեղասպանության պատճառների մասին հարյուրավոր ու հազարավոր աշխատություններ են գրվել, ի հայտ են բերվել բազմաթիվ պատճառներ եւ շարժառիթներ: Ինչ վերաբերվում է նման ոճիրի կրկնությունը բացառելու մեթոդաբանությանը, դա մեծապես կախված է *«պետություն»* եւ *«տարածաշրջան»* հասկացությունների մեր ընկալումներից:

Պետությունը, միայն զարգացած եւ ինքնիշխան պետությունն է ի վիճակի ապահովել մեր ժողովրդի լինելիությունն ու անվտանգությունը, իսկ պետության կայացման գործում յուրաքանչյուրն ունի անելիք՝ կրթությամբ, աշխատանքով, քաղաքացիական պատասխանատվությամբ ու օրինապահությամբ:

Տարածաշրջանի վերաբերյալ մեր ռազմավարական ընտրությունը հետեւյալն է՝ արդյո՞ք մենք մեր տարածաշրջանային հարաբերությունները կարգավորելու եւ զարգացնելու կամք ու կարողություն ունենք՝ անկախ այն բանից, կամ առավելեւս այն պարագայում, երբ մեր շուրջ առկա անվտանգային սպառնալիքներն ահագնանում են՝ տարածաշրջանային կամ արտատարածաշրջանային պատճառներով:

Բոլոր դժվարություններն ու բարդությունները գիտակցելով՝ մեր կառավարությունը որոշել է գնալ այդ հարցին դրական պատասխան գտնելու ճանապարհով, որովհետեւ միայն այդ ճանապարհն է, որ կարող է երաշխավորել անվտանգություն եւ բարեկեցություն:

Սիրելի՛ ժողովուրդ,

Սիրելի՛ հայրենակիցներ,

Այսօր մենք գլուխ ենք խոնարհում Հայոց ցեղասպանության 1.5 միլիոն զոհերի հիշատակի առաջ եւ խորհում ենք անցյալի, ներկայի եւ ապագայի մասին: Եվ սա անցյալի, ներկայի ու ապագայի մասին խորհելու ամենապատեհ պահն է:

Հայոց Ցեղասպանության Սուրբ նահատակների բարեխոսական կարգ

Ապրիլի 24-ին **Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ** Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ ոգեկոչելու Հայոց Ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակը:

Հուշահամալիրում՝ անմար կրակի առջեւ, ծաղկեպսակի զետեղումից հետո Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց Հայոց Ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսական կարգ:

Արարողությունից հետո Վեհափառ հայրապետը հորդոր հղեց արցախցիներին:

Օրվա առիթով Ծիծեռնակաբերդի հուշահամալիր էր բերվել նաեւ Հայոց Ցեղասպանության սրբոց նահատակաց մասունքարանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը՝ Հայոց ցեղասպանության Սուրբ նահատակների հիշատակի օրվա առիթով

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Հարյուր եւ ավելի տարիներ առաջ մեկ եւ կես միլիոն հայորդիք իրենց կյանքի գնով վկայեցին հավատարմությունը աստվածաշնորհ մեր հայրենիքին ու հավատքին՝ մերժելով ուրացությունն ու ուծացումը: Նրանք կենդանի պահեցին իրենց հավատն ու հույսը՝ մեր ժողովրդի վերածննդի հանդեպ: Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը խորհրդանշում է այդ վերածնունդը, որն իրականություն դարձավ հայրենիքի մի փոքր հատվածում անկախ պետականության վերակերտումով, ինչպես եւ աշխարհի տարբեր երկրներում ցեղասպանությունից փրկված հայորդյաց նոր կյանքի վերընձյուղումով:

Այսօր Հայաստանում ու Արցախում եւ ի սփյուռս աշխարհի, ազգովի համախմբված եկեղեցիներում, հուշակոթողների առջեւ, աղոթք ենք բարձրացնում առ Աստված՝ խնդրելով Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսությունը, որպեսզի միաբան ու աննկուն կամքով կարողանանք դիմագրավել արհավիրքներին ու սպառնալիքներին, պայքարել հայոց արդար դատի հաղթանակի համար եւ նպաստել մեր ժողովրդի կյանքում ու աշխարհում ցեղասպան եղեռ նագործությունների ու ոճիրների կանխմանը:

Թող Երկնավոր Տերը խաղաղություն ու բարօրություն պարգեւի Հայաստան ու Արցախ մեր հայրենիքին, եւ



թող հարուցյալ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի երկնային շնորհները եւ սերը բաշխվեն համայն մեր ժողովրդին ու ողջ մարդկությանը այսօր եւ միշտ. ամեն:

ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի ուղերձը՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ

1915 թվականին, երբ հայ ժողովրդի պատմության անիվը խափանվեց, երբ հայաթափման ոճիրն իր գագաթնակետին հասավ ու հավերժական լռություն ճանապարհվեց արեւմտահայ մտավորականության ձայնը, երկրագնդի անտարբերությունը ճեղքեցին հայտնի մարդասերները: Նրանք աղաղակում էին հայասպան քաղաքականության դեմ բոլոր հնարավոր միջոցներով, նրանք արձանագրում էին անարդարությունը՝ ուշադրություն հրավիրելով մեկուկես միլիոն հայերի կոտորածին: Ձարդերի օրերին է, երբ Գերմանիայի կանցլերը նամակ է ստանում իր երկրի դեսպանից, որը բառացի ասում է՝ բնաջնջելով հայ ազգին եւ լուծելով *«Հայկական հարցը»*՝ թուրքական կառավարությունը մերժում է ընդունել Գերմանիայի ներկայացուցիչներին, ամերիկացիներին, Պապի պատվիրակությանը, մերժում է լսել աշխարհի մեկ երրորդը ներկայացնող արեւմտյան հասարակության կարծիքը:

Դրանից շատ տարիներ անց առաջավոր աշխարհը պաշտոնապես ճանաչում է Հայոց ցեղասպանությունը եւ դատապարտում, իսկ Ցեղասպանության զոհերը Պապի կողմից սրբադասվում են:

Այսօր էլ մեր երկրին պատուհասած վտանգի ու հայաթափման քաղաքականության ականատեսն ենք, երբ դաժանաբար փորձում են ջնջել հայկական հետքը, վերացնել մեր մշակույթը: Քաղաքակրթության վերջին փուլեր թեւակոխող դարում ցեղասպանության հավանականությունը, ցավոք, վերացած չէ: Աշխարհը միակամորեն պետք է մերժի ու բացառի ցեղասպանությունների կրկնությունը՝ հանուն զարգացման ու առաջընթացի, հանուն նոր աշխարհի նոր քաղաքացու:

Խաղաղություն մեր անմեղ զոհերի հոգիներին, ապրենք ու ապրեցնենք մեր երկիրը:

Հետահայաց

Կգա օրը, եւ մենք կվերադառնանք Հայրենիք

Ուզենք, թե չուզենք, համարենք պարտություն, թե պատմական անարդարություն, Հայոց ցեղասպանությունը **իրողություն է**: Ոչ թե սոսկ պատմական մի փաստ, որ եղել է անցյալում, այլ՝ իրողություն, որի ոչ թե հետեւանքները, այլ ինքն իր ողջ **բովանդակությամբ շարունակվում է** ահա արդեն **92** տարի, իսկ սկսվել է դրանից էլ շատ առաջ:

Ճանաչեն, թե չճանաչեն, անվանեն *ողբերգություն*, թե *գենոցիդ*, միեւնույնն է, այդ իրողությունն ունի մի պարզ ձեւակերպում. **մեզանից գողացել են մեր Հայրենիքը**:

Այսօր մենք ստիպված ենք պայքարել **1915-23** թվականներին տեղի ունեցած Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար... Միջազգայնորեն **ցեղասպանություն** է դիտվում անգամ մեկ մարդու սպանությունը՝ իր ազգային պատկանելության պատճառով... Մեզ հետ տեղի ունեցածը լոկ ցեղասպանություն չէր: **Էթնոցի՞դ** էր... Մի ողջ ժողովրդի՝ էթնոսի ոչնչացմանը նպատակաուղղված կազմակերպված ծրագրի իրագործո՞ւմ... Եւ ոչ միայն: Մեզ հետ տեղի ունեցածը **հայրենա՛սպանություն** էր... Եվ ուզենք, թե չուզենք (հպարտանալու բան չէ), անօրինակ մի բան, որի հետ չեն կարող համեմատվել ոչ հրեաների Հոլոքոստը, ոչ էլ մի այլ ժողովրդի դեմ գործված որեւէ ոճիր: Հրեաներին ոչնչացնում էին **ո՛չ իրենց հայրենիքում**: Եվ այսօր, երբ նույն հրեաները հաճախ դժկամությամբ են համեմատում կամ անհամեմատելի են համարում իրենց հետ տեղի ունեցածը մեզ հետ տեղի ունեցածի հետ, իրավացի են: Մեզ հետ տեղի ունեցածը, այո՛, **ցեղասպանություն** էր, բայց՝ ոչ միայն: Մեզ հետ տեղի ունեցածը **էթնոցիդ** էր՝ ժողովրդասպանություն, եւ ոչ միայն: Մեզ հետ տեղի ունեցածը **հայրենասպանություն** էր... եւ դարձյալ՝ ոչ միայն: Որովհետեւ մեր **Հայրենիքը** միայն հայրենիք չէ, լոկ մեզ համար մի անգին պարգեւ, որի կորուստը չի կարող ենթադրել որեւէ այլ փոխհատուցում, բացի միա՛յն նրա **վերադարձից** կամ մեր վերադարձից դեպի մեր Հայրենիքը: Մեր Հայրենիքը **Ավետյաց** երկիրն է, Մարդկության **բնօրրանը**, Երկրագնդի Երկիր **դրախտավայրը**, որ **Աստծո** կամքով տեղադրված է **Հայկական լեռնաշխարհում**, **որտեղ կիզակետվում են տիեզերական բանականության բոլոր շնորհները** եւ ապա նոր տարածվում ամբողջ աշխարհի վրա: Ուրեմն՝ մեզ հետ տեղի ունեցածը, միջազգային սահմանումով, թե առանց դրա, աննախադեպ, անօրինակ, որեւէ բնութագրականի մեջ չտեղավորվող ոճիր էր **Մարդկության** դեմ, **Տիեզերքի** դեմ, **Աստծո** դեմ... Ու **նախաստեղծ**, **Աստվածարյալ** մեր տեսակին էր վիճակված անցնել այդ **Գողգոթան**, ինչպես **Աստվածորդին** խաչի վրա, ու մեր տեսակին էլ վերապահված է նաեւ **Հարության Արշալույսը**:

Եւ դարձյալ՝ ուզենք, թե չուզենք, աշխա՛րհը չէ, **մե՛նք**, միա՛յն մենք պիտի նախ ճանաչենք, հասկանանք, թե ինչ է տեղի ունեցել մեզ հետ, ապա ըմբռնենք, գիտակցենք, հավատանք ու ավելի կազմակերպված, քան մեզ հետ տեղի ունեցածը կազմակերպողները (ոչ միայն իրագործողները), վերցնենք այն, ինչ մե՛րն է **Աստծո կամքով**, վերադառնա՛նք դեպի **Արարատ**, դեպի մեր **Պատմական Հայրենիքը**, որպեսզի շարունակվի՛ մեր բնականոն **Առաքելությունը** Երկրի վրա, որ մեկնարկել է **Աստված՝ Արարչագործությամբ**... էլ ումի՞ց ենք վախենում...

Աստծունը՝ Աստծուն, հայերինը՝ հայերին:

Եղիցի՛:

Գ.Մ.

«Կրթություն», թիվ 18-20, 25.04.2007 թ.



Հետահայաց

Համընդհանուր խռովքի թելադրանքով Կամ՝ մի քիչ թվաբանություն

Այդ ե՞րբ եղավ... Ինչպե՞ս եղավ... Ինչո՞ւ եղավ... Ո՞րն էր այն առաջին ճակատագրական զիջումը, նահանջը, որ շարունակվեց 10 տարի, 100 տարի, 5 դար, հազարամյա՛կ... Դարձավ 1045-ի՝ Անիի կործանումից, **Գագիկ Երկրորդ** վերջին **Բագրատունի** արքայի եղերական վախճանից մինչեւ **1915**-ի ցեղասպանությունը ձգվող մի չարչարանաց հավերժություն... Այդքա՛ն երկա՛ր մի հոգեվա՞րք... Այդքա՛ն հզոր, ամե՛ն բանով հզոր, մարդկային պատմության ամե՛ն նոր հանգրվանի առաջամարտիկ, **Քրիստոնեությունն** առաջինը պետականորեն ընդունած, աշխարհին ամենից ինքնատիպ ու փառահեղ քաղաքակրթություններից մեկը պարգեւած, այդքա՛ն կարող ու այդքա՛ն անքեն ու ամենասե՛ր, այդքա՛ն ամենքին նման ու ամենքին հարմարվող, ամենքին տե՛ր ու ամենքին ծառա՛, բայց այդքան ինքնասպա՞ն...

Ո՞վ էր, ի՞նչն էր ստիպում **Պատմահորը** գրել *«Թեպետ եւ եմք ածու փոքր...»*... Ախր, այդ ումի՞ց էիր փոքր, Քերթողահա՛յր, այդ քանի՞ ազգ ու ազգություն կար աշխարհում, եւ դրանց ո՞ր մասն էր քեզանից մեծաքանակ կամ քեզանից առաջավոր ու հզոր... Այդ *«փոքր»* բառը մնաց ոչ միայն քո *«Հայոց պատմության»* կամ մեր պատմագիտության մեջ իբրեւ դառնացած մի պահի ասված խոսք, այլեւ դարձավ հոգեբանությո՛ւն, անհաղթահարելի՛ մի հիվանդությո՛ւն, որ ժամանակների մեջ ո՛չ միայն չբուժվեց, այլեւ վերածվեց *«ստրկախտի»՝* ընդհուպ մինչեւ 20-րդ դարավերջ...

Ո՞վ, ի՞նչը ստիպեց քեզ, **Փո՛քր Միեր**, որ անհա՛ղթ էիր, անպարտելի՛ ու անմա՛հ, հեռանա՛լ աշխարհից, ինքնակա՛մ գնալ ու փակվե՛լ *Ագռավաքարում...*

Սասունցի՛ Դավիթ, որքան ուժեղ, այնքան միամի՛տ Դավիթ, մինչեւ **Ձենով Օհանը** չկանչեց, չելար հորից... Ի՞նչ է, չէի՞ր հավատում, որ հենց քեզ թափ տաս, ելնելու ես հորից, ինքնուրո՛ւյն, եւ քո՛ ուժով, որքա՛ն էլ որ հորը խորը լինի կամ հսկա քարերով փակված...

Անպարտելի՛, անասելի՛ հզոր ու այդքան անվստա՞հ... Եղե՞լ է գեթ մի դեպք, որ օտարից հոգնած՝ ապավինես միայն **Քո՛** ուժին, ու սխալված ու պարտված լինես: Երբե՛ք: Միշտ սխալվել ու պարտվել ես, երբ հույսդ դրել ես ուրիշի օգնության վրա:

Քո աստեղային ժամերին, երբ սթափվել ես մի պահ ու թափ ես տվել Քեզ Քո էպոսի հերոսի նման, մի՛շտ հաղթել ես, ու չկա՛ մի ուժ այս արեւի ներքո, որ կասեցնի Քո հաղթական ելքը ամենաանելանելի վիճակից անգամ... Եթե միայն Ի՛նքդ, Ի՛նքդ կամենաս ու քայլդ անես միայնա՛կ, մեն-մենա՛կ, ինքնուրո՛ւյն, Քո՛ սեփական բազկի ու մտքի ուժին ապավինած... Ինչպես **Սարդարապատում,** ինչպես **Արցախում**...

Այդ ումի՞ց ես փոքր կամ փոքրաթիվ... Աշխարհում շուրջ **5000** ազգ ու ազգություն կա: Դրանցից միայն մոտ **200**-ը ունեն պետություն, որոնց աշխարհը ճանաչել ու հաշվի է առնում որպես այդպիսին: Դրանց շարքում Դու Քո բնակչության թվով **առաջին** հարյուրյակի մեջ ես, տվյալ լեզվով խոսողների թվով **75**-րդն ես, իսկ աշխարհում տարածվածության հաշվարկով **հայերենը** գտնվում է աշխարհի ամենատարածված լեզուների **առաջին տասնյակում**... Դե, ասա՛, այդ ի՞նչ հաշվարկով ես Դու փոքր... Ու ասա՛ նաեւ՝ ումի՞ց ես պակաս եւ ինչո՞վ... Խելքո՞վ: Քաջությա՞մբ: Ծագումո՞վ: Լեզվո՞վ: Մշակույթո՞վ... Գուցե ռազմական տաղանդո՞վ... Վիրավորվեցի՞ր... **Անդրանիկն** աշխարհի միա՛կ զորավարն է, որ որեւէ ճակատամարտ երբեւէ տանուլ չի տվել... Հապա այդ ինչպե՞ս եղավ, ինչո՞ւ եղավ...

շարունակությունը՝ էջ 11

Հարգանքի տուրք՝ Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը** Կառավարության անդամների հետ ծաղիկներ է խոնարհել 108 տարի առաջ Օսմանյան Թուրքիայի իրականացրած Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

ՀՀ ԳԱԱ տարեկան հաշվետու ժողով

«Հայաստանի զարգացման ուղին գիտական ներուժի օգտագործումն է»

Հանրապետության նախագահ **Վահագն Խաչատուրյանը** մասնակցել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի տարեկան հաշվետու ժողովին, որի ընթացքում հանդես է եկել ելույթով:

Իր խոսքում նախագահ Խաչատուրյանն անդրադարձել է Ակադեմիայի եւ գիտահետազոտական ինստիտուտների գործունեության բովանդակությանն ու հիմնադրույթներին, ինչպես նաեւ ակադեմիական ոլորտում իրականացվող բարեփոխումների սկզբունքներին:

Անդրադառնալով Հայաստանում գիտության դերին եւ կարեւորությանը՝ նախագահը, մասնավորապես, նշել է. *«Ոչ ոք կասկած չունի, որ Հայաստանի զարգացման ուղին միայն գիտության հնարավորությունների, գիտական ներուժի օգտագործումն է: Կիսում եմ նաեւ այն միտքը, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բոլոր նախարարները պետք է այստեղ լինեին, քանի որ գիտությունն այսօր առնչվում է բոլորիս հետ. առանց գիտության՝ մենք զարգացում չունենք, մենք այլ ռեսուրս չունենք քան մարդը: Եթե մենք ուզում ենք աշխարհում ունենալ մեր տեղը, եւ եթե մենք ունենք որոշակի ծրագրեր ու նպատակներ, ապա միայն գիտության շնորհիվ դրանց կարող ենք հասնել:*

Ինձ ավելի քիչ է անհանգստացնում Ակադեմիայի միավորման-բաժանման հարցը, որովհետեւ լուծումներ կարելի է գտնել: Կարեւորը բովանդակությունն է, ավելի կարեւոր է հասկանալ, թե մենք ինչ ենք ուզում, ինչպիսի գիտություն ենք ուզում կամ ինչու մեր գիտական արդյունքները մեզ չեն բավարարում»:

Խոսելով գիտության աջակցության ուղղությամբ կառավարության որդեգրած քաղաքականության մասին՝ Հանրապետության նախագահը շեշտել է, որ վերջին տարիների թվային ցուցանիշերն ու գիտության զարգացմանն ուղղված պետական ծրագրերի ու ֆինանսական հատկացումների վերլուծությունները վկայում են, որ կառավարության համար գիտությունը ոլորտային առաջնահերթությունների շարքում է:



Իր ելույթում Վահագն Խաչատուրյանն ընդգծել է, որ գիտական հանրությունը եւ կառավարությունը պետք է գործեն փոխօգնության եւ արդյունավետության բարձրացման սկզբունքներով: *«Մենք 6.8 միլիարդ ունենք հատկացված ռազմաարդյունաբերությանը, եւ եթե այդ գումարի գոնե կեսը իրացվում է մենք ուրախանում ենք, ես հիմա էլ ցանկանում եմ խնդրել բոլորիդ աշխատել այդ ուղղությամբ, եթե կան գաղափարներ, որոնք օգտակար կլինեն Հայաստանի անվտանգության բարձրացմանը, հենց ռազմաարդյունաբերության համալիրին, ապա ռեսուրսը կա ֆինանսական, պետությունն այդ հնարավորությունը տալիս է եւ մեծ ակնկալիքներ ունի հենց գիտությունից»,- ասել է նախագահը:*

Անդրադառնալով գիտության արդյունավետության խնդրին՝ նախագահ Խաչատուրյանը նշել է. *«Ես ուզում եմ հասկանալ, երբ հիշատակում ենք հրապարակված հոդվածները? ես ինքս էլ այդ հոդված գրողներից մեկն եմ, արդյունավետ են թե ոչ, ես չգիտեմ, օրինակ, իմ գրած հոդվածն ինչքանով է կիրառելի, ես կուզեի, որ այն հոդվածները, որոնք գրվում են կիրառական նշանակություն ստանան: Խնդիրն այստեղ է՝ գիտություն, արտադրություն, գիտահետազոտական ինստիտուտներ, եռանկյունու մեջ է, թե ինչպես են այս օղակները հարաբերվում իրար հետ»:*

Եզրափակելով իր խոսքը՝ նախագահ Վահագն Խաչատուրյանը նշել է. *«Իշխանությունն Ակադեմիային հակադրվելու ցանկություն չունի եւ չի էլ ունեցել, Ակադեմիան իշխանության մաս է, դուք իշխանություն եք. ամենակարեւորը՝ ազնիվ պետք է լինենք միմյանց նկատմամբ, բաց խոսենք հարցերի մասին, մենք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներս ձեր կարիքն ունենք, մենք միմիայն ցանկանում ենք հնարավորինս շատ լսել ձեր ձեռքբերումների եւ հաջողությունների մասին, մենք հպարտանում ենք ձեզանով: Բոլորիդ ցանկանում եմ աշխատանքային հաջողություններ, տարեկան ժողովում արդյունավետ աշխատանք: Այն անհանգստությունները, որոնք կան արագորեն լուծենք, որպեսզի դուք, ակադեմիան ձեր ներուժն օգտագործեք ոչ թե այսպիսի հարցեր քննարկելու, այլ շատ կոնկրետ անելիքների մեջ եւ այդ շատ կոնկրետ անելիքներն ինձ համար տեսանելի են գոնե մի շարք բնագավառներում եւ կարծում եմ, հաջորդ անգամ հավաքվելուց մենք կքննարկենք արդյունքները՝ կլինի դա գիտական հետազոտություն, ֆորմուլա, կամ գիտական արդյունք:*

Շնորհակալություն»:

Խորհրդարան

ՀՀ ԿԳՄՍ նախարարը ներկայացրել է գերատեսչության 2022 թ. կատարողականը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանն** Ազգային ժողովում *«ՀՀ կառավարության ծրագրի (2021-2026 թվականներ) 2022 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին»* զեկույցի համատեքստում ներկայացրել է ԿԳՄՍՆ 2022 թվականի կատարողականը:

Նախարարը մի շարք փաստական տվյալներ է ներկայացրել ԿԳՄՍՆ ոլորտներում նախորդ տարի իրականացված գործընթացների վերաբերյալ:

Նրա խոսքով՝ հայրենաճանաչության նպատակով դպրոցներում ներդրվել է նոր առարկա՝ ***«Ես եւ իմ հայրենիքը»:*** Հայաստանի շուրջ **25.000 մշակույթի** անշարժ հուշարձաններից **7-ն** ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում: Վերջին տարիներին մեծ թափ են ստացել պետության կողմից հուշարձանների վերականգնման աշխատանքները: Շուրջ **10** հուշարձան այժմ վերականգնվում է պետություն-մասնավոր անձ համագործակցությամբ:

Ըստ նախարարի՝ միայն նախորդ տարի ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող թանգարաններ է այցելել **1 միլիոն 78 հազար** մարդ, որը շուրջ **15** տոկոսով ավելի է 2021 թվականի ցուցանիշից: Հաշվետու տարում թատրոնների եւ համերգասրահների ենթակառուցվածքների բարելավման նպատակով հատկացվել է ռեկորդային՝ **1 միլիարդ 284 միլիոն դրամ:** 2021 թվականին այդ թիվը կազմել է **300 միլիոն դրամ:**

Ժաննա Անդրեասյանը փաստել է՝ որ 2023 թ. **մայիսի 1-ից** մինչեւ **12** տարեկան երեխաների մուտքը թանգարաններ կլինի անվճար, 12 տարեկանից բարձր երեխաները եւ ուսանողները թանգարաններ կայցելեն՝ վճարելով կես գին: Արտոնություններ կգործեն նաեւ սոցիալական այլ խմբերի համար:

Նա նշել է, որ 2022 թվականին ընդունվել է *«ՀՀ **կրթության**՝ մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը»,* որի գլխավոր նպատակը յուրաքանչյուր քաղաքացու որակյալ եւ միջազգայնորեն մրցունակ, հասանելի կրթության ապահովումն է:

Սպորտի մասսայականացման նըպատակով կարեւորվել է մարզական ենթակառուցվածքների հասանելիությունը: Այժմ կառուցվում է **12** մարզադպրոց եւ մարզական կառույց: Հաշվետու տարում ավելացել է մարզիկների պարգեւատրումների չափը:

Գիտության ոլորտի ֆինանսավորումը 2023 թվականին 2018 թվականի համեմատ ավելացել է շուրջ **2,5** անգամ կամ **150** տոկոսով: Ըստ ԿԳՄՍ նախարարի՝ որպեսզի գիտությամբ զբաղվելը գրավիչ լինի, մեկնարկել է գիտաշխատողների աշխատավարձերի փուլային բարձրացման ծրագիրը: Աշխատանքներ են տարվում, որպեսզի ոլորտը համալրվի երիտասարդ գիտնականներով:

Անդրադառնալով **դպրոցների եւ մանկապարտեզների վերանորոգման** աշխատանքներին՝ նախարարը նշել է, որ նախորդ տարի **24** դպրոցներում եւ **46** մանկապարտեզներում ավարտվել են վերանորոգման աշխատանքները: Այս պահին աշխատանքներ են ընթանում **165** դպրոցներում եւ **125** մանկապարտեզներում: Դրանք շահագործման են հանձնվելու՝ ամբողջությամբ հագեցված նոր գույքով:

Ընդհանուր առմամբ՝ հանրապետությունում նախատեսվում է ունենալ **150** կրթահամալիր, որից **40**-ը՝ Սյունիքի մարզում: *«Հայաստանի մանուկներ հիմնադրամի»* հետ համատեղ Սյունիքում նախատեսվում է ունենալ նաեւ **2** սմարթ կենտրոն:

Աշխատանքներ են տարվում **դպրոցները բնագիտական լաբորատորիաներով** համալրելու ուղղությամբ: Շարունակվում է ուսուցիչների **կամավոր ատեստավորման** գործընթացը, որն այս տարի նախատեսված է հանրակրթական դպրոցի 1-12-րդ դասարաններում դասավանդող բոլոր ուսուցիչների համար:

Բարեփոխումներ են սկսվել **բարձրագույն կրթության** ոլորտում, արդեն նախապատրաստական աշխատանքներ են ընթանում՝ միտված ակադեմիական քաղաքի ստեղծմանը:

Զեկույցից հետո նախարարը պատասխանել է պատգամավորների տարաբնույթ հարցերին:

Անդրադառնալով պատգամավորներից մեկի՝ ուսուցիչների կողմից բարձրաձայնված այն հարցին, թե կարո՞ղ են միջին մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչներն առանց կամավոր ատեստավորմանը մասնակցելու շարունակել աշխատել, այն դեպքում, երբ մասնակցել են պարտադիր ատեստավորմանը, հավաքել համապատասխան կրեդիտներ, ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է, որ առանց կամավոր ատեստավորում անցնելու՝ աշխատանքը չեն կարող շարունակել բարձրագույն կրթություն չունեցող ուսուցիչները: Նա պարզաբանել է՝ այդ ուսուցիչները 12 տարի ժամանակ ունեին ստանալու համար բարձրագույն կրթություն: Ըստ նախարարի՝ հանրապետությունում միջին մասնագիտական կրթություն ունեցող **1340** ուսուցիչ կա: Այժմ շրջանառության մեջ է դրված օրենքի նախագիծ, ըստ որի՝ այն ուսուցիչները, որոնք ունեն միջին մասնագիտական կրթություն, հնարավորություն կստանան մասնակցել կամավոր ատեստավորմանը: Սահմանված շեմը հաղթահարելու եւ համապատասխան միավորներ հավաքելու դեպքում նրանք կկարողանան շարունակել իրենց աշխատանքը՝ ունենալով կամավոր ատեստավորման նույն արտոնությունները, ինչ բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչները:

Աժ նախագահի տեղակալ **Հակոբ Արշակյանը** հետաքրքրվել է՝ արդյոք քննարկվել է մասնավոր դպրոցներին այն արտոնություններով աջակցելու հարցը, ինչից օգտվում են պետական դպրոցները: Ժաննա Անդրեասյանը պարզաբանել է, որ ՀՀ-ում գործում են շուրջ **1400** պետական հանրակրթական եւ **50** ոչ պետական դպրոցներ, եւ այստեղ իրավիճակը բավականին բազմաշերտ է: Նրա խոսքով՝ նախորդ տարվանից ոչ պետական դպրոցների տարրական դասարանների շուրջ **4000** աշակերտները եւս ստանում են անվճար դասագրքեր: *«Մենք նաեւ քննարկում ենք ներառականության ապահովման հարցը, քանի որ այն պահանջում է լրացուցիչ ծախսեր. գուցե այդ աջակցության տրամադրման հարցը քննարկենք հաջորդ փուլում»,-* ասել է նախարարը՝ հավելելով, որ երեխաների թվով ֆինանսավորման հարցի հետ կապված եւս հավելյալ քննարկման կարիք կա: Նախարարը նաեւ փաստել է, որ ոչ բոլոր մասնավոր դպրոցներն են ապահովում որակյալ կրթություն. *«Այդ 50 դպրոցների թվում կան նաեւ ոչ պետական դպրոցներ, որտեղ բավականին բարդ է հասկանալ, թե ինչպիսին է կրթության որակը»:*

Պատգամավոր **Թագուհի Ղազարյանը** հետաքրքրվել է ԿԳՄՍ նախարարության համակարգման տիրույթում գտնվող լեզվական քաղաքականությամբ: Ի պատասխան՝ Ժաննա Անդրեասյանը նշել է, որ առաջնային խնդիրներից է լեզվական քաղաքականության մշակման նախաձեռնումը՝ ընդգծելով, որ ժամանակները պահանջում են հասկանալ՝ ինչ փոփոխությունների կարիք կա, որպեսզի դրանք լինեն շատ ավելի համահունչ առկա մարտահրավերներին:

Պատգամավոր **Քրիստինե Պողոսյանը** բարձրաձայնել է, որ Պտղնի համայնքի 6-րդ դարի տաճարը հիմնանորոգման կարիք ունի, սակայն չի ընդգրկվում վերակառուցման ծրագրերում: Ի պատասխան՝ Ժաննա Անդրեասյանը նշել է. *«Ցավոք, մեծ ծավալի աշխատանք կա անելու, որովհետեւ հուշարձանների զգալի մասը կարիք ունի անհրաժեշտ հիմնանորոգման եւ ամրացման: Եկեղեցաշինության ուղղությամբ մասնագիտացած ճարտարապետներ այսօր գրեթե չունենք. չկան նաեւ վերականգնող ճարտարապետներ: Կան իհարկե, բայց նկատի ունեմ որակի եւ ժամանակակից տեխնոլոգիաների իմաստով: Այս պահին իտալացիների հետ ենք համագործակցում, որի առանցքում լինելու է կրթական ծրագրերով տեղական ռեսուրսներ ձեւավորելը»:*

«Նախատեսում ենք, որ «Հայֆիլմ» կինոստուդիայի տարածքում տեղակայվելու է ակադեմիական քաղաքի արվեստների կլաստերը»,- հայտարարել է նախարար Ժաննա Անդրեասյանը՝ պատասխանելով պատգամավորներից մեկի այն հարցին, թե ինչ է լինելու *«Հայֆիլմ»* կինոստուդիայի տարածքի ճակատագիրը: *«Ունենք հստակ պատկերացում, որ այստեղ վերականգնելու ենք կինոարտադրության եւ կինոկրթության հնարավորությունները: Այսինքն՝ շենքի սկզբնական գործառույթները պետք է զարգացնենք, իսկ թե ինչպես՝ կասեն մասնագետները: Ակնկալում ենք ճարտարապետների այց: Այստեղ լինելու են արվեստների համալսարանը, արվեստների ավագ դպրոցը՝ բոլոր ենթակառուցվածքներով, ժամանակակից կինոթատրոնով»:*

Ինչ վերաբերում է ակադեմիական քաղաքի ընդհանուր կառուցվածքին, նախարարը հայտնել է, որ Աշտարակի ֆիզիկայի ինստիտուտի տարածքում կտեղակայվի տեխնոլոգիական կլաստերը, իսկ երրորդ կլաստերում՝ կրթական այլ հաստատություններ: Ընդհանուր առմամբ, ըստ Ժաննա Անդրեասյանի, ակադեմիական քաղաքը միավորելու է մոտ 44 հազար ուսանողների եւ դասախոսների:

շարունակությունը՝ էջ 6

Հետահայաց

Ներգաղթ



2015 թվականին Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված աննախադեպ ընդգրկումով միջոցառումներն ամբողջ աշխարհում մեր հարության, մեր Մեծ Վերածննդի գործընթացի մեկնարկը վկայեցին...

100 եւ ահա եւս մեկ երկար եւ ծիգ տարիներ համբերել ենք՝ սպասել ճանաչման, դատապարտման, հատուցման... Բայց արդեն, կարծես թե, դասեր ենք քաղել պատմությունից, վերջապես համոզվել, որ մե՛ր խնդիրը մե՛նք պիտի լուծենք՝ մեր մտքի ու բազկի ուժով... Ամենից երկար ու դժվար ճանապարհն անգամ սկսվում է առաջին քայլից: Բայց ճի՛շտ քայլից: Ուղի՛ նշող քայլից: Վաղ թե ուշ, մեր Հարցը լուծվելու է: Լուծելու ենք: Բայց երբ էլ եւ ինչպես էլ լուծենք, դրանից առաջ ու դրանից հետո մենք մե՛ր կարիքն ենք զգալու, մեր որակի հետ մեր քանակի՛ կարիքը, մեր հայրենիքում մեր գոյությունը հավաստող, մեր գոյությունը ապահովող մեր ներկայությա՛ն կարիքը...

Աստված մեզ հրաշալի երկիր է պարգեւել՝ մարդու կենսագործունեության համար լավագույն վայրը երկիր մոլորակի վրա: Արեւային օրերի ամենից մեծ քանակ, լեռնային մաքուր օդ, խմելու ջրի գրեթե անհատնում պաշար, հարուստ ընդերք, բարեխառն կլիմա, բուսական եւ կենդանական օգտակար բազմազանություն... Իր ներկայիս տարածքների մեջ Հայաստանի Հանրապետությունը, համապատասխան կացութաձեւի կազմակերպման դեպքում, կարող է լավագույն կենսամակարդակ ապահովել շուրջ 5 միլիոն բնակչության համար: Արցախի Հանրապետությունը դա կարող է անել 1 միլիոն մարդու համար... Ու եթե մենք պահպանել ենք մեր տեսակին բնորոշ հոգեկերտվածքն ու նկարագիրը, մեր բնատուր ընդունակությունների՝ աստվածաշնորհ տաղանդի ու աշխատասիրության առկայության պայմաններում ինչո՞ւ պիտի չմտածենք ներգաղթի՛ մասին... Հզոր, որակապես՝ պատմական նոր շրջափուլ ապահովող, Հայոց Մեծ Եղեռնին հակակշիռ՝ 1.5 միլիոն հայերի հայրենադարձության մասին... Որքան էլ առաջին հայացքից խենթ, բայց իրատեսական մի երազանք-առաջարկ-ծրագիր է սա, որ հաստատ կարող ենք գլուխ բերել, եթե իրագործմանը հավատա՛նք ազգովի ու ազգովի՛ ձեռնամուխ լինենք կատարմանը:

Մի պահ պատկերացրեք, որ պետությամբ ու ժողովրդով, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցով, հայրենի եւ ավանդական բոլոր կուսակցություններով, Հայաստանի Հանրապետության եւ Սփյուռքի բոլոր հասարակական կազմակերպություններով, քիչ թե շատ ֆինանսական հնարավորություններ ունեցող հայաստանցի եւ սփյուռքահայ բոլոր գործարարներով՝ կազմակերպված եւ համակարգված աշխատանքով սկսում ենք ներգաղթի նախապատրաստումը եւ իրագործումը: Նման խանդավառությունը եւ միասնականությունը ընդամենը 3-4 տարում Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում՝ 1 միլիոն, եւ կես միլիոն հայրենադարձ կարող է բնակեցնել Արցախում: Հավատացե՛ք, վերադարձող հայն իր հետ կբերի ե՛ւ կապիտալ, ե՛ւ գաղափար, ե՛ւ միտք, ե՛ւ բազուկ... Եվ չենք էլ հասցնի զարմանալ, թե ինչպես ինքնաբերաբար կստեղծվի ե՛ւ բնակարանը, ե՛ւ աշխատատեղը, ե՛ւ վաստակը: Եվ որքա՜ն սքանչելի կարող է լինել գործի ավարտը՝ երբեւէ տոնած մեր ամենամեծ հաղթանակը, որ համազգային բերկրանքի հետ նաեւ Պատմական Հայրենիքի ազատագրումը կդարձնի ավելի քան իրական: Ընդամենը եւս մեկ - երկու տարվա խնդիր:

«Եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք, այս լեռանը կասեք՝ տեսափոխվի՛ր այստեղից այնտեղ, եւ կտեղափոխվի, եւ որեւէ բան ձեզ համար անհնարին չի լինի»,- ասում է Աստված (Մատթ. 17.19)... Միայն թե հավատա՛նք: Միայն թե հավատա՛նք:

Գ.Մ.

«Կրթություն», թիվ 18-19, 27.04.2016 թ.

Հիշում եմ եւ պահանջում

Գարեգին ՆԺԴԵՀ

Ասույթներ

❖ Ես տեսայ մեր վարած ճակատամարտերում, տեսայ ամենաընտիրը հայու – մեռնելու մտքի հետ հաշտուած, ամէն գնով յաղթելու անտեղիտալի վճռականութեամբ դէպ թշնամին խոյացող հայ զինուորը:

Ճանաչեցի եւ ամենավատը հայու – վախկոտութեան յանցանքի մէջ բռնուած անարին:

Առաջինը կը մեռնէր ապրեցնելու համար իր ազգն ու նրա զէնքի հմայքը, երկրորդը կ'ապրէր ամեն գնով՝ ապրեցնելու համար թշնամու փառքը:

❖ Արի է նա, ով իր մէջ սպանել է իր կաշւի համար դողացող անասունը:

❖ Երբէք եւ ո՛չ մի տեղ՝ առանց հոգեւոր հայրենիքի:

❖ Հայրենի՛ք: Երկիւղած սէր եւ յարգանք դէպ մեր նախահայրերի յիշատակը, դէպ մեր կրօնը, որ ցեղի սիրտն է, դէպ մայրենի լեզուն, որ հայրենասիրութեան թթխմորն է, դէպ տոհմիկ գրականութիւնը եւ արուեստները, որ ցեղի մտքի եւ հոգու կեանքն են, ազգային պատմութիւնը, որ «ցեղի հոգին ամրացնելու ճիգերի պատմութիւնն է», իրար յաջորդող սերունդների՝ հայրենի հողի վրայ թափած քրտինքն ու արիւնը, գեղջուկի հորովելն ու Տիգրան Աշխարհակալի սուրը, դէպ Անիի աւերակներն ու Հայկայ եռաթեւ աղեղը, դէպ մեր հեթանոս աստուածներն ու փառատաճարները, անսասան հաւատը դէպ մեր մեծ Յոյսը. Գումարի՛ր, ընթերցո՛ղ, գումարի՛ր այդ բոլորը, եւ կը ստացի հոգեւոր հայրենիքը:

❖ Մարդկային ուժերից վեր է մի ժողովրդի պատմութիւնը սպանել, մի ժողովրդի հոգեւոր հայրենիքը նուաճել:

❖ Չկան մեծ եւ փոքր ազգեր: Կան հաւասար իրաւունքով անդամները մարդկութեան ընտանիքի: Եւրոպական դիւանագիտութեան կեղծ լեզուն է ստեղծել «մեծ» եւ «փոքր» անունները: Ճշմարիտ մեծութիւն չէ թուական գերազանցութիւնը:

❖ Տգիտութիւն, եսականութիւն եւ աշխարհաքաղաքացիութիւն - ահա երեքը հայրենասիրութեան անհաշտ թշնամիներից:

❖ Հայրենիքը պիտի սիրել անկախ քաղաքական ռեժիմից, ինչպէս եւ անկախ մեր քաղաքական համոզմունքներից:

❖ Կոյր եւ բարբարոս կուսակցամոլութիւնը - մի զարհուրելի ախտ, որ պիտ թուլանայ, որ ուժեղանանք ազգովին:

❖ Եղի՛ր ուժեղ, էլի՛ ուժեղ, եւ մի՛շտ ուժեղ: Ժողովուրդները վերջ ի վերջոյ տէր են մնում ոչ թե նրան՝ ինչ որ նրանց տրուում է, ինչ որ մուրում են, այլ միայն նրան՝ ինչի որ արժանի են, ինչ որ իրենց սեփական ուժերով ապահովել են կարողանում:

Կառավարության որոշումով

Ստեղծվել է «Ակադեմիական քաղաք» հիմնադրամը

ՀՀ կառավարության նիստում հավանության է արժանացել *«Ակադեմիական քաղաք»* հիմնադրամ ստեղծելու եւ դրա կանոնադրությունը հաստատելու մասին նախագիծը:

Հարցը զեկուցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը:** Նրա խոսքով՝ *«ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին»* օրենքի համաձայն՝ նախատեսված է ակադեմիական քաղաքի ստեղծում՝ որպես որակյալ բարձրագույն կրթության եւ հետազոտության համար արդիական կրթական միջավայր: Ակադեմիական քաղաքը պետք է ապահովի ուսումնական հաստատությունների, գիտական ու արտադրական կազմակերպությունների միջեւ ցանցային, սիներգիական համագործակցության ընդլայնումը՝ ներառելով ժամանակակից վիրտուալ, սոցիալական, ինչպես նաեւ ֆիզիկական ենթակառուցվածքները:

Ըստ Ժաննա Անդրեասյանի՝ ակադեմիական քաղաքի միջոցով նաեւ հասցեագրվելու է ՀՀ կրթության ռազմավարությամբ սահմանված մի շարք կարեւորագույն թիրախների ապահովումը, որոնցից են՝ առնվազն 4 բուհ միջազգային վարկանիշային աղյուսակների լավագույն 500-ի մեջ ունենալը, օտարերկրյա ուսանողների թվի առնվազն կրկնապատկումը՝ բարձրացնելով բարձրագույն կրթության համակարգի միջազգային հեղինակությունը:

«Նախատեսվում է, որ ակադեմիական քաղաքը բաղկացած կլինի երեք կլաստերից, որոնցում համապատասխանաբար տեղակայված կլինեն արվեստների, տեխնոլոգիական ուղղությունների համալսարանները, իսկ երրորդը, որը բավական մեծ է, կարող է ընդգրկել ինչպես կրթական, սպայական ուղղվածությամբ բուհերը, այնպես էլ հյուրընկալել միջպետական եւ մասնավոր բուհերին»,- նշել է նախարարը՝ ընդգծելով, որ համապատասխան քաղաքաշինական լուծումների պարագայում կարող է քննարկվել նաեւ ազգային մարզադաշտի տեղակայման հարցը:

Ժաննա Անդրեասյանը փաստել է՝ նման մեծածավալ ծրագիրը պահանջում է կառույցի առկայություն, որը ներգրավված կլինի ծրագրի իրականացման ամբողջ շրջափուլում՝ նախապատրաստումից, նախագծումից մինչեւ կառուցում, այնուհետեւ նաեւ ակադեմիական քաղաքի կառավարում, քանի որ ստեղծված ենթակառուցվածքները նախատեսելու են վարչարարության եւ կառավարման մի ամբողջ համակարգ: Հետեւաբար, նոր հիմնադրամը կազմակերպելու, համակարգելու եւ վերահսկելու է քաղաքի ստեղծման աշխատանքները:

Նախարարը տեղեկացրել է, որ նախնական փուլում հիմնադրամին են ամրացվելու ակադեմիական քաղաքի կառուցման համար անհրաժեշտ հողատարածքները, ապա մեկամսյա ժամկետում ՀՀ կառավարություն է ներկայացվելու այն գույքի ցանկը, որը պետք է հատկացվի ակադեմիական քաղաքի համար: Այնուհետեւ կլինեն Կառավարության առանձին որոշումներ՝ հիմնադրամին անհատույց եւ անժամկետ օգտագործման իրավունքով գույք տրամադրելու վերաբերյալ:

«Այսպիսով՝ ակադեմիական քաղաքի նախագիծը տեղափոխվում է գործնական փուլ, որին հաջորդելու է հայեցակարգային փուլը: Դրա ընթացքում կվերջնականացվեն ակադեմիական քաղաքում տեղակայվող գիտահետազոտական ինստիտուտների ու բուհերի կառուցվածքը եւ կառավարման ձեւերը: Արդեն կա հայեցակարգի նախագիծ, որը վերջնականացման փուլում է. առաջիկայում դրա շուրջ նախատեսվում է սկսել մեծ քննարկում»,- նշել է նախարարը՝ ընդգծելով, որ նախնական հաշվարկներով՝ ակադեմիական քաղաքի տարածքը նախատեսված է շուրջ 44 հազար ուսանողների, դասախոսների եւ գիտնականների համար:

Ըստ Ժաննա Անդրեասյանի՝ որոշման նախագիծն իր բնույթով նորմատիվ իրավական ակտ չէ եւ պարտադիր չէր ներկայացնել հանրային քննարկման, սակայն այն տեղադրվել է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում, ինչպես նաեւ կազմակերպվել է հանրային լսում՝ նպատակ ունենալով ապահովել առավել մեծ թափանցիկություն եւ մասնակցայնություն:

Վարչապետ **Նիկոլ Փաշինյանը,** կարեւորելով նախագծի իրականացումը, նշել է, որ ակադեմիական քաղաքը տեղակայվելու է Երեւանի, Կոտայքի, Արագածոտնի եւ Արմավիրի մարզերի հատման միջակայքում:

«Այս նախագծով նոր էջ ենք բացում մեր երկրի պատմության մեջ, որովհետեւ սա, թերեւս, ամենակարեւոր եւ ռազմավարական ծրագիրն է, որը պետք է իրականացնենք: Այն պետք է լինի թիմային աշխատանքի արդյունք, քանի որ լինելու է ամենամեծ մեգանախագիծը՝ մեր երկրի պատմական մասշտաբների տեսանկյունից: Ակադեմիական քաղաքն իր կոլորիտով եւ գրավչությամբ պետք է լինի առանձնահատուկ»,- նշել է Վարչապետը՝ ընդգծելով, որ ակադեմիական քաղաքում արգելվելու է ավտոտրանսպորտի մուտքը:

Ըստ Նիկոլ Փաշինյանի՝ ակադեմիական քաղաքում գործելու է պետական ամբողջական ֆինանսավորմամբ 8 բուհ, որոնք տեղակայված կլինեն երեք կլաստերում: Հայֆիլմի տարածքում կգործեն ժամանակակից բոլոր պահանջներին համապատասխանող արվեստների ավագ դպրոցը եւ արվեստների համալսարանը, որտեղ կմեկտեղվեն արվեստի բոլոր ուղղությունները: Այդտեղ կլինի նաեւ ունիվերսալ համերգասրահ, որտեղ ուսանողները կանցնեն իրենց պրակտիկան: Երկրորդ կլաստերում կտեղակայվի սպայական ավագ դպրոցը եւ համալսարանը, որտեղ սպայական բոլոր մասնագիտությունների ներկայացուցիչները մի տեղում կստանան իրենց նախնական կրթությունը: Երրորդը կլինի տեխնոլոգիական կլաստերը:

Նշենք, որ որոշմամբ սահմանվել է, որ *«Ակադեմիական քաղաք»* հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է, որի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մարմինը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունն է: ԿԳՄՍ նախարարությունը *«Ակադեմիական քաղաք»* հիմնադրամի պետական գրանցումից հետո եռամսյա ժամկետում ՀՀ վարչապետի հաստատմանը պետք է ներկայացնի *«Ակադեմիական քաղաք»* հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարը ներկայացրել է գերատեսչության 2022 թ. կատարողականը

սկիզբը՝ էջ 5

ԱԺ փոխնախագահ **Ռուբեն Ռուբինյանը** դիմել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին՝ նշելով, որ փոխանցում է ԱԺ նիստն ուղիղ եթերով դիտող քաղաքացու հարցը՝ ինչու են Ագրարային համալսարանի վարձավճարները տարեցտարի թանկանում: Ժաննա Անդրեասյանը պատասխանել է, որ բուհերը ժամանակ առ ժամանակ վերանայում են վարձավճարները, եւ դրա հիմքում ընկած են կրթության կազմակերպման ծախսերը. *«Գնածի տեմպերը հայտնի են, բուհերի ծախսերը եւս ավելանում են: Ուստի, տրամաբանական չէ ակնկալել, որ վարձերի փոփոխություններ չեն լինի: Կարեւոր է, որ պայմանագրում ամրագրվի ուսման վարձի չափը: Նոր վարձերը գործում են նոր ընդունվող ուսանողների համար»:*

Նախարարն անդրադարձել է նաեւ Կառավարության ծրագրի թիրախ հանդիսացող դպրոցներում տարածաշրջանային լեզուների ուսուցմանը, որի շրջանակում նախորդ տարվա սեպտեմբերից 25 հաստատություններում ուսումնասիրում են պարսկերեն, վրացերեն, թուրքերեն եւ ադրբեջաներեն: Նախարարը հայտնել է, որ դպրոցների շրջանում նախնական ուսումնասիրություն է արվել՝ պարզելու համար հետաքրքրությունը. *«Մենք դպրոցներին չենք պարտադրել, այն կամավոր է եղել: Շուրջ 400 դպրոցներ ցանկություն էին հայտնել ունենալ տարածաշրջանային որեւէ լեզվի ուսուցում: Հիմնական հետաքրքրությունը, ընդ որում, թուրքերենի ուղղությամբ էր: Իհարկե, չկարողացանք այդ ծավալն ապահովել, որովհետեւ կադրերի լուրջ խնդիր ունենք: Ժամանակ է պետք է, որպեսզի անցնենք նման ծավալի»,-* նշել է Ժաննա Անդրեասյանը՝ ընդգծելով, որ ամենաակնառու պակասը վրացերենի մասնագետներին է վերաբերում:

Նախարարը պատասխանել է ԱԺ պատգամավորների այլ հարցերի:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մարզական

Հայաստանը թիմային հաշվարկում առաջինն է Եվրոպայում

Երեւանում ավարտվել է ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը, որի արդյունքներով հայ ծանրորդները պոկում, հրում վարժություններում եւ երկամարտում ընդհանուր առմամբ նվաճել են **36 մեդալ,** որից **12-ը՝ ոսկե, 11-ը՝ արծաթե** եւ **13-ը՝ բրոնզե:**

Մրցումային վերջին օրը մրցահարթակը տրամադրվել է գերծանր քաշային ծանրորդներին: Հայաստանի ներկայացուցիչներից պայքարի են դուրս եկել **Վարազդատ Լալայանն** ու **Սիմոն Մարտիրոսյանը:** Լալայանը կարիերայում երկրորդ անգամ հռչակվել է Եվրոպայի փոխչեմպիոն՝ երկամարտի **462 կգ** արդյունքով (**212+250 կգ**), իսկ Մարտիրոսյանը նվաճել է բրոնզե մեդալ՝ երկամարտի **440 կգ** արդյունքով (**195 + 245 կգ**): Պոկում եւ հրում վարժություններում եւս հայ գերծանր քաշային ծանրորդներն արժանացել են փոքր արծաթե եւ փոքր բրոնզե մեդալներին՝ համապատասխանաբար:

Այս քաշային կարգում Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը կարիերայում **7-րդ** անգամ նվաճել է Վրաստանի ներկայացուցիչ **Լաշա Տալախաձեն՝** արժանանալով նաեւ առանձին վարժությունների ոսկե մեդալներին: Տալախաձեն Եվրոպայում առաջինն է ճանաչվել երկամարտի **474 կգ** արդյունքով: Մրցումային վերջին օրվա հաղթողներին պարգեւատրել է Հանրապետության նախագահ **Վահագն Խաչատուրյանը:**

Ավելի վաղ Երեւանում ավարտված առաջնությունում Հայաստանի կանանց ընտրանու անդամ, **55 կգ** քաշային **Իզաբելլա Յայլյանը** դարձել է Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր, իսկ **Ալեքսանդրա Գրիգորյանը** զբաղեցրել է **6-րդ** տեղը:

64 կգ քաշային **Անուշ Արշակյանը** Բ ենթախմբում զբաղեցրել է **9-րդ** տեղը:

76 կգ քաշային **Տաթեւ Հակոբյանը** դարձել է Եվրոպայի փոխչեմպիոն, իսկ 16-ամյա **Էմմա Պողոսյանը 5-րդ** արդյունքն է ցույց տվել:

Հայաստանի մյուս ներկայացուցիչ **Աննա Ամրոյանը 81 կգ** քաշայինների Բ ենթախմբում զբաղեցրել է **6-րդ** տեղը, իսկ **Լիանա Գյուրջյանը** Ա ենթախմբում՝ **10-րդ:**

Կանանց թիմի կազմում բրոնզե մեդալի արժանացել է **87 կգ** քաշային **Հռիփսիմե Խուրշուդյանը,** իսկ գերծանր քաշային **Ջուլիետա Ավանեսյանը** Եվրոպայի առաջնությունում ելույթն ավարտել է **9-րդ տեղում:** Հայաստանի կանանց հավաքականը Եվրոպայի առաջնությանը մասնակցում էր **Արտաշես Ներսիսյանի** գլխավորությամբ:

Տղամարդկանց հավաքականի կազմում ընդգրկված **բոլոր 10-ը ծանրորդներն էլ մեդալների են արժանացել** Եվրոպայի առաջնությունում: **Փաշիկ Ալավերդյանի** գլխավորությամբ Հայաստանի հավաքականի կազմում Եվրոպայի չեմպիոն են հռչակվել **67 կգ** քաշային **Գոռ Սահակյանը, 96 կգ** քաշային **Դավիթ Հովհաննիսյանը, 102 կգ** քաշային **Գարիկ Կարապետյանը** եւ **109 կգ** քաշային **Սամվել Գասպարյանը: 89 կգ** քաշային կարգում Եվրոպայի փոխչեմպիոն է դարձել **Անդրանիկ Կարապետյանը, 96 կգ** քաշային կարգում՝ **Արա Աղանյանը,** իսկ գերծանր քաշայինների պայքարում՝ **Վարազդատ Լալայանը:** Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալների արժանացել են **81 կգ** քաշային **Ռաֆիկ Հարությունյանը, 109 կգ** քաշային **Պետրոս Պետրոսյանը** եւ գերծանր քաշային **Սիմոն Մարտիրոսյանը:**

Ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը լավագույնս կազմակերպելու համար ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար **Արայիկ Հարությունյանը** եւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Կարեն Գիլոյանը** Եվրոպայի ֆեդերացիայի ղեկավարների կողմից արժանացել են հուշանվերների:

RANK	NATION	GOLD	SILVER	BRONZE	TOTAL
1	ARM	12	11	13	36
2	ROU	9	3	2	14
3	GEO	8	7	2	17
4	TUR	6	10	6	22
5	UKR	6	8	7	21
6	ITA	5	7	4	16
7	BUL	4	2	5	11
8	GBR	3	1	2	6
9	NOR	3	1	0	4
10	FRA	3	0	0	3

Չես հասցնում աչք թարթել՝ նոր չեմպիոն. հայկական սպորտի ապրիլյան հաղթարշավը

Հունահռոմեական ոճի ըմբիշ, Օլիմպիական չեմպիոն **Արթուր Ալեքսանյանը** կարիերայում 6-րդ անգամ հռչակվել է Եվրոպայի չեմպիոն՝ Զագրեբում ընթացող առաջնության **97 կգ** քաշայինների եզրափակչում **5:1** հաշվով առավելության հասնելով Բուլղարիայի ներկայացուցիչ **Կիրիլ Միլովի** նկատմամբ:

Ա. Ալեքսանյանը, որը երեք տարվա դադարից հետո վերադարձել է Եվրոպայի առաջնություն, պայքարը սկսել էր 1/8 եզրափակչից, որտեղ **3:1** հաշվով առավելության էր հասել վրացի ըմբիշի նկատմամբ, քառորդ եզրափակչում **7:4** հաշվով հաղթել էր Հունգարիայի ներկայացուցչին, իսկ կիսաեզրափակչում **9:0** հաշվով վստահ հաղթանակ էր տարել Չեխիայի ներկայացուցչի նկատմամբ:

Հայաստանի հավաքականի կազմում մեդալ նվաճելուն մոտ էր նաեւ **60 կգ** քաշային **Գեւորգ Ղարիբյանը,** որը, սակայն, բրոնզե մեդալի համար պայքարում **9:5** հաշվով պարտություն է կրել: Այդ քաշային կարգում Եվրոպայի չեմպիոնի կոչումը նվաճել է անկախ Հայաստանի առաջին Օլիմպիական չեմպիոն **Արմեն Նազարյանի** որդին՝ **Էդմոնդ Նազարյանը,** որը ներկայացնում է Բուլղարիան:

Հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականի կազմում ավելի վաղ Եվրոպայի կրկնակի չեմպիոն էր հռչակվել **Մալխաս Ամոյանը** (**77 կգ**), իսկ բրոնզե մեդալ էր նվաճել **63 կգ** քաշային **Հրաչյա Պողոսյանը:**

Մալխաս Ամոյանը Եվրոպայի կրկնակի չեմպիոն դարձավ՝ ուղղակի ֆանտաստիկ ելույթով՝ աներեւակայելի հնարք կատարելով վերջին վայրկյաններին, երբ թվում էր՝ պարտվում է... վաստակեց 4 միավոր Սերբիայի ներկայացուցիչ **Վիկտոր Նեմեշի** հետ պայքարում եւ հաղթեց **6:4** հաշվով:

շարունակությունը՝ էջ 15

Հիշում եմ եւ պահանջում

Արշակ ՉՈՊԱՆՅԱՆ

«Ես ազգայնական եմ»



«Ես ազգայնական եմ - ու հպարտությամբ կը հայտարարեմ զայդ - որովհետեւ ճիվաղային պիտի նկատեի ուրիշ բան ըլլալ՝ իմ ազգիս արդի վիճակին մեջ, եւ ես գիտեմ ֆրանսացի ընկերվարականներ, անիշխանականներ, որ ըսած են ինծի. «Եթե հայ ըլլայինք, մենք անշուշտ ազգայնական պիտի ըլլայինք»: Ես ազգայնական եմ, որովհետեւ իմ պարտքս է ծառայել ամենեն առաջ իմ ազգիս, որուն կը պարտիմ կյանքս, լեզուս, հոգվույս հիմնական գծերը: Ես ազգայնական եմ, որովհետեւ իմ ազգս դժբախտ է, ավելի դժբախտ, քան ոեւէ ազգ, եւ իմ պարտականությունս անոր հանդեպ ավելի մեծ է, քան ազատ եւ ուժեղ ազգի մը զավակինը դեպի իր ազգը: Ես ազգայնական եմ վերջապես՝ որովհետեւ իմ ազգս հառաջդիմության, քաղաքակրթության տարր մըն է ի բնե, լույսի գործիք մըն է, գեղեցկության աղբյուր մըն է, ազատության կայծ մըն է: Իմ ազգայնականությանս նպատակը շրջակա ազգերուն վնասել, անոնց չքացմամբը իմ ազգս մեծցնելը չէ, այլ չեզոքացնելը հառաջդիմության խոչընդոտի դերը, զոր կը կատարեն մեզ շրջապատող հետամնաց, տգետ եւ բիրտ զանգվածները, տալ միջոցներ, որ իմ ազգս, աշխատող, արտադրող, շենցնող, ազատասեր, արվեստագետ իմ ազգս՝ իր բոլոր ձիրքերը, իր բեղուն հոգիին բոլոր ուժերը կարենա ազատորեն գործածել՝ հոգուտ ոչ միայն իրեն, այլ բոլոր արեւելքին, բոլոր մարդկության: Եվ ահա ինչու իմ ազգայնականությունս ավելի իրական ազատասիրություն է, ըլլալով ավելի գործնական, ավելի մարդկային, ավելի անմիջական...»:

«Անահիտ» 1906, թիվ 3-4-5, «Ռուսիա եւ հայերը»

Եղեռն...

Գարուն ա, ձուն ա արել...

1915-ի սկզբին, մի շարք գաղտնի խորհրդակցություններից հետո, թուրքական կառավարությունը (Թալեաթի, Էնվերի, Ջեմալի գլխավորությամբ) որոշեց, անկախ սկսված համաշխարհային պատերազմի ելքից, բնաջնջել արեւմտահայությանը: Մշակվեց գործողությունների հստակ ծրագիր. որ քաղաքում, որ գյուղում, երբ եւ ինչպես, ինչ միջոցներով: Նախեւառաջ 18-45 տարեկան հայ տղամարդկանց զորահավաքներ անցկացվեցին, ապա նորակոչիկներին եւ բանակում մինչ այդ ծառայող հայ զինվորականներին մաս-մաս ոչնչացրեցին: Հաջորդը մտավորականությունն էր: Ապրիլի 11-ի գիշերը (հին տոմարով) Պոլսում առանձին-առանձին դավադրաբար ձերբակալվեցին 800 հայ մտավորականներ: Նրանց բոլորին գազանաբար սպանեցին: Նրանց մեջ էին... Զարմանալի՞ զուգադիպություն. թերեւս երբեք այդքան պայծառ դեմքեր միաժամանակ չէին ապրել ու ստեղծագործել, ինչպես այդ եղերական տարիներին:

Հայ զինվորականների գնդակահարություններին, մտավորականության նահատակությանը, մի խումբ ազգային գործիչների մահապատժին (կախաղանի միջոցով) հաջորդեցին զանգվածային տեղահանությունները եւ կոտորածները... Ինչպե՞ս հաշվել՝ որքա՞ն մանուկ, որքա՞ն կին, որքա՞ն ծերեր, որքա՞ն մտքի եւ կամ որքա՞ն հողի մշակներ... Ու այդպես մինչեւ տարեվերջ՝ 1.500.000... Ու յուրաքանչյուրին՝ ամենաբիրտ տանջանքներով ու մարդկային լեզվով անպատմելի եղանակներով... Ցեղասպանությունը կատարվում էր ե՛ւ Արեւմտյան Հայաստանում, ե՛ւ Օսմանյան Թուրքիայի այլ տարածքներում: Հիրավի, ինչպես հոխորտացել էր Թալեաթը, երեք ամսում ավելին արվեց, քան արյունարբու սուլթան Համիդը արել էր 30 տարում...

Ողջ Արեւմտահայությունը կամ կոտորվեց, կամ աքսորվեց ու զոհվեց ճանապարհներին, մի մասն էլ արտաքսվեց ի սփյուռս աշխարհի, ուր կարողացավ գոյատեւել առայսօր՝ սպասելով հատուցման օրվան:

... Սրանք հանրագիտարանային տվյալներ են, որ ծանոթ են յուրաքանչյուր հայի: Ու ամեն անգամ յուրաքանչյուր հայաստանցի, բարձրանալով Ծիծեռնակաբերդ, գլուխ է խոնարհում Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին ու ամեն անգամ ցավով հայտնագործում, որ անդառնալի են մեր կորուստները... Կորցրած հողը կարելի է հետ նվաճել: Հայրենիքը երբեք չի կորչում: Վաղ թե ուշ այն կրկին իր տիրոջն է պատկանելու: Նոր մանուկներ են ծնվելու հայոց աշխարհում, բայց զոհված ու չկայացած մանուկ հանճարների կորուստը անդառնալի է: Նոր Կոմիտասներ են ստեղծագործելու հայոց աշխարհում, բայց այն, ինչ պիտի աներ միայն **Կոմիտասը**, այլեւս ոչ ոք չի անելու... Ու նաեւ **Զոհրապը**, **Վարուժանը**, **Սիամանթոն**... ու բոլոր 1,5 միլիոնը՝ հատ-հատ: Նրանք են մեր կորուստը... ու նրանց զավակները, նրանց զավակների զավակները, որ մեզ այսօր այնքա՜ն պետք են ու չկան, ու չեն լինելու երբեք...

«Արեւելքում մեռնում է մեր քույրը... մեռնում է միայն այն բանի համար, որ մեր քույրն է: Նրա հանցանքն այն է, որ նա բաժանել է մեր զգացմունքները, սիրել է այն, ինչ սիրել ենք մենք, մտածել է այնպես, ինչպես մենք եւ մեզ նման ընկալել է իմաստություն, բանաստեղծություն ու արվեստ: Դրա մեջ է նրա հանցանքը...», - գրել է մեր ժողովրդի բարեկամ **Անատոլ Ֆրանսը**: Բայց գուցե մեր հանցանքը դա՞ չէր միայն, այլ այն, որ մենք առաջինն էինք ստեղծել քրիստոնեական քաղաքակրթություն ու սնել նույն Եվրոպան: Եվ եթե նույնիսկ նա լիներ ոչ թե պաշտպանի, այլ անաչառ դատավորի՝ դերում... Բայց մեր հանցանքը շատ ավելին էր. մեր հանճարի, մեր կենսունակության, տնտեսական բարգավաճման առանձնահատուկ շնորհքի պատճառով մենք վտանգավոր էինք, ու մեր անկախությունը մոտակա մրցակցության ակնկալիք է ծնում պատմության ասպարեզի վրա ճեմող պետությունների դիվանագիտական ուղեղներում, եւ նրանց ձեռնտու չէ մեզ ունենալ իրենց հավասա՜ր իրավունքներով... Գոյությա՜ն կռիվ է...

Մի բանում անվերապահորեն ճիշտ է Անատոլ Ֆրանսը. «*Հայաստանը մեռնում է, բայց նա կվերածնվի... նրան մնացել է շատ քիչ բան, թանկագին արյուն, որից կծնվի մի հերոսական սերունդ*»:

Հերոսամարտեր...

Զա՛րկ, լաո, զարկողին՝ զա՛րկ...

1915 թվականին Արեւմտյան Հայաստանի մի շարք գավառներում եւ քաղաքներում հերոսական ինքնապաշտպանության դիմեց ժողովուրդը եւ արարեց խիզախության զարմանահրաշ դրվագներ: Եվ եթե թուրքական կառավարությունը դիվանագիտական աջակցություն չունենար, եւ հայ զանգվածներն էլ ապավինած լինեին միայն սեփական ուժերին եւ նախօրոք լինեին պատրաստ, 1915-ը հնարավոր է երջանիկ տարեթիվ դառնար...

Վանի, Շապին-Գարահիսարի, Մուսա լեռան, Տարոնի, Ուրֆայի... հայ քաջորդիները տասնապատիկ ավելի թանկ վաճառեցին ռազմիկի իրենց կյանքը՝ դառնալով Թուրքիային հավերժական սարսափ, իրենց սերունդներին՝ անշեջ օրինակ:

Վան

Վանի հերոսամարտի եռանդուն կազմակերպիչներից էր 1915-1919 թվականների հայ ազատագրական պայքարի եւ գաղափարական խմորումների ամենապայծառ դեմքերից մեկը՝ **Արամ Մանուկյանը**: Նրա՛ հետ էին Խրիմյան Հայրիկի՝ դեռեւս Վարագա վանքի վանահայրության ժամանակներից հայրենասիրության դասեր առած վառ ոգով եւ մարտական նկարագրով մի խումբ կորովի այրեր: Նրանց ջանքերով Վանի եւ նրա արվարձան Այգեստանի ինքնապաշտպանությունը տեւեց մեկ ամիս (1915, ապրիլ) եւ պսակվեց հաղթանակով: 1915-ի մայիսի 1-ին Արամ Մանուկյանը հռչակվեց ինքնավար Վանի նահանգապետ:

Շապին-Գարահիսար

Այս գյուղաքաղաքում ազգային խմորումները սկսել էին 1880-ական թվականներից: Այստեղ են ստացել իրենց առաջին ֆիդայական մկրտությունը **Անդրանիկը** եւ **Մուրադը**:

... 1915-ի հունիսի 2-ից 20-ը քաղաքի փոքրաթիվ ինքնապաշտպանական ջոկատը (150 մարդ) անօրինակ խիզախությամբ հետ է մղում թուրքական հրոսակների (թվով՝ 5-6 հազար) գրոհները: Այդ առասպելական դիմադրությունը թուրքերը հաղթահարում են միայն խորամանկ դավադրությամբ...

Մուսա լեռ

Մուսա լեռը գտնվում է Միջերկրական արեւելյան ափին: Նրա բարձունքների վրա վեց հայկական գյուղեր կային: Այդ վեց գյուղերի 4231 բնակիչներ (1171 կին, 1237 այր, 1883 անչափահաս) նախընտրեցին անապատներում մեռնելու փոխարեն խուսափել տարագրությունից, մնալ իրենց լեռան վրա եւ կռվել թշնամու դեմ: 1915-ի օգոստոսից մինչեւ սեպտեմբեր (40 օր) ձգվում է հերոսական պաշտպանությունը եւ ավարտվում ֆրանսիական նավերի օգնությամբ մուսալեռցիների անվտանգ գաղթով: Մանրամասները շարադրված են Ֆրանս Վերֆելի հայտնի գրքում: Ասենք միայն, որ ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարն էր 21-ամյա **Մովսես Տեր-Գալստյանը**:

Տարոն

Տարոնի նահանգի (Բաղեշ, Մուշ, Սղերդ, Կենճ, Սասուն, Մանազկերտ) ինքնապաշտպանության կազմակերպիչներն էին **Ռուբենը**, **Կորյունը**, **Կոմսը**՝ իրենց խիզախ ընկերներով: Առավել տեւական էր դիմադրությունը Մուշում եւ Սասունում՝ 1915-ի մայիսից մինչեւ 1916-ի փետրվար: Թշնամին պարտվում էր, բայց նորանոր կանոնավոր ուժեր էին ներգրավվում... Այնուամենայնիվ, հերոսական ինքնապաշտպանության շնորհիվ բնակչության զգալի մասը, ապաստանելով լեռներում, փրկվում է կոտորածից:

Ուրֆա

Միջագետքի հյուսիսում էր գտնվում Ուրֆան (Ուռհա, Եդեսիա), որ ուներ շուրջ 30.000 հայ բնակչություն... Ուրֆայի հերոսամարտի կազմակերպիչներն էին **Մկրտիչ Յոթնեղբայրյանը** եւ **Հարություն Ռասթկելենյանը**...

Արդարահատույց...

Եղեգնյա գրչով վրեժ երգեցի...

Հայ ազգային-ազատագրական պայքարը ծնեց ֆիդայիների՝ ազգային հերոսների մի լուսափառ համաստեղություն: Ֆիդայական շարժման մասին պատմական ճշմարտությունը քիչ թե շատ ծանոթ է ընթերցողին: Սակայն կա ազգային հերոսների մի այլ աստղաբույլ, որոնց մասին շատ կցկտուր տեղեկություններ կան հրատարակված մեզանում. հայ վրիժառուները, որ շարունակեցին մեծ հայդուկների գործը՝ նոր պայմաններում ու նոր ձեւերով: **Արաբոյի, Աղբյուր Սերոբի, Քեռու, Անդրանիկի, Մուրադի, Գեւորգ Չաուշի, Հրայրի, Սաքոյի, Մախլուտոյի** եւ այլոց անուններին հետ հայ սերունդները երախտապարտ փառաբանելու են **Արամ Երկանյանին, Սողոմոն Թեհլերյանին, Արշավիր Շիրակյանին, Ստեփան Ծաղիկյանին, Միսաք Թորլաքյանին**...

Արամ Երկանյան

Կարնեցի է, ծնված 1900թ.: Եղեռնից մազապուրծ՝ ապաստանել է Կովկասում: Մասնակցել է Բաշ-Ապարանի ճակատամարտին: Հայաստանի Հանրապետության օրերին եղել է ՀՅԴ կուսակցության տրամադրության ներքո: Թիֆլիսում ահաբեկել է (1919 եւ 1920 թթ.) Ղասիմբեկովին եւ Սարաֆովին: 1922թ. Բեռլինում ահաբեկել է Բեհաէդդին Շաքիրին: Այնուհետեւ ապրել է Ռումինիայում, Արգենտինայում... Մահացել է 1934-ին:

***

«Այնքան թեթեւ կ'ըզգայի, կարծես լեռ մը ինկած էր կուրծքիս վրայեն:

Վստահ էի գնդակիս մահացության մասին:

Հատուցված էր ուխտը հայ մեռելոցին»:

Սողոմոն Թեհլերյան

Ծնվել է 1886-ին, Դարանաղյաց գավառում: 9 տարեկան հասակում ընտանիքով մեկնել է Երզնկա: Եղեռնի ընթացքում կորցրել է իր գերդաստանի 85 անդամների...

1919-ին գնում է Պոլիս՝ Թալեաթի հետքերով: Այնուհետեւ՝ Բեռլին: Հաստատվում է որպես ուսանող: Ճշտում է Թալեաթի նոր անուն-ազգանունը, հասցեն... 1921թ. մարտի 15-ի առավոտյան, երբ Թալեաթը դուրս է գալիս բնակարանից եւ սկսում առաջանալ փողոցով, Թեհլերյանը ընդառաջ է դուրս գալիս եւ դիմահար կրակում մարդասպանի գլխին... Այնուհետեւ Սողոմոնը ձերբակալվում է եւ երկարատեւ դատավարությունից հետո ազատ արձակվում: Մահացել է 1960թ., Ամերիկայում:

***

«Համակված էի հոգեկան այնպիսի մի ներքին գոհունակությամբ, որի նմանը չէի ապրել երբեք: Արճիճի պես վրաս ծանրացած տեւական մղձավանջը չքացել էր հանկարծ: Ամեն բան փոխվել էր կարծես. կաշկանդված հոգիս ազատ ու լայնարձակ թռչում էր. կարծես էությամբ ձերբազատված, մտքերս շրջան էին անում աշխարհի ծանոթ բոլոր անկյուններում...»:

Արշավիր Շիրակյան

Տակավին պատանի, Պոլսից մեկնում է Հռոմ եւ հետապնդում Սայիդ Հալիմին, որի վարչապետության օրոք էր տրվել 1915-ի կոտորածների որոշումը: 1921թ. դեկտեմբերի 5-ին ցատկում է փողոցով սուրացող կառքի ելքի աստիճանի վրա եւ սպանում նախկին վարչապետին: Իտալական թերթերը կախարդական հերոսություն են նկատում կատարվածը: Այնուհետեւ Հռոմից անցնում է Բեռլին, Արամ Երկանյանի հետ հետամուտ լինում Բեհաէդդին Շաքիրին եւ Ջեմալ Ազմին: Միեւնույն օրը, երբ Երկանյանը ահաբեկում է Շաքիրին, նույն պահին էլ Շիրակյանը գնդակահարում է Ջեմալ Ազմին:

Ստեփան Ծաղիկյան

Ծնվել է 1886-ին, Խոտորջուրի Մոխրկուտ գյուղում: Համաշխարհային առաջին պատերազմի ընթացքում գտնվում էր Խարկովում: Այնտեղից անցնում է Կովկաս, միանում կամավորներին: Հայաստանի խորհրդայնացումից հետո մնում է տեղում՝ իրականացնելու չիրագործված մահապատիժներ: 1922թ. հուլիսի 21-ին Թիֆլիսում գնդակահարել է Ջեմալ փաշային: Չեկայի կողմից ձերբակալվել է եւ անհետ կորել:

Միսաք Թորլաքյան

Ծնվել է Տրապիզոնում: 1916-ին՝ կամավոր: Ապա անցնում է Պոլիս, հետապնդում Բաքվի հայկական կոտորածի պատասխանատու Ջիվանջիրին, որին էլ դիմահար գնդակոծում է 1921թ. հուլիսի 8-ին:

***

Ծագումով ղարաբաղցի, քաղաքացիական կռիվների հրամանատար, Միջին Ասիայում բասմաչների դեմ մարտերի հերոս **Հակոբ Մելքումովը** 1922թ. օգոստոսի 4-ին գնդակահարում է Էնվերին:





... 3 տարի անց

Ազատությունը բախում էր մեր դուռը, իսկ մենք պատրաստ չէինք...

Կա ավանդական մի չափանիշ. պատկերացնելու համար հաղթանակի մեծությունը՝ շեշտվում է հակառակորդի ուժը... Մեր հակառակորդը տարիներ, դարեր նա էր, որի մասին Հյուգոյի թեւավոր խոսքը հնչում է այսպես. *այստեղով թուրքն է անցել, մնացել են միայն ավերակներ*: Իսկ այդ հակառակորդը, թշնամին, թեեւ ոչ ուղղակիորեն, այնուամենայնիվ, օժանդակություն ստացավ եւ Ռուսաստանից, որին ապավինել էր մեր ազգի կեսը եւ որին հավատում էր մյուս կեսը եւս, եւ Եվրոպայից, որը Հայկական հարցին նայում էր միայն որպես մշտական կռվան՝ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու...

Ուրեմն որքա՞ն հերոսական պետք է լիներ 600 տարի իր պետականությունը կորցրած ժողովուրդը, որ հաղթահարեր՝ երբեմն խաչվող, երբեմն զուգահեռ ընթացող այդ երեք ուժերը: Եղեռնն անգամ չկասեցրեց ոչ միայն նրա գոյատեւումը, այլեւ՝ կորցրածը հետ բերելու անսասան կամքը եւ տվյալ պահին խիստ անհրաժեշտ հավատը սեփական ուժերի նկատմամբ:

Հայոց մեծ եղեռնից երեք տարի անց տեղի ունեցավ Սարդարապատի ճակատամարտը... 1915-ին ամայացել էր Արեւմտյան Հայաստանը: Բայց դեռ կար Արեւելյանը... 1917-ի Հոկտեմբերյան հեղափոխությամբ տապալվել էր ցարական իշխանությունը, եւ Արեւելյան Հայաստանը իրերի բերումով հայտնվել էր ինքնուրույն դրության մեջ: Վերջին 600 տարիների ընթացքում առաջին անգամ հայության մի հատվածը ազատվել էր կապանքներից եւ, թեեւ արյունաքամ, քայքայված տնտեսությամբ, բայց արդեն միայն իր սեփական, թեկուզեւ նվազագույն, ուժերը տնօրինելու հնարավորությամբ... Բնական էր ստեղծված իրադրության մեջ թուրքական նոր արշավանքը: Արեւմտյանի ճակատագիրը կարող էր կրկնվել եւ Արեւելյան Հայաստանում... Բայց... Սարդարապատի հաղթանակը իր ունեցած նշանակությամբ իրավացիորեն համեմատվել է Ավարայրի հետ: Հայ ժողովրդի համար չափազանց վճռորոշ այդ հաղթանակը պարզապես պարգեւեց գոյատեւում... Հաղթանակից ընդամենը 2-3 օր անց հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը: Պատկերացնել է պետք հայոց ոգեւորությունը. Եղեռնից երեք տարի անց, եղեռնազարկ, լիովին քայքայված, կողոպտված եւ լքված, վերջին ուժերը Սարդարապատում փորձարկած Արեւելյան Հայաստանը իրագործում է իր 600-ամյա երազանքը. անկախ պետականությունը վերականգնվում է...

1918-ի մայիսի 28-ից սկսվում է Հայ դատի պահանջատիրության (Հայկական հարցի) նոր փուլը: Առաջինը իր քառասնամյա տարեգրությամբ ավարտվել էր եղեռնով... Երկրորդը տեւեց ընդամենը երկուսուկես տարի եւ ավարտվեց Հայաստանի խորհրդայնացումով...

1918-ի մայիսի վերջին Հայկական Հանրապետության տարածքը կազմում էր ընդամենը 10.000 ք. կիլոմետր: Երկու տարի անց՝ 1920-ի կեսերին՝ 70.000 ք. կիլոմետր: Յոթնապատիկ այս հաջողությունը ամենից մեծ կռվանն է հօգուտ որեւէ ազգի անկախության: Ընդամենը երկու տարի հայ ժողովուրդը ապավինել էր միայն սեփական ուժերին եւ կարճ ժամանակամիջոցում հաղթահարել ռազմական, տնտեսական, քաղաքական բազում դժվարություններ ու առաջադիմել նաեւ դիվանագիտության մարզում: 1920թ. օգոստոսի 10-ին կնքված Սեւրի դաշնագրով Հայաստանին հատկացվում էր եւս 100.000 ք. կիլոմետր տարածք. գրեթե ամբողջությամբ լուծվում էր Հայկական հարցը... Սակայն, Ավետիս Ահարոնյանի հստակ բնորոշմամբ, ազատությունը բախում էր մեր դուռը, իսկ մենք պատրաստ չէինք նրան ընդունել... Նորից կողմնորոշումներ, տարաձայնություններ, չհաղթահարված ստրկախտի դրսեւորումներ...

Հայաստանի Հանրապետության թիկունքում սկսվում է ռուս-թուրքական քաղաքական մի նոր խաղ. ցարական Ռուսաստանի՝ Հայաստանի հանդեպ ունեցած նկրտումներն այս անգամ դրսեւորվում են արդեն բոլշեւիկյան Ռուսաստանի՝ համաշխարհային հեղափոխության շահերով... Կնքվում են ռուս-թուրքական պայմանագրեր, Ռուսաստանը նորից իր ձեռքն է վերցնում Հայաստանի եւ Հայկական հարցի տնօրինումը... Օտար՝ երրորդ ուժին ապավինելու հին հիվանդությունը խարխլում է հայոց միասնությունը:

Անդրանիկի հաշվարկներով Հայաստանը 65.000 զորաբանակով կարող էր իրականություն դարձնել Սեւրի դաշնագրով արտոնված Ազատ, Անկախ ու Միացյալ Հայաստանը, սակայն գաղափարական տարաձայնությունները քայքայում են նույնիսկ առկա ուժերը, եւ Հյուսիսի ու Հարավի ճնշման միջեւ Հայկական Հանրապետությունը ստիպվում է ոչ միայն հրաժարվել նոր տարածքներից, այլեւ ընդհանրապես՝ անկախ պետականությունից...

Հայ դատի պահանջատիրության երրորդ փուլը (1920-1965) որեւէ նշանակություն պարունակում է միայն Սփյուռքի գործողություններում: Մայր հայրենիքում սկսվում է մի երկարատեւ լռություն...

... 50 - ամյակ

Թող որոտա իմ գլխին...

1965 թվականով սկսվեց հայ դատի պահանջատիրության նոր հանգրվանը: Մինչ այդ եղել էր 1937-ը, հետո՝ 1949-ը, հետո եկել էր 1953-ը: Մի ամբողջ 45 տարի *«Եղեռն»* կամ *«Հայկական հարց»* արտահայտությունները ուղղակի հանված էին մեր բառապաշարից, ինչպես ժամանակին օսմանյան Թուրքիայում արգելված էր *«Հայաստան»* բառի գործածությունը: Միայն 1965-ին ժողովուրդը, մի խումբ ընտրյալների ջանքերով, նշեց Հայոց Մեծ Եղեռնի 50-ամյա տարելիցը: Եղան հանրահավաքներ, բազմամարդ ցույցեր, երթեր, կիզակետում էին հրապարակները, Կոմիտասի անվան զբոսայգին... Սա առաջին համաժողովրդական պոռթկումն էր Խորհրդային Հայաստանում: Նույնիսկ *«Պրավդան»* այդ օրերին հոդված տպագրեց եղեռնի մասին: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին մայր հայրենիքում եղեռնի 50-ամյա տարելիցի նշման ողջ նշանակությունը: 1965-ից հետո մեզանում սկսեցին լույս տեսնել բազմաթիվ գրքեր՝ հայոց ցեղասպանության մասին: Իհարկե, դեռեւս չէր վերհանվում ողջ ճշմարտությունը, սակայն մեր պատմության այդ մի դրվագը եւս մտավ մեր մշակութային շրջանառության մեջ, մեր հիշողության մեջ, ու արդեն գիտեինք, որ ունենք Հայ դատ ու պահանջատիրություն:

1965-ը անհամեմատ մեծ ընդգրկումով նշվեց Սփյուռքում: Ոգեկոչման արարողություններ կատարվեցին Լիբանանում, Միացյալ Նահանգներում, Ֆրանսիայում, Արգենտինայում, Կանադայում, Իտալիայում եւ այլուր: Արտասահմանյան բազմաթիվ երկրներում, հատկապես՝ թուրքական դեսպանատների առջեւ, տեղի ունեցան ցույցեր, քայլարշավներ... Բեյրութում հրատարակվեց *«Հուշամատյան Հայոց Մեծ Եղեռնի»* մեծածավալ աշխատությունը... Ամենատարբեր երկրներում եւս լույս տեսան բազմաթիվ գրքեր, հոդվածներ:

«Մոնդ» թերթում հրապարակված իր հոդվածում հայագետ **Ֆրեդերիկ Ֆեյդին** գրեց. «*Բոլոր մարզերում մեջ, հակառակ իրենց փոքր թվին, հայերը կնպաստեն քաղաքակրթության համաշխարհային գործին*»:

«Յումանիտեն» նշեց, որ «*Հայերի մասսայական կոտորածը ցեղասպանության առաջին ոճիրն էր 20-րդ դարի սկզբին, 1914-18 թթ. պատերազմի ընթացքում: Եվ այդ ոճիրը երբեք չդատվեց ու չդատապարտվեց*»:

Ժան Մարի Գառզուն իր «Մի իսկական ցեղասպանություն» գրքում հանգամանորեն ներկայացրեց Հայոց Մեծ Եղեռնը, վերլուծելով նրա հետեւանքները:

Իվ Տեռոնը Հայաստան այցելելուց հետո հրատարակեց *«Հայերը. մի ցեղասպանության պատմություն»* աշխատությունը...

Հարկ չկա բոլորը թվարկել: Հայությունը չէր մոռացել իր պատմությունը, իր դատը, աշխատում էր օրնիբուն, փնտրում ու գտնում կատարվածի արդար հատուցման համակիրներ:

... Զսպանակ

Զեզ ո՞վ էր ասում՝
մեզ սեղմեիք այդքան...

Ի՞նչ կար Հայաստանում 1965-88 թվականներին: Երկրում «ծաղկում» էր «լճացումը»: Հայաստանում այն ուներ մի ուրիշ երանգ եւս. ծովանում-ամբարվում էր ժողովրդի հիշողությունը, որ այլեւս արթնացել էր ստալինյան «անհատի պաշտամունքի» պսակազերծումից ու մանավանդ 1965-67թթ. ժողովրդական ընդվզումներից հետո... Ճիշտ է, դա արտահայտվում էր ոչ զանգվածայնորեն, հատկապես՝ գրական-մշակութային եւ պատմագիտական ոլորտներում, բայց, այնուամենայնիվ, գոյատեւող ժողովուրդը այլեւս թեւակոխել էր իր արդար պահանջատիրության նոր փուլը եւ ապրում էր մի յուրատեսակ նախապատրաստական շրջան: Այդ տարիներին ստեղծագործական վերելքներ ապրեց **Հովհաննես Շիրազը**, ի հայտ եկան մշակութային այնպիսի հզոր երեւույթներ, ինչպիսիք էին **Պարույր Սեւակը, Մինաս Ավետիսյանը, Մուշեղ Գալշոյանը**... Ավելացնենք **Հրանտ Մաթեւոսյանի** արձակը, **Տիգրան Մանսուրյանի** երաժշտությունը, **Համո Սահյանի** պոեզիան, **Սերո Խանզադյանի** պատմավիպասանությունը... Բոլորը չես թվարկի... Ստեղծվում էին արժեքներ, որոնցով կրթվում էր նոր սերունդը, մանավանդ որ պատմագիտության բնագավառում եւս դրական տեղաշարժերն ակնհայտ էին (Զոն Կիրակոսյան եւ ուրիշներ): Եվ մոտալուտ գարնան շունչը զգացվում էր օրավուր:

1967թ. նոյեմբերի 28-ին տեղի ունեցավ Ծիծեռնակաբերդի բարձունքի վրա կառուցված 1915թ. Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Հուշարձան-կոթողի բացումը: Մի քանի ամիս անց, այս անգամ՝ պատշաճ օրը, 1968-ի մայիսի 25-ին, հանդիսավորապես բացվեց Սարդարապատի ճակատամարտին նվիրված հուշահամալիրը: Այդպիսով նշվեց մեր պատմության փառահեղ այդ իրադարձության 50-ամյակը եւ *«Եղեռն»* բառ-հասկացության հետ շրջանառության մեջ դրվեց *«Սարդարապատ»* հասկացությունը: Իհարկե, պատմական ճշմարտությունները դեռեւս կարելի էր քաղել միայն Սփյուռքում լույս տեսնող գրքերից ու պարբերականներից, իսկ մայր հայրենիքում լոկ դրանց, ասենք, Հանրային գրադարանում պահպանվող եզակի օրինակներից:

Նույն՝ 1968-ի հոկտեմբերի 18-ին հանդիսավորապես նշվեց Երեւանի հիմնադրման 2750-ամյակը: Ոգեւորությունը համազգային էր: Ու թեեւ մի **Պիոտրովսկի** (անշուշտ, մեր գիտնականների օժանդակությամբ) կարողացավ աշխարհին զարմացնել, թե տեսեք, մի նոր, անհայտ աշխարհ եմ հայտնաբերել, մի Ուրարտու, մի առանձին քաղաքակրթություն, հայ ժողովուրդը մեծ խմբերով բարձրանում էր Արին-Բերդ բլուրը, դեպի էրեբունի ամրոցը, եւ բնավ չէր կասկածում, որ էրեբունին Երեւանն է եւ նույնքան հայկական, որքան Վանը, Տիգրանակերտը, Վաղարշապատը... Իսկ բլրան ստորոտին շրջիկ-վաճառողները ազգային կիրառական արվեստի նմուշներ ու նաեւ Անդրանիկի լուսանկարներն էին վաճառում... Դե գնա ու ասա, թե Ուրարտուն Արարատը չէ, Հայաստանը չէ, թե հայոց լեզուն 6 հազար տարեկան է, բայց հայ ժողովուրդը... ընդամենը 2,5 հազար, որովհետեւ 3,5 հազար տարի կազմավորման ընթացքի մեջ է եղել... Ժողովուրդներ են եկել ու գնացել պատմության թատերաբեմից, իսկ հայերը ժողովուրդ չեն եղել, ազգ չեն եղել, այլ ինչ-որ անհայտ ու տարանուն ցեղերի մի խառնարան-ամբոխ... Այդպիսի անհեթեթությունների միայն «գիտնականները» կարող են հավատալ: Ժողովուրդը հո գիտի, մեկին գումարած մեկի պես պարզ է՝ կար հայոց լեզուն, ուրեմն կար եւ այդ լեզվով խոսող, այսինքն՝ հայ ժողովուրդը...

Եվ հետո՝ հո լճացումը անսահման չէ՞ տեւելու: Անցնելու էր եւս քսան տարի, եւ Անդրանիկին հավասար Նժդեհն էր պաշտվելու, եւ սուտ *«ուրարտացի»* բառին փոխարինելու էր ճշմարիտ *«արիացին»*...

1978թ. ապրիլի 14-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը հաստատեց Հայկական ԽՍՀ սահմանադրությունը: Լճացում էր, բայց ժողովուրդն արդեն ընդվզել գիտեր ու իր կամքով ստիպեց սահմանադրության մեջ կրկին վավերացնել, որ Հայկական ԽՍՀ պետական լեզուն հայ ժողովրդի մայրենի լեզուն է, հայերենը...

Նույն թվականի աշնանը պետականորեն նշվեց Ռուսաստանի հետ Արեւելյան Հայաստանի միավորման 150-ամյակը, Հայաստանը 3-րդ անգամ պարգեւատրվեց Լենինի շքանշանով: Բայց թե ժողովուրդն արդեն հոգնել էր կեղծ պատմություններից, անհիմն եւ անարդար «ինտերնացիոնալիզմներից», բայց իներցիայի ուժով «լճացումը» դեռ շարունակում էր գոյատեւել, եւ նրան բնորոշ կարգախոսն էր՝ «*Շիրակը շագայետ Ազերբայջան*», որ համահունչ էր երկրի հիմնին՝ «*Շիրակա ստրանա մայա...*»...

1967թ.-ից սկսած, արդեն թույլատրված կարգով, ամեն տարի ապրիլի 24-ին ժողովուրդը գնում էր Ծիծեռնակաբերդ: Պատմահոր անմահ *«Հայոց պատմության»* ու Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյա հոբելյաններն էր նշում, համոզվում ու հավատում, որ աշխարհն անճանաչելի է, որովհետեւ անվերջ է, բայց նաեւ՝ թեեւ փոքրաքանակ ժողովուրդ ենք, մեր պատմության մեջ շատ են հերոսական դեպքերն ու դեմքերը, որ ապրելու կեսն էլ պատվով մեռնելն է... Սփյուռքը շարունակում էր իր պայքարը ազգապահպանման համար՝ ուծացման դեմ, հայ դատի պահանջատիրության նորանոր եղանակներ փնտրում, մենք զսպանակի պես սեղմվում էինք ու հոգեւոր պաշար կուտակում, որ մեր թիկունքի հսկա պատմությանն ու մշակույթին ապավինած՝ սովորենք արժանապատիվ ապրել, արժանապատիվ պահանջել, արժանապատիվ պայքարել... Դեռ գալու էր Փետրվարը, որ լիներ Զարթոնք, որ պահանջատիրությունը լիներ վստահ ու հաստատակամ, սեփական ուժի ու բարոյականության ինքնագիտակցմամբ:

Փետրվար...

Գարուն ա, արեւ ա արել...

Արցախահայությունը, իբրեւ անքակտելի մասը հայության, նույնպես անցավ 19-րդ դարավերջի ու 20-րդ դարասկզբի թոհուբոհերով (հատկապես՝ 1918-21թթ.): Հայոց ազգային-ազատագրական պայքարի՝ Արցախի բաժինը կասեցվեց 1921թ. հուլիսի 5-ի Կովբյուրոյի տխրահռչակ որոշումով: Սակայն մի՞թե հնարավոր է ժողովրդի կամքը ոտնահարել եւ զապաշապիկի մեջ պահել մշտապես... 1923թ. ստեղծված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը հայոց պատմական Արցախ աշխարհի մի հատվածում (անկուշտ հարեւանը միշտ աչք է տնկում ունեցվածքիդ, ու երբ դատավորդ կաշառառու է, պատառ-պատառ կողոպտում է հողդ) պահպանեց իր գոյությունը, շարունակական ցեղասպանությունների պայմաններում (վկա՝ Նախիջեւանը) անաղարտ պահեց իր հայեցի նկարագիրը ու մի կերպ դիմանալով *«տիրոջ»*, մեղմ ասած, խորթություններին, սպասեց իր *«աստեղային ժամին»*, որ գալու էր անպայման... 1988 թվականի փետրվարի 20: Երեւանի Թատերական հրապարակում հարյուր հազար հայաստանցի հայեր՝ առաջին անգամ մայրաքաղաքում հանրահավաքի եկած, սպասում են Արցախից լուրերի. Մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի արդյունքներին... *«Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանի որոշումը՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ կազմի մեջ անցնելու վերաբերյալ Ադրբեջանական ԽՍՀ եւ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների առջեւ միջնորդելու մասին, ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին...»*, ու թնդում է Թատերական հրապարակը հազարաձայն *«մի-ացում»*-ից, ու երկինք բարձրացած բռունցքներից, թվում է, դողում է մեր մոտ անցյալի ճակատագիրը...

Ու հաջորդ օրը, ու մյուս օրը, ութ օր շարունակ, թվում է, ողջ հայությունն է Թատերական հրապարակում, որ դրանից հետո Ազատության վերանվանվեց: Հայաստանը, թվում է, տեսանելի լարերով մեկ ակնթարթում կապվել է ողջ սփյուռքահայության, ողջ աշխարհի հետ... 100.000, 500.000, 700.000 ու ավելի մարդիկ, հայեր, միակամ, միաբռունցք իրենց պահանջատիրությունն են ավետում Մոսկվա, Նյու Յորք, համայն մարդկության: Ու արձագանքներ ու շարժումներ, թվում է՝ ողջ Եվրոպան մեր միտինգներից է ցնցվում. ոչ մի օրինազանցության դեպք, մի ծաղիկ անգամ չի տրորվել, բժիշկները օգնության են հասնում վայրկենապես, անվճար ուտելիք եւ ըմպելիք են բաժանում... Ու այսպես մի շաբաթում դառնում ենք Միասնական ազգ, Ազատ ժողովուրդ... Այն ո՞վ էր ասում, թե միաբան չենք: Այդ ի՞նչ էր, ուրեմն, հրա՞շք, մի շաբաթվա մեջ ինչպե՞ս միացանք: Միասին էինք մի՛շտ, ժա՛մը պիտի գար, որ ելնեինք ոտքի...

... Ու միանգամից, մի քանի օր, մեկերկու ամիս, փոխվում է քաղաքը, փոխվում է Հայաստանը, ու Սարոյանը էլ չի ասում, թե՝ հայերը Հայաստանում ապրում են այնպես, ինչպես Ամերիկայում, այսինքն՝ իրենց ապրելով այդ երկիրը Հայաստան չեն դարձնում...

Հիմա Սարոյանը հարցնում է. *«Ամ բոլորը հայե՞ր են»*, ու երբ դրական պատասխան է լսում, հրճվում է մանկան պես, իր կիսված սրտի նման մի օր իր հայրենիքն էլ է միացյալ դառնալու, ու բացականչում է. *«Ապա մի փորձեք կործանել այս ցեղը, ասացեք՝ դարձյալ 1915 է, ու աշխարհի աչքը պատերազմի ծխով բռնված: Կործանեցեք Հայաստանը, տեսեք՝ կկարողանա՞ք: Իրենց շեն տներից քշեք նրանց անապատ: Չմոռանաք խլել ձեռքների հացն ու ջրի վերջին ումպը: Իրենց ու իրենց Աստծո տները վառեցեք: Տեսե՛ք, թե նրանք դարձյա՞լ չպիտի ապրեն: Տեսեք՝ ցեղը դարձյա՞լ չպիտի հառնի, երբ նրանցից երկուսը իրար գտնեն մի գարեջրատան մեջ, թեկուզ տասը, թեկուզ հարյուր տարի հետո, եւ խնդան ու խոսեն իրենց մայրենի լեզվով: Զանացեք, տեսեք՝ կարողանա՞ք պիտի, շանորդիներ, արգելել նրանց, որ չծաղրեն ձեր մեծ-մեծ ճռճռան գաղափարները, որ աշխարհում երկու հայ չխոսեն իրար հետ, փորձեք ջնջել նրանց»...*

Փետրվարը, լինելով արթնացած հայոց ոգու վառ արտահայտությունը, ինչ-որ մի տեղ դեռ արտաքին հուզական փայլ էր լոկ, ձեւ, որ անպայմանորեն պայմանավորեց եւ բովանդակությունը, առջեւում Գործն էր, որ արդեն ունեցավ իր առաջին շոշափելի արդյունքները:

Ազատագրում...

Պիտի կերտենք նոր արշալույս

Ղարաբաղյան շարժմանն ի պատասխան՝ ադրբեջանցիները կազմակերպեցին հերթական ցեղասպանություն Սումգայիթում: Նույն ծանոթ ձեռագիրը. թուրք խուժանը հագուրդ է տալիս իր արնախում բնազդին՝ իր իշխանության սցենարով... Ադրբեջանի հայաշատ բնակավայրերից կրկին ելան գաղթականների քարավաններ: Թալանված, հալածված, մազապուրծ բազմաթիվ հայեր (հարյուր հազարավորներ՝ միայն Բաքվից) մի կերպ հասան Հայաստան՝ ճանապարհին թողնելով ոչ միայն տասնամյակների աշխատանքով ձեռք բերված ունեցվածք, այլեւ հարազատների մարմինները... Մի՞թե կրկնվելու էր պատմությունը...

Մինչ Հայաստանում քաղաքական նորագույն խմորումները ձեւավորում էին ազգային-ազատագրական պայքարի նոր փուլը, 1988-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժը հերթական անդարմանելի աղետը բերեց հայ ժողովրդի գլխին... Բայց, օ՜ ճակատագիր. 1915-ից երեք տարի անց՝ 1918-ին հիմնադրվել էր Առաջին Հանրապետությունը, եւ ահա, 1988-ի աղետից դարձյալ երեք տարի անց, 1991-ի սեպտեմբերի 21-ի հանրաքվեով հիմնադրվեց Հայաստանի Երրորդ Հանրապետությունը:

Մինչ երկիրը պատրաստվում էր պետական շինարարության, ազերի վայրենին սանձազերծեց պատերազմ արցախահայության դեմ՝ նախահարձակ լինելով նաեւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում: Սակայն, ի հեճուկս թշնամու, 1992-94թթ. տեղի ունեցած մարտական գործողությունների հետեւանքով ազատագրվեց Արցախի մարզը՝ հարակից շրջաններով... Սարդարապատից 74 տարի անց ճակատագիրը մեզ արտոնեց հպարտանալ մի նոր՝ Շուշիի հաղթանակով:

Հաղթանակը ձեռք բերվեց հայ ազատամարտիկների արյան գնով: Կնքվեց զինադադար... Սակայն պատերազմը դեռ ավարտված չէ: Արցախի հիմնախնդիրը, որ համայն հայության կենսականն է ու Հայկական հարցի մերօրյա առանցքային բովանդակությունը, լուծված չէ իրականում, եւ ազատագրումը դեռ վավերացված չէ միջազգային իրավական դաշտում... Մանավանդ, որ ոսոխը դեռ վնգստում է...

Արցախյան ազատամարտը ընթացավ անկախացած երկրի վերաշինության առաջին քայլերին զուգահեռ: Անկախության խորհրդանիշները, պետականության հիմնական հաստատությունները մեկը մյուսի ետեւից դարձան իրողություններ: Տարիներ անց մի նոր աղետ՝ 1999-ի հոկտեմբերի 27-ը փորձեց կասեցնել ստեղծագործ աշխատանքով երկրի վերականգնման գործընթացը... Սակայն, ի պատիվ ժողովրդի, իշխանությունների ու ընդդիմության, ճգնաժամը հաղթահարվեց...

Տարածաշրջանում ամենաժողովրդավարական հասարակությամբ, դեռեւս ամենամարտունակ բանակով, վերականգնվել սկսվող ու զարգացող տնտեսությամբ եւ, ամենակարեւորը, համազգային միասնությամբ՝ Հայաստանը քայլ առ քայլ ամրանում ու մոտենում է իր ապագային:



Երկու ծաղկով գարուն

Իմ նոր Հայրենիք, Հզոր Հայրենիք...

Հայաստանը արեւելյան եւ արեւմտյան հատվածների առաջին անգամ բաժանվեց 387թ.-ին (Բյուզանդիայի եւ Պարսկաստանի միջեւ): Ճիշտ է, հետագայում տարբեր վարչական բաժանումներ ունեցավ Հայաստանը, վերականգնեց պետականությունը իր պատմական հայրենիքում (922-1045, Բագրատունյաց հարստություն), սակայն այդ, ասես, ճակատագրով նախասահմանված սահմանագիծը այդպես էլ չանհետացավ հայոց երկրի ու քարտեզի վրայից: Հետագայում Բյուզանդիային փոխարինեց Օսմանյան Թուրքիան: 1828 թվականին Արեւելյան Հայաստանը միավորվեց Ռուսաստանին: Արեւմտյան Հայաստանը դատապարտվեց կործանման: 1895-1923թթ. ցեղասպանություններից հետո Արեւմտյան Հայաստանը ամայացավ գրեթե ամբողջապես, արեւմտահայությունը սփռվեց աշխարհով մեկ՝ ստեղծելով նոր գաղթօջախներ եւ կամ ստվարացնելով նախկինում եղածները: Հայության երկու հատվածները արդեն կոչվեցին, դարձան Սփյուռք ու Մայր Հայրենիք...

Մեզ բաժանել են, որ տիրեն: Մենք գոյատեւելու ենք մեկս մյուսով: Առանց Մայր Հայրենիք՝ Սփյուռքը դատապարտված է ուծացման: Առանց Սփյուռք՝ Հայրենիքը տկար է եւ միայնակ:

Այսօր մենք արդեն ունենք միասին լինելու գիտակցությունը: Չէ, ո՛չ երկրաշարժը, Արցախյան շարժո՛ւմը, ազգային Զարթոնքը բերեց մեզ մեկ ժողովուրդ, մեկ հավատ, մեկ լեզու, մեկ հայրենիք ինքնագիտակցությանը: Ղարաբաղը արթնացրեց Սփյուռքին, իսկ մեզ հուշեց՝ նրան պահպանելով նրան ապավինելու կարեւորությունը: Երկրաշարժը, որ ցնցել էր արդեն իսկ ողջ աշխարհը, սրտահույզ գթասրտության ալիք տարածեց սփյուռքով մեկ. այդ ինչպե՞ս, ուրեմն մեր հայրենիքը կարող է եւ չլինե՞լ... Ու Ղարաբաղով արթնացած սփյուռքահայոց ոգին շարժեց նաեւ սիրտը սփյուռքահայոց...

Անշուշտ, դա այդպես է: Բայց մեզ միացնողը, ավելի ճիշտ՝ մեր միջեւ եղած անջատումները (մի ազգի երկու մասերի միջեւ «ջերմ կապեր» հասկացությունն անգամ սառն է հնչում) վերացնողը եղավ մեր ազգային Զարթոնքը: Նորից վերարթնացան հայոց երազները, հայոց իղձերն իրագործելի ծրագիր դարձնելու ելքեր որոնվեցին: Հայոց դատի պահանջատիրությունը որչափ Սփյուռքինը, նույնքան եւ ավելի դարձավ Մայր Հայրենիքինը:

1992-94 թթ. եւ ապա 2016թ. ապրիլի 2-5-ը Արցախյան ազատամարտում տարած մեր փայլուն հաղթանակներն ամրապնդեցին Արցախի անվտանգությունը՝ աննախադեպ ոգեւորություն պարգեւելով աշխարհասփյուռ հայության բոլոր հատվածներին եւ մեզ դարձնելով պատմականորեն միասնական ազգ նաեւ նոր ժամանակներում (բացառյալ վերջին դավադիր պատերազմը եւ մեր առեղծվածային պարտությունը):

Երբ միասին ենք, հաջողություններն ակնհայտ են: Մանավանդ, որ հասկացել ենք, որ պիտի ապավինենք միայն մեր սեփական ուժերին... Սփյուռքի եւ Մայր Հայրենիքի միացյալ ուժերով պիտի ամբողջանա մեր կիսատված տունը, շենանա Թումանյանի երազած մեր *«Նոր հայրենիք, հզոր հայրենիքը...»*:



«Մի ծաղկով գարուն չի գա»,- ասում է ժողովուրդը, թեեւ եթե ունես Գեւորգ Մարզպետունու անկոտրում հավատը, կարող է եւ գալ: Իսկ երկու ծաղկով գարունը, թվում է, ուր որ է պիտի գա: Հայրենիքի ու Սփյուռքի՝ ամեն ձեռնարկ ու խնդիր լուծելիս միշտ միասին լինելու դիրքորոշմամբ կկարողանանք հասնել Հայ դատի պահանջատիրության ցանկալի հանգրվանին եւ, ի վերջո, լուծել Հայկական հարցը:

Գ. Մ.

Համընդհանուր խռովքի թելադրանքով Կամ՝ մի քիչ թվաբանություն

սկիզբը՝ էջ 4

Դու արդեն ելել ես Ագռավաքարից: Վկա՝ Քո 25-ամյա անկախությունը: Ե՞րբ պիտի մոռանաս «բարեկամ» օտարի գոյությունը, որպեսզի այլեւս երբեք չպարտվես ոչ բարեկամ օտարներին... Թույլ տուր՝ հավատամ, որ այսօր, ապրիլյան այս վերջին քառօրյա պատերազմում Քո հերթական հաղթանակից հետո, Դու վերջնականապես սթափվել ես Քո հազարամյա նիրհից ու Քո **արքայական** արժանապատվությամբ քայլ առ քայլ վերականգնելու ես նաեւ Քո **Մեծ Հայրենիքը**: Քո՛, միա՛յն Քո մտքով, ու Քո, միա՛յն Քո բազկի ուժով, ամբողջությա՛մբ, առա՛նց որեւէ զիջումի, որովհետեւ Դու Քո բոլոր զիջումներն արել, ապրել ու սպառել ես արդեն հազար տարի...

... Տասը տարի առաջ՝ հունվարի առաջին օրերին, լրատվամիջոցները տեղեկացրին ադրբեջանցիների հերթական բարբարոսական արարքի մասին... ցուցադրվում էին Իրանի տարածքից նկարահանված կադրեր, որոնցում ազերի զինվորները հսկա մուրճերով ջարդուխուրդ էին անում հայկական մշակույթի վերջին բեկորները՝ նախիջեւանյան 10.000 խաչքարերի վերջին մասունքները... Քանի՞ եկեղեցի, քանի՞ խաչքար, հայկական մշակույթի քանի՞ անգին վկայագիր է ոչնչացվել 1920-ից ի վեր... Ո՞վ է հաշվել: Այդ թվականից սկսած՝ ռուս բոլշեւիկների կողմից արհեստականորեն ստեղծված Ադրբեջան վարչական միավորին բռնակցված Նախիջեւանում (փառք Աստծո, Արցախն այսօր ազատագրված է) քանի՞ հայ է սպանվել, տարհանվել... Պատմագիտական տվյալներն ու իրողությունները չթվարկենք: Մանավանդ որ պատմություն չունեցող եւ այդ պատճառով էլ պատմագիտություն չսիրող մեր սինլքոր թշնամու մի ներկայացուցիչ (հիշո՞ւմ եք 80-ականների վերջերին ազերիների՝ գրողների միության Անար անունով նախագահին) կարող է բարբաջել, թե հայերը մազոխիստ են...

«Լա՛վը չես, խեղճ ես, լավը չես, զավա՛կս, որդիս, առաջնեկս, իմ հույսս, իմ թանկս, լա՛վը չես, մեջդ վրեժ չկա... Ինչ իմացողի հարցնում եմ՝ գովում ու ծիծաղում է - իբր թե լավն ես, խղճով ես, եւ էդ ծիծաղն իմ սրտին դանակ է դառնում, զավակս, զավակս... մարդ չպիտի էնքան քաղցր լինի՝ որ կուլ տան ու չպիտի էնքան դառը լինի՝ որ թքեն: Քեզ կուլ են տվել ու գովում են, զավակս, քեզ կուլ են տալիս: Ասում ես խիղճ, բայց խիղճը գիտե՞ս երբ է խիղճ - երբ գազանի մեջ է: Քոնը խիղճ չի, խեղճություն է», - ասում է Հրանտ Մաթեւոսյանը... Ինչո՞ւ խղճացինք: Պահը եկել էր՝ դարավոր ոսոխի այդ մի հատվածը աշխարհի երեսից ի սպառ ջնջելու... Էլ ինչո՞ւ ենք պաշտում **Նժդեհին.** *«Ուժն է ծնում իրավունք»,* եթե չպիտի լինենք նրա պես վճռական: Էլ ինչո՞ւ ենք հպարտանում պատմությամբ ու հիշում պատմահորը. *«Սահմանք քաջաց՝ զենք յուրյանց»*, եթե... շիրմաքար պղծողին պետք է պարզապես ոչնչացնել... Լու՞յս իջնի հոգուդ, **Խրիմյան Հայրիկ**, *«երկաթե շերեփի»* Քո դասը դեռ չենք սերտել ինչպես որ հարկն է ու դարձյալ ապավինում ենք թղթե «շերեփներին»... Մինչեւ ե՞րբ...

Մշակութային այդ եղեռնագործությունից օրեր անց հայ սպային Եվրոպայի կենտրոնում կացնահարած սինլքոր մարդասպանին Ադրբեջանը հռչակեց տարվա մարդ... Ի՞նչ մարդ... Իր հավաքական ամբողջության մեջ լույսի թշնամի, խաղաղության հակոտնյա ոսոխը (թուրք, թե ազերի) չի կարող հանդուրժել եւ ոչ մի **բարի գոյություն՝** անգամ իր տիրապետության ներքո... Իր **չար** բնույթը թույլ չտվեց հանդուրժել անգամ նախիջեւանյան խաչքարերի վերջին փշուրների լուռ վկայությունը իր **գողացած տարածքում**... Ո՞րը թվարկել եւ ինչո՞ւ թվարկել: Ամեն օր, ամեն ժամ իր վայրագ դեմքը թաքցնել անգամ չփորձող գազանը եղել եւ մնում է վտանգավոր, քանի դեռ ոչնչացված չէ **ի սպառ**...

... Ուզենք, թե չուզենք, մենք ակամա ներքաշված ենք մեծ պատերազմի մեջ: Այն սկսվել է 1000 տարի առաջ, երբ առաջին անգամ թուրք տարրը մտավ Հայկական Լեռնաշխարհ: Չենք ուզեցել, չէ՞, բայց նա տարիներով, դարերով խմել է մեր արյունը, մեր հայրենիքում ստեղծել է պետություն, երկիր, ոչնչացրել է մեզ ու մեր ստեղծած քաղաքակրթությունը 1000 տարի՝ ընդհուպ մինչեւ ցեղասպանություն... 1000 տարի մեր խաղաղասեր էության թելադրանքով մենք մեզ միշտ խաբել ենք, թե պատերազմն ավարտվել է, թե վերջապես մեզ բաժին մնացած այս մի փշրանք հողակտորի վրա գոնե կարող ենք ապրել ու ստեղծել խաչով ու գրչով, բահով ու մուրճով, մտքով, քանքարով...

Ավա՜ղ... պատմության դասերն այդպես էլ մինչեւ վերջ չենք սերտում ու մերթընդմերթ ստիպված ենք լինում ինքներս մեզ հիշեցնել, որ ազգերի միջեւ, ինչպես բնության մեջ, գործում է **գոյության կռվի սկզբունքը**:

Մանավանդ, որ գողը մտել է տունդ, դու, ուզես, թե չուզես, նա գիտի, որ գող է, նա վախենում է քեզանից: Որքան էլ դու մոռանաս, նա չի մոռանում, վախից կծում է... անընդմեջ, անընդհատ, ամեն անգամ, երբ երախը հասնում է կրնկիդ... Իսկ դո՞ւ... *«Թե՞ էդքան դուրեկան է ծնկներն օջախին դեմ անել, ժպտալով ննջել ու հուսալ ու հավատալ, թե աշխարհը բարի է»,* - դարձյալ ասողը Հրանտն է... Չգիտեմ... Գուցե ավելո՞րդ են զգացական այս դատողությունները, որ կարող են լինել ու կան յուրաքանչյուր հայի գիտակցության մեջ: Բայց ինչո՞ւ մեր փորձը, մեր քաջությունը, մեր հայրենասիրությունը, մեր ազատասիրությունը արդեն 1000 տարի չեն դառնում թշնամուն չներող ու արժանի հարված հասցնող իրա՛կան ուժ (բացառյալ աստեղային ժամերին դրսեւորվող բռնկումները): Նույնիսկ Արցախն ազատագրելուց հետո էլ (կարծես թե մեղավո՜ր ենք եղել, որ հաղթել ենք մեր դեմ սրով ելածին) մեր ենթագիտակցության մեջ երբեմն գլուխ է բարձրացնում փոխզիջման գաղափարը: Ի՞նչ փոխզիջում, Տե՛ր Աստված... Հաղթողին չե՞ն դատում: Իսկ եթե փորձում են դատել, հաղթողը կրկի՛ն է հաղթում... ու այնքան, մինչեւ որ այլեւս չեն դատում...

Ուզենք, թե չուզենք, քնենք, թե արթուն մնանք, թշնամին չի՛ քնում երբեք: Ուրեմն, ուզենք, թե չուզենք, ստիպվա՛ծ ենք լինել զգոն, արթուն, արագ եւ համապատասխան հարված հասցնող... *«Ուժեղի մոտ միշտ էլ թուլն է մեղավոր»...* Հերի՛ք է, որքան արդար եղանք, փորձե՛նք լինել նաեւ ուժեղ: Այլընտրանք չունե՛նք: Պատերազմը չի՛ ավարտվել: Իսկ եթե պատերազմ է, չխաբվե՛նք զինադադարներին: Պատերազմի ժամանակ իրավունքի՛ խնդիր չկա, կա միայն հարվածելո՛ւ, ամեն գնով ու միջոցով թշնամուն ոչնչացնելո՛ւ խնդիր: Մանավանդ որ հակառակորդը հենց այդպես էլ վարվում է մեզ հետ արդեն 1000 տարի:

1994 թվականին կնքված զինադադարից հետո Աստծո գրեթե յուրաքանչյուր օր այն խախտվել է՝ ընդհուպ մինչեւ 2016-ի ապրիլյան ուխտադրուժ հարձակումը, որ ե՛ւ անսպասելի էր, ե՛ւ սպասելի... Պետք չէ զարմանալ, առավել եւս՝ վրդովվել: «Գորշ գայլը» իր կաշին չի փոխել արդեն հազար տարի: Եվ արդեն հազար տարի պատերազմ է հայտարարել մեզ եւ գործում է՝ ինչպես պատերազմում: Եվ պետք է իրերին նայել, առավել եւս՝ հակառակորդի հետ մեր հարաբերություններն ընկալել ոչ թե մեր խաղաղասեր ոգու տեսանկյունից, այլ պատկերացնել եւ ետադարձել՝ ինչպես պատերազմում:

Աշխարհը փոխվում է: Փոխվում են հարաբերությունների ձեւերը, բայց մնում է մրցակցությունը, գոյության կռիվը... Փոխվում են պատերազմի զենքերը, բայց չի փոխվում թշնամին, մանավանդ, եթե գոյատեւում է քեզանից զավթած քո հայրենիքում եւ պիտի քեզ հարվածի՝ քանի դեռ դու կաս, եւ քանի դեռ ինքը պարտված չէ վերջնականապես:

Զա՛րկ, լաո, զարկողին՝ զա՛րկ:
Պատերազմում՝ ինչպես պատերազմում:

Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆ

«Կրթություն», թիվ 17, 20.04.2016 թ.

Հիշի՛ր եւ ուսուցանի՛ր

Ցեղասպանության դասավանդումը՝ Հայոց մարտիրոսագրության ուշագրավ դրվագների օգտագործմամբ









Հայոց ցեղասպանության հիշողությունը հայ ժողովրդի ազգային ինքնության կարեւոր բաղադրիչներից է, հետեւաբար անհրաժեշտ է այս չափազանց նուրբ ու զգայուն թեմայի դասավանդման համար, որպես առանձին, հատուկ դասընթաց, ստեղծել հայեցակարգ, ծրագիր եւ ուսումնական ձեռնարկներ ու ուսումնաօժանդակ նյութեր:

Հայոց ցեղասպանության դասավանդումը կարեւորվում է նրանով, որ կարող է հիմք դառնալ հետագայում իրականացված ցեղասպանական գործողությունների, մարդկության դեմ ուղղված ոճրագործությունների հետազոտման համար: Մարդկության դեմ ուղղված մյուս ոճրագործությունների ու զանգվածային կոտորածների հետ համեմատությամբ ու այդ համատեքստում Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունը կարող է նպաստել սովորողների հետազոտական հմտությունների ձեւավորմանն ու զարգացմանը: Ցեղասպանությունների համեմատական ուսումնասիրության շնորհիվ սովորողները կկարողանան վեր հանել ցեղասպանությունների իրագործմանը նպաստող միտումները պատմական գործընթացներում, կբացահայտեն ու կըմբռնեն զանգվածային բռնության օրինակների առանձնահատկություններն ու ընդհանրությունները: Թեպետ կրթական տեսանկյունից արժեքավոր է ցեղասպանական գործողությունների համեմատական ուսումնասիրության իրականացումը, սակայն առավել կարեւոր է չփորձել համեմատել ցավի, տառապանքի աստիճանները: Ցեղասպանական գործողություններն ուսումնասիրելիս առանձնակի ուշադրություն պետք է դարձնել տվյալ ոճրագործությանը բնորոշ գործողություններին, ցեղասպանությունը բնութագրող քաղաքականությանը: Ցեղասպանական գործողությունների կառուցվածքային համեմատությունը պետք է հիմք հանդիսանա ցեղասպանությունների համեմատական վերլուծության համար: Երբեք չպետք է ենթադրել, թե որեւէ կոնկրետ ցեղասպանության կամ որեւէ զանգվածային բռնաճնշման զոհերն ավելի շատ են տուժել, քան համանման մյուս իրադարձությունների զոհերը: Ցեղասպանությունների պատմությունն ուսումնասիրելիս մանկավարժները պետք է կենտրոնանան ցեղասպան պետությունների կամ կառավարությունների իրականացրած կործանարար քաղաքականության տարաբնույթ դրսեւորումների վրա: Ցեղասպանության դրսեւորման յուրաքանչյուր օրինակ պետք է ուսումնասիրել, ընկալել իր հասկացություններով, իրեն բնորոշ հատկանիշներով՝ առանց այն նսեմացնելու, բացարձակացնելու կամ հերքելու:

Այս հոդվածի շրջանակներում մենք կներկայացնենք Հայոց մարտիրոսագրության **երեք դրվագ** եւ այդ դրվագները ցեղասպանության դասավանդման գործընթացում օգտագործելու վերաբերյալ մեթոդական խորհուրդներ:

Ներկայացվելիք դրվագները մենք ընտրել ենք Տիգրան Մկունդի *«Ամիտայի արծագանգներ»* եւ *«Ամիտայի արծագանգներու վերակոչումն»* աշխատություններից:

Նշենք, որ Տիգրան Մկունդը (Տիգրան Գազազյան, Տաճատ) Ամիդում ծնված, ապա, ավելի ուշ, Նյու Յորքում հաստատված հայ մտավորական է, որ թղթակցել է ժամանակի հայ պարբերականներին, մասնավորապես՝ Նյու Յորքի *«Ազատ»*, *«Հայաստանի կոչնակ»*, Մարսելի *«Արմենիա»*, Բեյրութի *«Արարատ»*, Կ.Պոլսի *«Հայրենիք»*, Փարիզի *«Յառաջ»*, Բոստոնի *«Պայքար»*, Թիֆլիսի *«Հովիտ»* պարբերականներին: Բացի վերոհիշյալ գործերից, Մկունդի գրչին են պատկանում նաեւ *«Մեր կառավարութիւնն»* (1930), *«Արշամ Անտօնեան: Նիւ Եորքի հայ լուսափորագրիչներու փառքն ու պարծանքը»* (1943), *«Հայ կղերն Ամերիկայի մէջ»* (1945), *«Նմոյշ մը ամերիկահայ գրական յառաջադիմութենէն եւ յաւելուած «Հայ կղերն Ամերիկայի մէջե գրքիս»* (1948), *«Յիսնամեակ Հայ Երիցական Եկեղեցւոյ»* (1950), *«Յուսախաբութեան տաղերգութիւն»* (1953) եւ այլն: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության նախաձեռնությամբ լույս ընծայվող Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի հուշամատյանների մատենաշարով 2019 թ. առցանց վերահրատարակվել է շարքի 15-րդ հատորը՝ Տ. Մկունդի *«Ամիտայի արծագանգներ»* գիրքը: Մկունդի աշխատությունների մասին դրվատանքով են արտահայտվել Հայր Հակոբ վրդ. Չանթայանը եւ Հայր Ներսես վրդ. Ակինյանը (Մխիթարյան միաբանություն), Հ. Քյուրտյանը, Մ. Թիրյաքյանը, Հ. Գարագաշը, Բ. Թեւյանը, Ա. Ալպոյաճյանը եւ ուրիշ հայ մտավորականներ:

Հայոց մարտիրոսագրության ուշագրավ դրվագների օգտագործմամբ Հայոց ցեղասպանության թեմայով դասն առաջարկում ենք անցկացնել 8-րդ դասարանում: Այդ դասարանի գործող դասագրքերից մեկում Մեծ եղեռնին անմիջականորեն առնչվող երկու դաս կա՝ *«« 27. Հայոց մեծ եղեռնը»* եւ *«« 28. 1915 թվականի հերոսամարտերը»:* Գործող դասագրքերից մյուսում Մեծ եղեռնին անմիջականորեն առնչվող երեք դաս կա՝ *«Բաժին 2., Թեմա 12. « Հայ ժողովուրդն Առաջին աշխարհամարտի տարիներին. « 2. Հայոց մեծ եղեռնը», «« 3. Հայկական ցեղասպանությունը եւ առաջադեմ հասարակայնությունը»* եւ *«« 4. Ինքնապաշտպանական մարտերը 1915 թվականին»:* Առաջարկում ենք դասն անցկացնել *«Հայոց մեծ եղեռնը»* դասանյութի ուսուցմանը նախատեսված դասաժամին: Դասի թեման ու նպատակը ներկայացնելուց հետո ուսուցիչը դասարանը բաժանում է երեք խմբի հետեւյալ կերպ. նախօրոք պատրաստած թերթիկների վրա գրած բերում է Հայոց մայրաքաղաքների, լեռների, գետերի անուններ, լցնում տուփի մեջ ու սովորողներին առաջարկում վերցնել մեկական թերթիկ: Թերթիկի վրա գրածը կարդալուց հետո սովորողները միավորվում են համապատասխան թեմատիկ խմբերում եւ տեղավորվում են խմբերին հատկացված սեղանների շուրջը (յուրաքանչյուր սեղանին դրված է անվանում՝ *«Լեռներ»*, *«Գետեր»* եւ *«Մայրաքաղաքներ»*): Կարելի է խմբերը ձեւավորել նաեւ այլ կերպ, սակայն ցանկալի է վիճակահանությամբ: Այնուհետեւ խմբերի սովորողներին տրամադրում է թերթիկներ, որոնցով յուրաքանչյուր խումբ պետք է աշխատի ու ներկայացնի ավարտուն խմբային աշխատանք: Այս աշխատանքը կատարելու համար խմբերին տրվում է 15 ր:

Եվ այսպես՝ **առաջին դրվագը,** որն ընտրել ենք, Հայոց ցեղասպանության թեմայի դասավանդման ընթացքում օգտագործելու համար, հետեւյալն է. *«Գոչագլեան ընտանիքի սպասուհին էր Ֆարիտա, նեկրօ կինը, որին դիւրութեան համար Ֆարօ կը կոչէին:*

Վէլի Պապան (ըստ Տ. Մկունդի հաղորդած տեղեկության՝ Վելի Պապան ծագումով իտալացի էր՝ Թուրին քաղաքից, իսկական ազգանունն էր Բոնելլի: Արեւելյան կամ Ղրիմի պատերազմի տարիներին որպես բժիշկ ծառայում էր Սկյուտարի զինվորական հիվանդանոցներից մեկում: Այստեղ էլ Բոնելլին ծանոթանում, ապա մտերմանում է վիրավոր թուրք տասնապետ Օսմանի հետ, իսկ պատերազմի ավարտից հետո Բոնելլին գալիս է Ամիդ-Դիարբեքիր ու, ընդունելով մահմեդականություն, ամուսնանում թրքուհու հետ, ունենում մեկ որդի: Մեծ էր Բոնելլիի վաստակը բժշկական ու առողջապահական տարրական պայմաններից զուրկ Ամիդում: Բոնելլին Ամիդում բարեկամացել, մտերմացել էր հատկապես Պատվելի Թովմաս Զավզավաթճյանի հետ (դավանանքով՝ ուղղափառ հունադավան, 1842-1911 թթ. - Ա.Մ.) զինքը բերած էր հետը. եւ երբ ան մահմէտականանալով կ'ամուսնանայ թրքուհւոյ մը հետ, Ֆարիտան կը յանձնէ Գոչագլեան ընտանիքին որպեսզի սեւամորթ աղջիկը քրիստոնեայ մեծնայ. այն ատեն նէ հազիւ 10-11 տարեկան էր: Իւր կեանքէն ուրիշ պատմուածք չունէր. մորթին սեւութիւնը, միացած իւր՝ ամենուն հաճելի լինելու բնաւորութեան, զինքը սիրելի ըրած էր ամենուն: Թաղի փոքրիկներն իսկ տեսակ մը յարգանքով կը վարուէին իրեն հետ, երբ նէ մօտակայ աղբիւրէն ջուր բերելու լինէր: Գարիպ Գասբալ թաղը կը կոչուէր աղբիւրին անունով. թաղեցւոց մեծ մասը գարիպներ են (օտարական - նոր հաստատուած գիւղացիներ) եւ Գասբալն (աղբիւր) ալ միակն էր այդ քաղաքամասին մէջ, ուրկէ խմելու ջուրը սափորներով կը տանէին:

Ֆարօն միակ քրիստոնեա նեկրօն էր քաղաքին մէջ. թուրք հարուստ ընտանիքներ ունէին իրենց նեկրօ սպասուհիները, սակայն ատոնք բոլորն ալ մահմէտականացած էին:

Տեղահանութեան երրորդ խումբին պատրաստուելու հրաման տրուած էր. պահակներ նշանակուած էին տանիքները եւ փողոցներուն մէջ՝ նախորդ երեկոյին: Թաղին ազդեցիկ թուրքը՝ բալուցի ճամպազ անունով, լուր կը ղրկէ Ֆարօյին, որ իրեն տունը գայ եւ ազատուի, քանի որ ինքը Հայ չէ, եւ ինչո՞ւ պարապ տեղը ամառ ատեն ոտքով ճամփորդելու նեղութիւններուն ենթարկուի: Ֆարօն կը մերժէ՝ պատասխանելով. «Ես այսքան տարի հայերուն հետ ապրած եմ, հիմա ալ չեմ անոնցմէ չեմ բաժնուիրե եւ յաջորդ առտու՝ արեւածագէն առաջ, ինքն ալ տեղահան կարաւանին միացած՝ Մերտին դուռնէն հետիոտն դուրս կ'ելնէ: Եօթանասուն տարեկան Եթովպացի կնոջ ճակատագիրը կապուած էր հազարաւոր քրիստոնեայ Ամիտացւոց ճակատագրին հետ...: Ո՞ւր ինկաւ ան, ճամբա՞ն սպաննուեցաւ թէ Ռաս էլ Այնի հորերուն մէկին մէջ կացինահար նետուեցաւ իւր սիրած Հայերուն հետ, չի գիտցուիր: Հոս կ'արձանագրեմ այս հէգ եթովպուհւոյն անունը, այն յոյսով, որ երբ համազգային միլիոն մը զոհերու յիշատակը տօնուի, յիշուի նաեւ պառաւ նեկրօ կինը՝ Ֆարիտան»:

Առաջադրանք (գրավոր պատասխանել)

1. Կես էջ առավելագույն ծավալով (3-5 նախադասություն) շարադրե՛ք այս պատմության ավարտը:

2. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ էր Վելի Բաբան ցանկացել, որ Ֆարիդա-Ֆարոն քրիստոնյա մեծանա:

3. Ինչպիսի՞ն էր Ֆարիդան: Բնութագրե՛ք նրան:

4. Գնահատե՛ք Ֆարիդայի վարմունքը: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ այդպես վարվեց Ֆարիդան:

5. Եթե Ֆարիդան ընդուներ ազդեցիկ թուրքի առաջարկը, ինչպե՞ս կգնահատեիք նրա այդ քայլը. ինչո՞ւ:

շարունակությունը՝ էջ 13

Ցեղասպանության դասավանդումը՝ Հայոց մարտիրոսագրության ուշագրավ դրվագների օգտագործմամբ

սկիզբը՝ էջ 12

Երկրորդ դրվագը հետեւյալն է. *«Փախստական եւ ազատութեան համար կռուող Հայ երիտասարդներ, հալածական կեանք մ'ունէին քաղաքին ներսն ու դուրսը: ...Թուրք կառավարութիւնը իւր զինուորներով, ժանտարմաներով, փօլիսներով, չէրքէզներով եւ լրտեսներու բանակով մը կը հետապնդէր զանոնք գիշեր ու ցորեկ: Բանտ ու մահ կար անոր, որ փախստական Հայ մը, ֆէտայի մը կերակրէր կամ օգնէր անոր. առատ վարձատրութիւն կար անոր, որ կը յայտնէր ֆիրարի (թրք.՝ փախստական, դասալիք, հետապնդվող հանցագործ - Ա.Մ.) մը կամ ֆէտայիի մը տեղը»:*

Քիլտանի (թրք.՝ Քաղդեական կաթոլիկ եկեղեցու հետեւորդ ասորիների ընդհանրական անվանումը) պառաւ կին մը Մար Բըթիւն (Ս. Պետրոս) Քիլտանիներու եկեղեցին կ'երթայ ամէն օր առաւօտ եւ երեկոյ, Սուրբ Կոյս Մարիամին առջեւ մոմ կը վառէ եւ ծնկաչոք կ'աղօթէ: Օր մըն ալ այս միամիտ եւ կրօնասէր պառաւը խղճի խայթէն ազատուելու եւ մանաւանդ «սրբութիւնե (սուրբ հաղորդություն - Ա.Մ.) կարենալ առնելու համար կը խոստովանի քահանային իւր մէկ գաղտնիքը. կ'ըսէ, թե քանի մը Հայ երիտասարդներ իւր տունին զէրզէմիին (Տան գետնափոր մառան, նկուղ, մթերանոց, օդասուն, փակ ապաստարան, պատսպարան - Ա.Մ.) մէջ պահած է շաբաթներէ ի վեր եւ կը կերակրէ զանոնք: Քահանան անփորձ ըլլալով՝ խնդիրն իւր մեծաւորին՝ Մըդրան Սիւլէյման Արքեպիսկոպոսին կը յայտնէ: Այս բարի եւ քաջ եկեղեցականը, «որուն ներսը նենգութիւն չկայէ, պառաւը իւր ներկայութեան կը կանչէ եւ խստիւ կը պատուիրէ անոր ալ եւս եկեղեցի չի գալ, այլ տունը մնալ եւ կերակրել այդ Հայ հալածականները. եւ կ'աւելցնէ. «Ամենամեծ ողորմութիւնն ու գործն է, որ կ'ընես Աստուծոյ եւ Սուրբ Կոյս Մարիամին հաճելի. այս բարեգործութիւնն ընելով՝ երկնքի սանդուխին վրայէն՝ Եղիայ Մարգարէին պէս շիփ-շիտակ Տիրամօր գիրկը պիտի երթաս»: «Սրբութիւն» կուտայ իրեն եւ «Արձակեմ զքեզ ամենայն մեղաց քոցե ըսելով կը ճամբէ զնէ իւր պարտականութեան, եւ նոյն ատեն կը պատուիրէ, որ երբ պէտք ունենայ նիւթական օգնութեան՝ իրեն դիմէ:

Աստուծոյ խղճամիտ ծառայ, անվեհերութեան տիպար կրօնակա՛ն: Իրեն հետ եւ պիտի յիշուի պարզամիտ պառաւը՝ Տիրամօր նուիրուած երկրպագուն»:

Առաջադրանք (գրավոր պատասխանել)

1. Կես էջ առավելագույն ծավալով (3-5 նախադասություն) շարադրե՛ք այս պատմության ավարտը:

2. Ինչպիսի՞ն էր ասորուհի պառավը: Բնութագրե՛ք նրան:

3. Գնահատե՛ք պառավի, քահանայի ու արքեպիսկոպոսի արարքները: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ նրանք այդպես վարվեցին:

4. Եթե պառավը, քահանան կամ արքեպիսկոպոսը թուրքական իշխանություններին հայտնեին պառավի տանը գտնվող հայերի մասին, ինչպե՞ս կգնահատեիք նրանց այդ քայլը. ինչո՞ւ:

5. Բերե՛ք հարեւանների (ընտանիքներ, բախտակից ժողովուրդներ, երկրներ) համագործակցության, փոխօգնության օրինակներ: Հիշե՛ք դեպքեր, երբ ձեզ նեղություն տալով կամ վտանգելով օգտակար եք եղել հարազատի կամ անծանոթի. ի՞նչ զգացումներ եք ունեցել:

Երրորդ դրվագ.

...Մինչեւ 1917 (ըստ Տ. Մկունդի վկայության՝ Ամիդ-Դիարբեքիրի հայության գողգոթան ու նախճիրը սկսվել է 1915 թ. մայիսի 30-ին՝ կիրակի օրը, երբ վաղօրոք ձերբակալված ակնառու հայ գործիչներին, ապա նաեւ մնացյալ հայերին ոչնչացրել են կամ խումբ-խումբ քաղաքից դուրս հանել իբր աքսորյալներ կամ գաղթականներ ու այնուհետեւ տարագրության ճանապարհներին սպանդ իրականացրել: Ամիդի հայության եղեռնը հիմնականում ավարտվել էր արդեն 1915 թ. հոկտեմբերի սկզբներին: Ջարդերի հետեւանքով քաղաքի հայության կորուստը կազմել է շուրջ 35000-36000 հոգի, իսկ շրջակա գավառների ու գավառակների հայության կորուստը՝ 40000-45000 հոգի - Ա.Մ.: Տե՛ս Մկունդ Տիգրան, Ամիտայի արձագանգներ, էջ 250-253) տակաւին տասնեակներով Հայ երիտասարդներ կային, որոնք տանիքէ տանիք, տունէ տուն, քարայրէ քարայր, հորերու, պարտէզներու, էվսէլին (Ամիտայի հարաւ-արեւելքը՝ Տիգրիսի եզերքի անտառները), եւ պարսպի ծակ ու ծուկերը, երբեմն ալ կոյուղիներու մէջ բնակելով՝ կռուեցան ու դիմացան, սպաննեցին իրենց վրայ յարձակողները՝ առանց խնայելու ո՛վ որ ալ ըլլար, եւ կողոպտեցին ու գողցան՝ ապրելու համար: Ասոնք կեանքը քաշկռտեցին մուկերու եւ մողէսներու պէս, բայց ո՛չ՝ առիւծներու եւ դիւցազուններու պէս՝ ապրեցան եւ իրենց գոյութիւնն ու կեանքը պահեցին եւ աւելի՛ն. ցոյց տուին թշնամւոյն, որ Հայը մինչեւ վերջին ճիգ իւր պատիւը բարձր կը պահէ:

...Մարտինցի Մարտո, Հազրոցի Թումաս, Զավզավաթճի (կանաչեղեն, բանջարեղեն վաճառող - Ա.Մ.) Մընճօ, Գասապ (մսագործ, մսավաճառ - Ա.Մ.) Մաթօ (Մատթէոս), Գաինչտիղ Նօնօ (Յովհաննէս), Պէտիֆանէ Պուպօ, Կուրճի Բօբօ (Յակոբ), եւ տասնեակ մ'ուրիշներ, որոնք մէկ-մէկ ռէվօլվէր կամ հրացան ձեռք ձգելով՝ շաբաթներով, ամիսներով եւ տարիներով դիմադրեցին՝ շարունակ փոխելով իրենց դիրքերն ու տեղը. Այս ծակէն միւս քարայրը, այս հորէն այն աւերակ տունը փախչելով ու անդադար կռուելով դիմացան թշնամիին, մանաւանդ՝ անօթութեան, մերկութեան, ցուրտին, ձիւնին եւ անձրեւին տակ շարունակ հալածական...

Մարտինցի Մարտօն (Մարտիրոս) իւր 9 ընկերներով պահուած են Նոր Դրան կողմը՝ Հաքիմ Հաննայ կոչուած քարայրին մէջ: 9 ընկերներ են. որոց երեքը 10-12 տարեկան տղաքներ: Արամ Դամալեան, նմանապէս 10-11 տարեկան պատանի մը, իւր ազգականներէն հրահանգուած, գիշեր ատեն պարիսպի ծակէն դուրս ելնելով կերակուր կը տանի անոնց: 18-րդ օրն ինչպէս կը լինի թուրքեր կը տեսնեն Արամը եւ յաջորդ օրը հարիւրաւոր զինուորներ... կը պաշարեն քարայրը:

Առաջադրանք (գրավոր պատասխանել)

1. Կես էջ առավելագույն ծավալով (3-5 նախադասություն) շարադրե՛ք այս պատմության ավարտը:

2. Ձեր կարծիքով՝ արդյո՞ք Ամիդի հայությունը կարող էր խուսափել կոտորածից. հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

3. Ինչպիսի՞ն էին Մարտոն ու իր ընկերները: Բնութագրե՛ք նրանց:

4. Գնահատե՛ք Մարտոյի ու իր զինակից ընկերների գործողությունները:

5. Ձեր կարծիքով՝ հնարավո՞ր էր արդյոք, որ արեւմտահայությունը քիչ կորուստներ ունենար ու չհայրենազրկվեր. հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

Խմբային աշխատանքի ընթացքում ուսուցիչը շրջում է խմբից խումբ, լսում է սովորողների քննարկումները եւ տրված լուծումները, ողղորդում նրանց աշխատանքը, աջակցում: Տրված ժամանակը լրանալուց հետո յուրաքանչյուր խումբ 6-7 րոպեում ներկայացնում է իր կատարած աշխատանքը: Այնուհետեւ կազմակերպվում է համադասարանային քննարկում: Ուսուցիչն ամփոփելով աշխատանքները՝ գնահատում է խմբերի ու մասնակիցների աշխատանքը, ապա հակիրճ ներկայացնում է Մեծ եղեռնի պատճառները, ընթացքն ու հետեւանքները: Սովորողներին հանձնարարում է տանը ինքնուրույն ուսումնասիրել *«Հայոց մեծ եղեռնը»* դասանյութը, որպեսզի հաջորդ դասաժամին համադասարանական ակտիվ քննարկումներով ու բլից հարց ու պատասխանով ամփոփեն դասը ու անցնեն նոր դասի ուսումնասիրությանն ու յուրացմանը:

Վերը բերված դրվագներով, ինչպես նաեւ Հայոց ցեղասպանությունը արտացոլող գեղարվեստական գրականությունից ու վավերագրական նյութերի ժողովածուներից կարելի է ընտրել բազում այլ հատվածներ ու դրանցով կազմակերպել ու անցկացնել Հայոց ցեղասպանության դասավանդման օրինակելի դասեր ինչպես հիմնական դպրոցի 8-րդ, այնպես էլ ավագ դպրոցի 11-րդ դասարաններում: Կարելի է նաեւ այդ ուսանելի դրվագների օգտագործմամբ Մեծ եղեռնի տարելիցի օրերին կազմակերպել դաս-միջոցառումներ, հուշ-ցերեկույթներ, աշակերտական ընթերցումներ, քննարկումներ:

Ամփոփելով մեր խոսքը՝ նշենք, որ ցեղասպանությունների դասավանդման գործընթացում յուրաքանչյուր դասի վերաբերյալ ճիշտ ընտրված դիդակտիկ՝ գեղարվեստական, վավերագրական, տեսա-լսողական ուսումնաօժանդակ նյութերը նպաստում են դասի պատմական, փաստական հատվածի կոնկրետացմանը եւ սովորողների մոտ անցյալի կերպարների ձեւավորմանը, ինչն էլ սովորողների պատմական պատկերացումների հիմքն է: Այդպիսի ուսումնաօժանդակ նյութերը խթանում են սովորողների հետաքրքրությունը դասի նկատմամբ, թույլ են տալիս կենտրոնացնել ու բարձրակետի վրա պահել նրանց ուշադրությունը: Դասավանդման գործընթացում ուսումնաօժանդակ նյութերի ներգրավմամբ ուսուցիչը կարողանում է սովորողներին փոխադրել դեպի կոնկրետ պատմական ժամանակաշրջան կամ վերարտադրել այդ ժամանակաշրջանի պատմական կոլորիտը, համապատկերը, տալ դրա ամբողջական կամ հատվածական նկարագրությունը:

Հիրավի, ցեղասպանությունների եւ զանգվածային բռնությունների պատմության դասավանդումը պահանջում է զգայունություն եւ խնդրի բարդության գիտակցում: Ուսուցիչները պետք է մեծ զգուշությամբ եւ պատասխանատվությամբ ընտրեն դիդակտիկ՝ գեղարվեստական, վավերագրական, տեսա-լսողական ուսումնաօժանդակ նյութերը: Դրանք պետք է համապատասխանեն իրենց սովորողների տարիքային եւ հոգեբանական առանձնահատկություններին, զարգացման մակարդակին ու պատրաստվածության աստիճանին, ճանաչողական կարողություններին: Մասնագիտական կոմպետենտությամբ ընտրված պատմական, գրական-գեղարվեստական, երաժշտական եւ այլ նյութերի ճիշտ համադրությունը եւ օգտագործումը սովորողներին հնարավորություն է տալիս ամբողջական ընկալելու ուսումնական նյութը եւ գործնականում կիրառելու ստացած գիտելիքները, կատարելու ճիշտ դիտարկումներ ու եզրահանգումներ:

Արման ՄԱԼՈՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԿԳՄՍՆ «ԿԶՆԱԿ» հիմնադրամի վերապատրաստման ծրագրերի մշակման եւ վերապատրաստումների արդյունավետության գնահատման բաժնի պետ











Լույս է տեսել

Կորուսյալ հայրենիքի մի ծվենի ամբողջական պատումը

Հայաստան աշխարհը հարուստ է կրոնապաշտամունքային կառույցներով՝ եկեղեցիներ, վանքեր, անապատներ, որոնք մեծ դեր են խաղացել հայ հոգեմտավոր կյանքում: Այդ կառույցներից մի քանիսը իրենց վաստակով ու դերով առանձնահատուկ տեղ են զբաղեցրել մեր բազմահազարամյա երթում: Հայ կրոնապաշտամունքային կառույցների մասին գրվել են բազում ուսումնասիրություններ թե՛ մերազնյա եւ թե օտար հետազոտողների կողմից: 2022 թ. վերջին հայ գրքի անծայրածիր ընտանիք մուտք գործեց այդ աշխարհին առնչվող մի հետաքրքիր ու արժեքավոր գիտական գործ իրաքահայ պատմաբան Պետրոս Մովսես Թովմասյանի *«Վանա լիճի Լիմ կղզին եւ վանքը պատմութեան քառուղիներում»* աշխատությունը: Պետրոս Թովմասյանը Հայոց ցեղասպանությունը վերապրածների առաջին սերնդի ներկայացուցիչ է, ծնվել է 1954 թ. Իրաքի Բասրա քաղաքում, 1971 թ. ավարտել է Բաղդադի Հայոց ազգային միացյալ երկրորդական վարժարանը, 1976 թ. Բաղդադի համալսարանի երկրաչափական բաժանմունքը: Հայոց պատմության է դասախոսել Իրաքում, Հորդանանում, ԱՄՆ-ում, Միացյալ Թագավորությունում: Շուրջ ութ տարի կնոջ՝ Հրաչուհի Պողոսյանի հետ բնակվում է Երեւանում:

Տիար Թովմասյանի գիտական հետաքրքրությունների ծիրում է Արեւմտյան Հայաստանի չուսումնասիրված կարեւոր պատմամշակութային կոթողների մեր ժողովրդի կյանքում ունեցած պատմաքաղաքական դերը: Նվիրյալ գիտնականը հետազոտություններ է հեղինակել Հայկական լեռնաշխարհի եւ Միջագետքի, Արարատյան թագավորության ((Ուրարտու. հրատարակվել է նաեւ անգլերեն), Աբբասյան խալիֆայության վերջին պատմաշրջանի եւ հայության, Աղթամարի թագավորության մասին, ուսումնասիրել է Վասպուրական աշխարհի նշանավոր վանքերը՝ Վարագավանքը եւ Նարեկավանքը: Մեր ակնարկի նյութ հանդիսացող աշխատանքը նրա 8-րդ գիրքն է, որ հրատարակել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյան մատենաշարով (232-րդ գիրքը):

Վարագավանքի եւ Նարեկավանքի մասին ուսումնասիրությունները, որպես գրքեր հրատարակելուց հետո, հեղինակը կարեւոր է համարել զարկ տալ Վանա լճի կղզիների ուսումնասիրությանը հիմնական նպատակ ունենալով մեր պահանջատեր ժողովրդին ներակայացնել այդ կենտրոնների պատմաքաղաքական եւ մշակութային կարեւոր դերն ու գործունեությունը: Այս համահավաք աշխատությամբ հեղինակը փորձել է ամբողջացնել Վանա լճի Լիմ կղզու եւ վանքի պատմությանն ու ներդրումը հայ կյանքի տարբեր բնագավառներում: Գիրքը ներկայացնում է Վանա լճի Լիմ կղզու եւ նրա Լիմ անապատի Սուրբ Գեւորգ եկեղեցու ամփոփ կենսապատումը:

«Վանայ լիճի Լիմ կղզիին Լիմ անապատը եղած է գիտութեան եւ մշակոյթի փարոս, ազգային զարթօնքի կեդրոն, իր մասնակցութիւնը բերած է հայ ազատագրական պայքարի ընթացքին: Այդ բոլոր պատմական զարգացումներուն խիստ հակիրճ անդրադառնալը շատ կարեւոր է, գաղափար ունենալու, թէ ինչ դժուարութեամբ Լիմ անապատը կը շարունակէր իր գործունեութիւնը, որպէս Հայաստանի մշակութային կարեւոր օճախներէն մէկը:

Լիմ անապատը դարեր շարունակ հանդիսացած է կարեւոր կեդրոն մը, ուր զարգացած է հայ գրչութիւնը եւ ընդհանրապէս հայ ստեղծագործ միտքն ու հոգին, այդ առումով եղած է անառիկ բերդ: Հայ ազգը իր անկախութիւնը կորսնցուցած պատմահանգրուաններուն, երբ անհնար էր ամրոցներ ու բերդեր կառուցել, իր ֆիզի քական ինքնապաշտպանութեան համարգ վանքերն ու անապատները իր շրջակայ հայութեան համար ծառայած են, որպէս պաշտպանութեան վայրեր: Այս առումով Լիմ անապատը բազմաթիւ անգամներ ապաստան տուած է հայութեան զաւակներուն վտանգի ժամանակ, ինչպէս պիտի անդրադառնանք այս գիրքին էջերուն մէջ»,- գրում է հեղինակը առաջաբանում:

Գիրքը բաղկացած է *«Յառաջաբան», «Գլուխ Ա. Նախամուտք», «Գլուխ Բ. Լիմ անապատի հիմնադրութիւնը», «Գլուխ Գ. Լիմ անապատը միջին դարերուն», «Գլուխ Դ. Լիմ անապատը նոր ժամանակներուն», «Գլուխ Ե. Լիմը նորագույն պատմության մեջ», «Վերջաբան», «Յանկ օգտագործուած սկզբնաղբիւրներու», «Անուանացանկեր»* մասերից, կան նաեւ գծագրություններ (աղյուսակներ) թիւ 1. Լիմ անապատը դարերու ընթացքին, թիւ 2. Յարձակումները Լիմ անապատի վրայ, թիւ 3. Լիմ անապատի կառուցման ժամանակաշրջանները, թիւ 4. Կարեւոր պատմական թուականներ, եւ քարտեզ Լիմ անապատի թեմը (20-րդ դարասկիզբ):

Լիմ կղզու անապատի պատմությունը հեղինակն ուսումնասիրել է բոլոր տեսանկյուններից եկեղեցական, քաղաքական, ճարտարապետական-շինարարական, գրչության, տնտեսական, կրթական, ազգային-ազատագրական եւ այլն հիմնադրումից միչեւ մեր օրերը: Հայ պատմագիտության մեջ սա Վանա լճի Լիմ կղզու անապատին նվիրված միակ ուսումնասիրությունն է, ուր նշված անապատը գիտական հետազոտության է ենթարկվել նման համակողմանիությամբ եւ իր գոյության ողջ ընթացքով. իհարկե, խոսվում է նաեւ Լիմ կղզու որպես աշխարհագրական միավորի մասին:

Այս՝ թվով 8-րդ գրքի մեջ եւս, շոշափած նյութը ավելի հետաքրքիր ու մատչելի կերպով ներկայացնելու նպատակով, հետազոտողը պատրաստել է գունավոր գծագրություններգ գիրքն ունի, ինչպես վերը արդեն ասացինք, 4 գունավոր գծագրություն, 8 գրություն եւ 1 քարտեզ: Քարտեզում նշված են



20-րդ դարասկզբին Լիմ անապատի թեմի մեջ մտնող կրոնապաշտամունքային կառույցները եւ գյուղերը: Գրքում կան Լիմ անապատին առնչվող լուսանկարներ:

Խնդրո առարկա աշխատության մեջ հեղինակն առաջարկել է նոր շրջանի պատմագրության մեջ կիրառել թվարկության նոր կարգ. քանի որ մեր արդի պատմության կարեւոր անկյունաքարերից է 1915 թ. ցեղասպանությունը, ուստի 19-րդ եւ նրան հաջորդող դարերի հայոց պատմության դեպքերը լավագույնս հասկանալու համար շատ օգտակար է դրանք կոչել Ց.Ա. (Ցեղասպանութենէն առաջ), եւ Ց.Ե. (Ցեղասպանութենէն ետք), այսպես 1896 թ. Համիդյան ջարդերը կլինեն 19 Ց.Ա., իսկ 1918 թ. Հայաստանի Հանրապետության հիմնադրությունը կլինի 3 Ց. Ե. (ինչպես գիտենք, պատմագիտական գրականության մեջ գործածվում են մ. թ. ա. (մեր թվարկությունից առաջ) եւ մ. թ. (մեր թվարկության) կամ Ք. ա. (Քրիստոսից առաջ) եւ Ք. հ. (Քրիստոսից հետո)) համառոտագրված եզրույթները:

Հեղինակը աշխատությունը գրելիս օգտագործել է մի քանի տասնյակ սկզբնաղբյուրներ, հուշագրություններ, ուսումնասիրություններ (2-ը անգլերեն) եւ հոդվածներ:

Գիրքը նվիրված է հեղինակի հորը՝ Լիմ անապատի թեմին պատկանող Փիր Ղարիպ գյուղում ծնված Մովսես Թովմաս Ամիրխան Թովմասյանի հիշատակին, որ իր ծնողների, եղբայրների եւ քրոջ հետ 1915 թ. ապրիլին տասնյակ հազարավոր հայության հետ միասին ապաստանել էր Լիմ կղզում:

Ներկայումս Լիմ կղզու անապատի համալիրից պահպանվել են գավիթը, գլխավոր Սուրբ Գեւորգ եկեղեցու հյուսիս-արեւմտյան մասը, ինչպես եւ բազմաթիվ գերեզմաններ ու խաչքարեր: 2018 թ. Լիմ կղզի այցելեց Հայաստանի Հանրապետությունում գործող *«Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ»*-ի կենտրոնի խումբը, որի անդամներից Աշոտ Հակոբյանը հիշում է՝ 2018 թ. դրությամբ անապատը պահպանվել է կիսավեր վիճակում, գլխավոր եկեղեցին պայթեցված է, որից պահպանվել է միայն հյուսիս-արեւմտյան անկյունը, համեմատաբար լավ են պահպանվել գավիթը եւ հյուսիսային փոքր եկեղեցին, գավիթի ներսում գանձախույզները փոսեր են փորել, զանգակատունն ամբողջությամբ ավերված է, վանքի օժանդակ շինությունները հիմնականում ավերված են, որոնց մնացորդներն են նշմարվում ավերակների մեջ:

Եղերական 1915-ից ի վեր Լիմ անապատը գտնվում է ավեր ու կործան վիճակում, այն այսօր գոյություն չունիգ վերջնականապես կործանվեց ի հետեւանս անասնագազանային հայատյաց ուղեղատապիգ ավելի քան մեկ դար դադար է առել անապատի հոգեաշխույժ գործունեությունը: Ըստ Պ. Թովմասյանի, եթե տեղի հայությունը ծպտյալ, քրդացած, թրքացած, ու համշենահայերը, ինչպես եւ հայ զբոսաշրջիկները ամեն տարի Սուրբ Գեւորգի հիշատակի օրերին, խմբային այցելություններ կազմակերպեն Լիմ կղզի եւ նրա անապատ, ապա այդ վայրը կարող է դառնալ հայ եւ օտար զբոսաշրջիկների այցելելի վայրերից մեկը, ինչպես Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին: Սրանով հայությունը շեշտած կլինի իր պատմական իրավունքը այդ տարածքի նկատմամբ եւ կարեւոր քայլ կատարած կլինի հայկական քաղաքակրթության հետքերը վերացնելու ոճրագործ քաղաքականությունը չեզոքացնելու ուղղությամբ: Թուրքական իշխանությունները եւ տեղացի քրդերը պետք է որ քաջալերեն նման նախաձեռնությունը զբոսաշրջային այցերից նյութական օգուտ ստանալու տեսիլքով:

Լիմ կղզին եւ նրա անապատը ազգի հիշողության մեջ վառ պահելու համար հեղինակն առաջարկում է Լիմ անունը գործածել՝ իբրեւ իգական անձնանուն. ինչպես գիտենք, մեր հայրենիքի կորուսյալ հատվածի որոշ տեղանուններ ու աշխարհագրական անվանումներ դարձել են անձնանուններ Վանուհի, Վան, Սիփան, Տարոն, Արարատ, Անի, Վանանդ, Վարագ եւ այլն:

Պետրոս Թովմասյանի գիտահետազոտական ծրագրերի մաս է կազմում Արեւմտյան Հայաստանի կարեւոր մշակութային կենտրոնների ուսումնասիրությունը. նպատակադրվել է Կտուց կղզու եւ անապատի մասին գրել ուսումնասիրությունգ զգալի չափով նյութեր արդեն հավաքել է:

Կգա ժամանակ, որ Լիմ անապատն ու մեր Ավետյաց երկրի մյուս բոլոր անապատներն ու վանքերը վերստին կշնչեն հայերեն. նրանց իսկական տերերը վաղ թե ուշ կվերադառնան նրանց մոտ, եւ այլեւս երբեք հայ հավատացյալ ու հայ սրբավայր չեն բաժանվի իրարից:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ
Բանասիրական
գիտությունների թեկնածու

Չես հասցնում աչք թարթել՝ նոր չեմպիոն. հայկական սպորտի ապրիլյան հաղթարշավը

սկիզբը՝ էջ 7

Հայաստանի հավաքականը Եվրոպայի առաջնությանը մասնակցում էր **Արմեն Բաբալարյանի** գլխավորությամբ:

Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի ընտրանին **4-րդն** է Եվրոպայում:

Ավելի վաղ Հայաստանի ազատ ոճի ըմբշամարտի հավաքականը, **Հաբեթնակ Կուրղինյանի** գլխավորությամբ, **երկու ոսկե մեդալ** էր նվաճել Եվրոպայի առաջնությունում:

Խորվաթիայի մայրաքաղաք Զագրեբում ընթացող ըմբշամարտի Եվրոպայի առաջնությունում ազատոճային ըմբիշ, **65 կգ** քաշային **Վազգեն Թեւանյանը** հռչակվեց Եվրոպայի չեմպիոն՝ եզրափակչում **12:1** հաշվով փայլուն հաղթանակ տանելով Բուլղարիայի ներկայացուցիչ **Միկյայ Սալիմ Նայիմի** նկատմամբ:

Արսեն Հարությունյանը ազատ ոճի ըմբշամարտի Եվրոպայի առաջնությունում ոսկե մեդալ է նվաճել եւ կարիերայում երրորդ անգամ նվաճել Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: **61 կգ** քաշայինների եզրափակչում Արսեն Հարությունյանը գոտեմարտել է Ալբանիայի ներկայացուցիչ **Զալիմխան Աբակարովի** հետ եւ **5:2** հաշվով վստահ հաղթանակ տարել:

Երկու ոսկե, մեկ արծաթե եւ չորս բրոնզե մեդալ

Իսրայելի Հայֆա քաղաքում անցկացվող սամբոյի Եվրոպայի առաջնությունում Հայաստանի մեծահասակների հավաքականը թիմային հաշվարկում զբաղեցրել է երկրորդ հորիզոնականը՝ նվաճելով երկու ոսկե, մեկ արծաթե եւ չորս բրոնզե մեդալ:

Մրցումային երկրորդ օրը մրցասպարեզ դուրս եկած Հայաստանի **6** ներկայացուցիչներից **3-ը** մեդալներ են նվաճել:

Եվրոպայի չեմպիոնի կոչմանն ու ոսկե մեդալին արժանացել է մարտական սամբոյի **98 կգ** քաշային **Արման Ավանեսյանը:** Եզրափակչում արցախցի մարզիկը պետք է մրցեր Բելառուսը ներկայացնող **Ռաման Դամյուի** հետ, սակայն վերջինս, վնասվածքի պատճառով, հրաժարվել է գոտեմարտել, եւ Ավանեսյանը ճանաչվել է Եվրոպայի չեմպիոն:

Եվրոպայի փոխչեմպիոնի տիտղոսը նվաճել է կանանց **54 կգ** քաշային կարգում հանդես եկող **Վարսիկ Գրիգորյանը:** Հայ մարզուհին եզրափակչում զիջել է ռուսաստանցի **Մարգարիտա Բարնեւային** եւ նվաճել արծաթե մեդալ:

Հայաստանի մյուս ներկայացուցիչը՝ **58 կգ** քաշային **Տիգրան Կիրակոսյանը** զբաղեցրել է երրորդ հորիզոնականն ու արժանացել է բրոնզե մեդալի:

Ավելի վաղ, Հայաստանի հավաքականի կազմում Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը նվաճել էր նաեւ **98 կգ** քաշային **Արսեն Խանջյանը:** Մարզական սամբոյի **64** եւ **79 կգ** քաշային կարգերում բրոնզե մեդալների էին արժանացել, համապատասխանաբար, **Նարեկ Դալլաքյանը** եւ **Բորիս Շատվերյանը,** իսկ մարտական սամբոյի **58 կգ** քաշային կարգում բրոնզե մեդալի էր արժանացել **Մխիթար Մխիթարյանը:**

Իսրայել էին մեկնել նաեւ մարզիչներ **Վովիկ Խոջայանը, Սմբատ Հովհաննիսյանը, Հայկ Ավետիսյանը,** մրցավարներ **Մարտին Միրզոյանը** եւ **Ազատ Անդրյանը:**

«Ակնկալում էի, որ լավ առաջնություն կստացվի, բայց որ այսքան լավը կլինի, չէի սպասում»

Ծանրամարտի Եվրոպայի ֆեդերացիայի ղեկավարները տպավորված են Երեւանում՝ ապրիլի 15-23-ն անցկացված Եվրոպայի առաջնության կազմակերպվածության բարձր մակարդակով:

Ծանրամարտի Եվրոպայի ֆեդերացիայի նախագահ **Անտոնիո Կոնֆլիտին,** ամփոփելով Եվրոպայի առաջնությունը, ընդգծում է՝ բացի կազմակերպչական անթերի աշխատանքից՝ իրեն շատ է տպավորել նաեւ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում հավաքված հանդիսականը:

«Մրցումային բոլոր օրերը հիանալի էին, բայց վերջին օրը, իսկապես, ֆանտաստիկ էր: Հանդիսականները շատ տպավորեցին, տրիբունաները լեփ-լեցուն էին ու հիասքանչ աջակցություն էին ցուցաբերում: Դժվարացա գոնե մեկ ազատ տեղ գտնել տրիբունաներում: Ծանրամարտի համար սա կարեւոր ուղերձ էր: Կազմակերպչական առումով եւս՝ ամեն ինչ հիանալի էր: Հպարտ եմ, որ Հայաստանի հետ համատեղ Եվրոպայի ֆեդերացիան ցույց տվեց, որ կարող է ավելի լավ մրցաշար կազմակերպել, քան աշխարհի առաջնությունն է: Ոմանք ասում են՝ սա Օլիմպիական խաղերի մակարդակ էր, քանի որ շատ ավելի լավն էր»,- նշում է Եվրոպայի ֆեդերացիայի նախագահը:

Կոնֆլիտին պատասխանում է նաեւ այն հարցին՝ արդյո՞ք Հայաստանը հնարավորություն կունենա նորից նմանօրինակ մասշտաբային մրցաշար ընդունելու. *«Այո՛, հնարավոր է: Աշխատում ենք եւս մեկ խոշոր միջոցառում Հայաստանում անցկացնելու ուղղությամբ»:*

Եվրոպայի ֆեդերացիայի նախագահը խոստովանում է՝ իր սպասելիքները միանգամայն գերազանցվել են. *«Եթե անկեղծ, ապա ակնկալում էի, որ լավ առաջնություն կստացվի, բայց որ այսքան լավը կլինի, չէի սպասում: Երբ առաջնությունից առաջ ժամանեցի Հայաստան ու ինձ ցույց տվեցին մրցումային դահլիճը, պայմանները, ես այնքան էլ տպավորված չէի եւ որոշակի կասկածներ ունեի: Բայց այն ահռելի աշխատանքը, որ Հայաստանն այս ընթացքում կատարեց, իսկապես, գովասանքի է արժանի: Ամեն ինչ հիանալի էր»:*

Ծանրամարտի Եվրոպայի ֆեդերացիայի փոխնախագահ, Եվրոպայի ֆեդերացիայի մարքեթինգային բաժնի ղեկավար **Դավիթ Խիպսիձեն** Երեւանում անցկացված Եվրոպայի առաջնությունը լավագույններից է համարում:*«Իմ կարծիքով՝ սա ամենաշքեղ ու անկրկնելի առաջնությունն էր՝ ծանրամարտի Եվրոպայի առաջնությունների պատմության մեջ: Վստահաբար, կարող եմ ասել, որ մենք այստեղ ինչ-որ հրաշք իրագործեցինք: Բացի այն հրաշքից, որ մեզ պարգեւում էին մարզիկները, հրաշքի էր նման նաեւ այն աշխատանքը, որը կատարեցին կազմակերպիչները: Յուրաքանչյուր պահը վայելել ենք: Ինձ համար մեծ պատիվ էր կազմակերպչական աշխատանքների մասնակիցը դառնալ: Շնորհակալ եմ Հայաստանին՝ այս մեծ իրադարձության համար եւ մեզ դրա մասը դարձնելու համար: Կարծում եմ եմ՝ այս պահի դրությամբ Հայաստանը՝ Երեւանը, 2024 թվականի աշխարհի առաջնությունն ընդունելու լավագույն թեկնածուն է: Իմ հնարավորությունների սահմաններում կանեմ ամեն ինչ, որպեսզի դա տեղի ունենա»,-* ընդգծել է վրացի մասնագետը:

Հիշեցնենք՝ ծանրամարտի Եվրեպայի առաջնության թիմային հաշվարկում Հայաստանը առաջին հորիզոնականն է զբաղեցրել: Հայ ծանրորդները երկրամարտում ընդհանուր առմամբ 13 մեդալ են նվաճել՝ 4 ոսկե, 4 արծաթե եւ 5 բրոնզե:

Մրցումային վերջին օրը՝ ապրիլի 23-ին, Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում 4418 հանդիսական էր ներկա, ինչն ռեկորդային է ծանրամարտի Եվրոպայի առաջնությունների պատմության մեջ:

Նշենք նաեւ, որ ծանրամարտի Եվրոպայի առաջնության փակման ժամանակ ծանրամարտի Եվրոպայի ֆեդերացիայի նախագահ Անտոնիո Կոնֆլիտին պատվոգրեր է շնորհել ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար **Արայիկ Հարությունյանին,** ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Կարեն Գիլոյանին** եւ Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար **Փաշիկ Ալավերդյանին՝** մրցաշարը լավագույնս կազմակերպելու համար:

Տե՛ս՝ նաեւ էջ 18-19

Ոսկե մեդալակիրներ


Գոռ Սահակյան


Դավիթ Հովհաննիսյան

Գարիկ Կարապետյան

Սամվել Գասպարյան

Արծաթե մեդալակիրներ

Տաթեւ Հակոբյան


Անդրանիկ Կարապետյան

Կարդա՛ եւ ծանոթացրո՛ւ

Վաթսունականների արձակագիրներ. ժամանակը եւ հերոսը

սկիզբը՝ նախորդ համարում

Ժ.

Գրական հերոսի բնավորության եւ հարցադրումների միանգամայն այլ նախասիրություն ունի **Մուշեղ Գալշոյանը:** Նա ստեղծում է 20-րդ դարի հայկական կյանքին բնորոշ ազգային նկարագիր ունեցող կերպարներ: Այնպիսի մարդկանց կերպարներ, որոնք տեսել են եղեռն ու ավերածություն, ծննդավայրի կործանում ու գաղթ եւ ապա նաեւ նոր բնակավայրում գցել նոր կյանքի հիմքերը: Հայաստանի պատմական բախտը՝ եղեռնը, ավերածությունները, գաղթը, այնուհետեւ ծննդավայրից հեռու ծննդավայրի կարոտն իրենց մեջ անթեղած, հայրենիքի հեռու ու քարքարոտ մի անկյունում նոր կյանք հիմնող մարդիկ են նրա հերոսները: Այդ հերոսների ճակատագրի մեջ Հայաստանի պատմությունն է:

Գալշոյանը յուրովի շարունակում է հայ գրականության այն գիծը, որն ուղղված է դեպի հայրենի բնաշխարհն ու ժողովրդի մարդիկ, դեպի նրանց կյանքն ու կենցաղը, սովորություններն ու ազգային նկարագիրը: Պատմական հայրենիքը կորցրած գաղթական հայեր են Գալշոյանի հերոսները եւ գաղթական հայերի շառավիղներ: Դժվարին կյանքի, անասելի կորուստների, անամոք կարոտների եւ հույսի ու հավատի տեր պարզ ու հասարակ մարդիկ, ովքեր իրենց գրական հաջող կերպավորումն են ստացել *«Ջորի Միրոն», «Կածանի ճամփորդներ»* վիպակներում, *«Բովտուն»* վեպում, *«Մարութա սարի ամպերը»* պատմվածաշարում, հատկապես այդ շարքի *«Կանչը», «Քեռի Թորոսը»* գործերում եւ մի քանի ակնարկներում:

«Ջորի Միրոն» վիպակը զարգանում է հերոսի ներքին խոսքի աստիճանական ծավալմամբ: Ստեղծվում է բովանդակության երկու բացվածք՝ վերհուշի եւ դրանից բխող մտահանգումների, ինչն իբրեւ ապրված խորհուրդ եւ կենսափիլիսոփայություն՝ Միրոն ժառանգում է որդուն: Բացվում են Ջորի Միրոյի կյանքի փակագծերը, որոնց փակ ապրումները որպես շաղախ լցվում են նրա ու որդու միջեւ եւ նրանց՝ որպես միեւնույն պատի երկու քար, ծուլում իրար:

Միրոյի միտքը թափառում է Երկրում՝ կորցրած ծննդավայրում եւ ծանոթ մարդկանց ու ապրված իրականության պատկերների միջոցով վերակոչում արդեն պատմություն դարձած կյանքը: Ապրում է Ջորի Միրոն՝ երազի մեջ պահած հեռու մի երկիր, մի տխրամած կարոտ, որը ե՛ւ իր կյանքն է ու անցյալը, ե՛ւ իր ժողովրդի: Այդ անցյալն է, որ կենսունակ արմատի նման նրան կապում է իր հողին եւ այդ անցյալով ապրեցնում նրա ներկան: Այդ ներկան եւս դժվարին մաքառում է գոյատեւման ու հաստատման համար. նոր հիմնադրած գյուղում Ջորի Միրոն առաջինն է ծուխ հանում իր երդիկից եւ ամեն ինչ կորցնելուց հետո անգամ՝ մտածում կյանքը նորից սկսելու մասին:

«Ջորի Միրոն» վիպակի հետ օրգանական կապ ունի հաջորդ՝ *«Կածանի ճամփորդներ»* գործը: Դեպքերի վայրը նույն Քարագլուխ գյուղն է, հերոսները՝ նույն գաղթականները, Ջորի Միրոյի սերունդը: Հեղինակն այստեղ չի առանձնացնում որեւէ կերպար, այլ լայն ընդգրկումով ներկայացնում է այդ մարդկանց կյանքն ու կենցաղը, խոսքն ու զրույցը: Հոգեբանությամբ բավականին իրար նման, արտաքուստ բավականին տարբեր մարդիկ են նրանք՝ Կռապեն, ով քար է աղում, որ հող ստեղծի, Օսոն, ով շարունակ ինքն իր մեջ զրույց է անում աշխարհի ու քարերի հետ, Նոհոն, ով խորհրդանշում է անցյալն ու ներկան, հովիվ Ավգին, սայլապան Արոն, Վարդո մարեն եւ էլի ուրիշներ: Հեռացող մի սերունդի ներկայացուցիչներ են նրանք, որ իրենց խոսքի, կենցաղի, պատմությունների, հիշողությունների մեջ պահում են կորուսյալ մի աշխարհի վերջին հիշատակները: Այդ հիշատակների կորուստը կսկիծ ու մորմոք է կուտակում հաջորդ սերունդի էության մեջ, քանի որ այդ կորուսյալ աշխարհը նրանց համար կար իրենց հայրերի ու պապերի գոյությամբ: Իսկ նրանց հեռանալուց հետո անցյալը կարծես դադարում է սովորական լինելուց եւ դառնում որոնվող կենսագրություն: Իսկ այդ կենսագրությունը Ջորի Միրոյի, Նոհոյի եւ մյուսների կյանքն է: Նոհոյի մահից հետո կորուստի ու կարոտի նրբին մի շաղախով ձեւավորվում է հետեւյալ միտքը. *«Ասեք, որ թաղեցինք արեւի տակ եղած վերջին ճախրկանցուն՝ մի գյուղ աշխարհ, մի հին ադաթ, լեզվի անուշ մի երանգ»:*

Հերոսների այդ պատկերաշարը շարունակվում է նրա *«Ծովասարի Օհանը», «Թաթոն», «Դավոն», «Կանչը», «Քեռի Թորոսը»* պատմվածքներում: Այս սերունդի մարդկանց կյանքի հոգեբանությունն ու անելիք գործը հատկապես ցայտուն դրսեւորում է ստացել *«Քեռի Թորոսը»* պատմվածքում: Գալշոյանն այստեղ խտացրել է իր հիմնական գաղափարներից մեկը: Քեռի Թորոսը հիվանդանում է կոկորդի քաղցկեղով. նրան թվում է, թե կոկորդը սեղմող այդ ճյուղավոր հրեշը իր թշնամին է, որ իրեն հալածեց հայրենի երկրից, ավերեց ու հրկիզեց ամեն ինչ եւ հիմա եկել դարանակալել է կոկորդում, որ մի օր խեղդի իրեն: Քեռի Թորոսը գտնում է մոռացված եւ կախիչի տեղ օգտագործվող ժանգոտ դաշույնը, այն սրում ու փայլեցնում եւ հարմար մի պահի խրում իր կոկորդում թաքնված թշնամու մարմնի մեջ: Ինքնասպանության գիտակցություն Քեռի Թորոսի մեջ բացարձակապես չկա: Նա լրիվ համոզված է, որ իր անարգ ոսոխին է սպանում: Գալշոյանը կենսական հավաստի պատմությամբ ստեղծել է հայրենիքից վտարված սերունդի հոգեբանությանը բնութագրական արդար վրեժի ուշագրավ մի գործ:

Այս սերունդի բոլոր ներկայացուցիչները կյանքից հեռանում են ծննդավայրի ու մանկության հիշատակների անփարատ կարոտն իրենց հոգու մեջ եւ մի պահ նույնիսկ նրանց թվում է, թե իրենց մահը ոչ թե մահ է, այլ երազի շարունակություն, որ նրանց պետք է վերադարձնի իրենց հայրերի երկիր (*«Դավոն»*):

Գալշոյանը նաեւ այս սերունդի մարդկանց հոգեբանական նուրբ զգացմունքների պատկերներ է վերակոչում: Այս առումով հրաշալի է *«Կանչ»*-ը: Դա հեռավոր երկրում ձեւավորված եւ գաղթի ճանապարհին կորած մանկության տարիների սիրո կանչն է, որ հանկարծակի արթնանում է տարիներ հետո, իր կյանքի մայրամուտին հասած մարդու էության մեջ: Մանկության ու ծննդավայրի հետ կորցրած սիրո հարությունը նոր երազներ է արթնացնում Ջորոյի հոգնած մարմնի մեջ:

Այս ստեղծագործություններում կարոտի երգ է հյուսում Գալշոյանը. կարոտի երգ՝ հեռվում մնացած ծննդավայրի, այդ ծննդավայրի կորուստի եւ կյանքից հեռացող մի սերունդի մասին, որի մեջ դեռեւս ապրում էին կորուստի մատնված ծննդավայրի հիշատակները:

«Բովտուն» վեպում եւս, ուր պատկերված է մեր օրերի գյուղական կյանքի առօրյան, նրբորեն շարունակվում են այդ կարոտի նվագները եւ ձուլվում նոր կյանքի կառուցման երգերին: Գյուղի աշխատավորներն են վեպի հերոսները: Աշխատանքային առօրյան եւ հարաբերությունները դառնում են այն գլխավոր միջավայրը, որի մեջ գործում են նրանք:

Այս վեպում եւս, ինչպես եւ *«Կածանի ճամփորդները»* վիպակում, Գալշոյանը ոչ թե միագիծ է զարգացնում գործողությունը՝ ընտրելով մեկ կամ երկու գլխավոր հերոս, այլ բազմապլան ու բարդ: Նրա վեպում եւս գլխավոր հերոսներ, ըստ էության, չկան, չկան նաեւ երկրորդական հերոսներ: Նրա ներկայացրած բոլոր հերոսներն էլ կարեւոր են եւ ամբողջական խմբանկարով ներկայացնում են գյուղական կյանքին բնորոշ բնավորություններ: Առանձին հերոսը նախ բարդ նկարագիր ունի ինքն իր ներսում եւ ապա բազմանիստ ու արտաքուստ կերպավորման խառն ու ընդմիջված ընթացք՝ ամբողջ վիպական հյուսվածքի մեջ: Մեր աչքի առջեւով խառը հաջորդականությամբ անցնում են պետական տնտեսության տնօրեն Եղիա Կիրակոսյանը, գյուղատնտես Վիրաբ Բադալյանը, գործավորներ Բագրատը, Ներսեսը, Երեմը, Սանթրոն, Արտուշը, բրիգադիր Մարուխյանը, պառավ Զանանը, երիտասարդներ Արման, Նազիկը, Վարոսը, Միրաքը, Կարոն եւ էլի ուրիշներ:

Հերոսներին խիստ ընդգծված գլխավորների ու երկրորդականների բաժանման բացակայության հետ մեկտեղ, այս վեպի համար կարեւոր է նշել նաեւ այն, որ Գալշոյանը, ընդհանուր առմամբ, իր հերոսներին չի բաժանում նաեւ դրականների ու բացասականների: Մնալով բնականության սահմաններում՝ ռոմանտիկական հայեցակետով նա չի կտրում մի հերոսի իր շրջապատից ու իդեալականացնում կամ հակառակը՝ խտացնում բացասական հատկանիշեր: Կերպարների՝ կյանքից չեկող ծայրահեղացումները խորթ են նրան, քանի որ նա հետամուտ է կյանքի պատկերման բնականության:

Վեպի հիմքը գործողությունների, հարաբերությունների այն շղթան է, որ աշխատանքային առօրյայի ընթացքում ձեւավորվում է նորաստեղծ ավանում: Գալշոյանն ամբողջությամբ է դիտում ներկայացվող կյանքի պատկերը. նրա նպատակը չէ ծանրույան կենտրոն դարձնել մեկ դեպք կամ մեկ անձնավորություն: Նրան հետաքրքրում են բոլոր այն իրադարձությունները, որոնք կատարվում են գյուղում եւ բոլոր այն մարդիկ, ովքեր մասնակցում են դրանց:

Վեպի կառուցվածքը հատկանշվում է մի կողմից իրական տարբեր վիճակների կտրուկ անցումներով ու համադրությամբ, մյուս կողմից՝ ժամանակային տարբեր հատ-վածների հերթագայությամբ ու միահյուսմամբ: Հերոսներին նա ներկայացնում է թե՛ ներկա որեւէ վիճակում ու գործողության մեջ եւ թե անցյալի ոգեկոչումով՝ արդեն ապրած տարիների հիշողությամբ: Ժամանակային տարբեր բեւեռներում հերոսներին ներկայացնելիս հեղինակը կարեւորում է ներքին խոսքը, մի հնար, որ ընդհանրապես նկատելի տեղ ունի Գալշոյանի բանարվեստում:

Հիմա, ի՞նչ բնավորություններ են վեպի հերոսները, ամբողջությամբ ի՞նչ առանձնահատուկ գծերով են բնութագրվում նրանք:

Բագրատի կերպարում կիզակետված է վեպի հիմնական ոգին՝ աշխատանքը: Անմշակ որձաքար հիշեցնող բնական նկարագրի տեր մարդ է նա, որ իր կյանքի նպատակը տեսնում է ուժերի լրիվ ծախսումով, հակառակ դեպքում օրը նրա համար թվում է կիսատ ու չապրած: Սանթրոն ու պառավ Զանանը Ջորի Միրոյի եւ նրա սերունդի մարդկանց երկվորյակներն են: Սրանք ամեն առիթով ոգեկոչում են իրենց անցյալը, այդ անցյալից անընդհատ պեղում նոր պատկերներ, անցքեր, իրադարձություններ եւ այդ ամենով իմաստավորում իրենց ներկան: Հարուստ բնավորություն է Արման, ով օժտված է սկզբունքային, ազնիվ գծերով: Արմայի կերպարին զուգընթաց հեղինակը կերտում է նաեւ Արմայի զոհված հոր կերպարը: Արմայի հայրը դարձյալ անցյալի ձայնն է, որ ապրում է որդու մեջ եւ նրան հաղորդում կյանքի դասերը:

Վեպը համադրվում է նշված եւ չնշված բոլոր հերոսների անմիջական գործողություններով, հարաբերություններով, վերհուշերով: Աշխատանքային առօրյան, որով ի-մաստավորվում է հերոսների կյանքը՝ դառնում է մարդկանց միավորող հիմնական ուժը եւ կյանքի գեղեցկությունը:

Գալշոյանն իր վիպակներում ու պատմվածքներում միշտ էլ հավատարիմ է մնում իր նյութի ներքին տրամաբանությանը: Դա զգալի է ե՛ւ հերոսների ընտրության ու կերպավորման, ե՛ւ պատմվող նյութին բնորոշ միջավայր ստեղծելու հարցերում: Այդ միջավայրի հերոսների կերպավորման գործում կարեւոր նշանակություն ունեն թե՛ լեզվաոճական համապատասխան միջոցների օգտագործումը, թե՛ նյութի պատումի եղանակը, թե՛ հերոսների ներքինն ու արտաքինը բացահայտելու սկզբունքները, որոնք նա միշտ բխեցնում է նյութի ոգուց: Նաեւ դա է պատճառը, որ նրա հերոսները ներկայանում են իրենց բնական-կենսական նկարագրով եւ նախատիպային հավաստիությամբ:

Գալշոյանն ստեղծում է մեր կյանքին բնորոշ իրական ու բնական պատկերներ եւ, անցյալի ու ներկայի օրգանական միահյուսմամբ, ներկայացնում գյուղաշխարհի մարդկանց մի պատկերաշար, որոնք իրենց մեջ կրում են իրականության պատմական, հասարակական եւ բարոյական տեղաշարժերի դրոշմը, այլ կերպ՝ Երկրի ձայնը, դեմքն ու դիմագիծը:

ԺԱ.

Հովհաննես Մելքոնյանն իր վիպակներում ու պատմվածքներում անդրադառնում է մեկը մյուսի հետ ներքին առնչություններ ունեցող երեք հիմնական հարցադրումների, որոնք ընդգրկում են ժամանակային երեք տարբեր փուլեր եւ ստեղծում համապատասխան հերոսներ: Այդ հարցադրումները, ժամանակային փուլերն ու հերոսների տեսակները գեղարվեստական մշակման են ենթարկվում 20-րդ դարի սկզբի հայ ժողովրդի ազգային ողբերգության, պատմական հայրենիքի կորուստի, Երկրորդ համաշխարհային պատերազմի եւ ժամանակակից կյանքի նյութի յուրացմամբ: Այդ ամենի վկայությունն են նրա *«Իմ Մելքոն պապը», «Քարավան», «Ցրոնք արվարծանը», «Ընթրիք հինգ հոգու համար»* վիպակները, *«Հարցաքննություն»* վեպը եւ մի քանի պատմվածքներ:

շարունակությունը՝ էջ 17

Վաթսունականների արձակագիրներ. ժամանակը եւ հերոսը

սկիզբը՝ էջ 16

Նյութի, ժամանակաշրջանի եւ հերոսների ընտրության տեսակետից որոշակի առնչություններ կան Մելքոնյանի *«Քարավան»*, *«Իմ Մելքոն պապը»* վիպակների եւ Գալշոյանի *«Կռունկ»* ժողովածուի գործերի միջեւ: Սակայն այդ առնչություններն ընդհանուր կարգի են եւ լրացնում են մի մեծ պատմության տարբեր էջերը: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ պատմական հայրենիքի կորուստի, հեռվում մնացած ծննդավայրի կարոտի եւ, ընդհանրապես, 20-րդ դարի տասական թվականների հայկական կյանքի գեղարվեստական պատկերումն զգալի տեղ ունի արդի հայ գրականության մեջ՝ հավասարապես թե՛ արձակում, թե՛ պոեզիայում:

Նշված վիպակներում Առաջին համաշխարհային պատերազմի տեսադաշտում ցուցադրվում են ազգային կյանքին յուրահատուկ պատկերներ՝ գաղթ, կոտորած, հարազատների կորուստ, փրկության ուղիների որոնում: Մելքոնյանը ցույց է տալիս համազգային կյանքի հավասարակշռության խախտումը եւ ապա պատկերում այդ դժվարին դրությունից դուրս եկող քարավանների ճակատագիրը:

«Քարավան»-ը 300 գաղթական հայերի փրկության պատմությունն է: Եվ եթե օտար ու անհյուրընկալ ճանապարհներին դեռեւս կա մի բան, որ կենսունակ է պահում մարդկանց ու ջերմացնում նրանց հոգիները, անցած օրերի կարոտն է, որ աներեւակայելի կորուստների մեջ գոնե հիշատակներով սփոփում է մարդկանց: Ամեն ինչ կորուստի մատնած մարդիկ ճգնում են ստեղծել մի կայուն վիճակ եւ ապրելու բնազդային զգացողությունը փոխարինել գիտակցական կենսազգացողության: Պարտությունը եւ կորուստը դառնում են փաստ, կարոտը ապրեցնում է, բայց ոչ թե ներկայով, այլ անդառնալի անցյալով: Սակայն այս ամենը չի նշանակում, թե կյանքն ընդհատվում է, տվյալ վիճակը մղում է մաքառումների, բարոյական անպարտությունն ու անկոտրում կամքը փրկության դռներ են բացում:

Կոտորածի ու գաղթի պատկերներ են ներկայացվում նաեւ *«Իմ Մելքոն պապը»* վի-պակում: Կրկին ելման կետը նույնն է. *«-Ի՞նչ կա... - Մահ, ավեր, կոտորած, աքսոր-...»:* Եթե նախորդ վիպակում այս նյութն արծարծվում էր լայնքով, կերպարների բազմազանությամբ, ապա այստեղ ստանում է ավելի որոշակի անհատական լուծում: Առաջ է մղվում Մելքոնի կերպարը, որի զարգացումը դիտվում է ազգային-քաղաքական իրադարձությունների լայն տեսադաշտում:

Մելքոնյանի նշված վիպակների հերոսները՝ Պետրոս Աջապանյանը, Ավետիք Ջրանյանը, Բերբերյանը, Զարմայրը, Մելքոնը եւ ուրիշներ, դառնում են 1910-ականների հայկական խառն ու հակասական կյանքի բնորոշ ներկայացուցիչները գրականության մեջ:

«Ցրոնք արվարձանը» վիպակում հեղինակը ներկայացնում է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ թիկունքում մնացած քաղաքի արվարձաններից մեկի բնակիչների կյանքը եւ նրանց հոգեբանության ու կենցաղի մեջ կատարվող աստիճանական տեղաշարժերը: Պատերազմական վիճակը մարդկանց աստիճանաբար հասցնում է ահավոր մի գերլարվածության, որի ճնշման պայմաններում շատ բան սկսում է վերաիմաստավորվել, մշակվում են բարոյական նոր չափանիշեր, նոր հայացք ապրած եւ ապրվելիք տարիների նկատմամբ: Խախտվում է կյանքի հավասարակշռությունը, մարդիկ նոր ստեղծված վիճակների մեջ աստիճանաբար վերափոխվում են, բացահայտում իրենց էության բազում թաքնված ծալքեր, ինչով էլ կյանքում ձեւավորվում են նոր հարաբերություններ: Դա արդեն գոյավիճակի որոշակի լարվածության հետեւանքով խախտված հավասարակշռության եւ փոխակերպված կյանքի կայունացման նոր դրություն է: Մելքոնյանն ստեղծում է կյանքի հին վիճակներից դուրս եկած եւ նոր վիճակների մեջ իրենց հաստատել փորձող հերոսներ: Դա գոյության ամենադրամատիկ պահերից մեկն է: Եղբայրը կողոպտում է եղբոր հիշատակը, կինը աճուրդի է հանում հավատն ու սերը, սպասումը քարացնում է մարդկանց հոգիները, վիշտը գունազրկում է բոլոր երազանքները, եւ ամեն ինչ գտնում է իր արդարացումը, քանի որ պատերազմ է: Զորավարժու-թյուններ անող սկսնակ զինվորների կրակոցների պատճառով սարյակներն այլեւս քաղաք չեն գալիս, հացի հերթերում ցրտից չսառչելու համար մարդիկ իրենց փոխարեն նշան արած քարեր են դնում, որոնք կարծես տապանաքարեր լինեն... եւ այդ ամենը դառնում է սովորական:

Մելքոնյանը հոգեբանական հիմքերի վրա է տեղափոխում պատերազմը, այդ տեսանկյունից հայտնաբերում կյանքի նոր վիճակներ եւ այդ վիճակների մեջ գործող հերոսներ:

Ժամանակակից կյանքի նյութով գրած *«Հարցաքննություն»* վեպը եւ *«Ընթրիք հինգ հոգու համար»* վիպակն ունեն հարցադրման ընդհանրություն, որ դրսեւորվում է մեր իրականության որոշ շերտերի բնորոշ յուրահատկությունների գեղարվեստական յուրացմամբ ու հեղինակային վերաբերմունքով: *«Հարցաքննություն»* վեպում խոստովանության միջոցով բացահայտվում են երկու տարբեր պատմություններ, դատարկվում են թաքնված գաղտնիքները, եւ ստեղծվում են մերկ հոգու տեր մարդկանց կերպարներ, որոնք կյանքի բերումով դարձել են հանցագործ: Մարդկանց կենսագրությունը կազմող ներքին գաղտնիքների, հոգեկան վիճակների, մանրուքներից ձեւավորվող առօրյայի մանրամասն դատաքննչական վերլուծությամբ բացվում են նոր շերտեր, եւ գրականություն բերվում կյանքին բնորոշ նոր տվյալներ: Մեհենդակ Էսքիջյանը դիահերձող է, տարօրինակ հակումների տեր մի անձնավորություն, ով սուսուփուս, մեկուսի, ստվերի նման ապրում է լռության մեջ: Եվ ահա նրա կյանքը դրվում է խոշորացույցի տակ. կին, ամուսնություն, բաժանություն, ի վերջո, աննկատ ու պատահական հանցագործություն, որ գուցե նաեւ հանցագործություն էլ չէ: Նոր տան փոստարկղում նա փող է գտնում, որ եկել էր հին տանտիրոջ՝ դատավորի հասցեով որպես կաշառք, ու դարձյալ լռություն, աննկատ տեղերում թաքցված դրամ, անքուն գիշերներ, հիվանդագին ապրումներ եւ ծեծ՝ դրամի հասցեատիրոջ կողմից, ինչը եւ նրան հասցնում է մահվան:

Հեղինակը նրբերանգների ու մանրամասների մեջ հայտնաբերել է մարդկային կյանքը կազմող շարժումներ, վիճակներ, ապրումներ եւ այդ ամենի համադրությամբ ստեղծել հերոսի յուրահատուկ մի նկարագիր՝ հիվանդագին, կծկված, լռության ու մթության մեջ հոգեկան անդորր որոնող, արտաքին հարաբերություններից ու կապերից կտրված, դիակների հետ գործ ունեցող մեկը... Բնավորության հատկանիշեր, ինչը նոր կողմեր է բացահայտում մարդու էության մեջ:

Վեպի երկրորդ մասում շարունակվող այս խորացումները, մարդկային բնավորության նոր կողմեր լրացնելով հանդերձ, դառնում են ավելի խնդրահարույց եւ մարդու ներփակ հետազոտությունից վերաճում հանրային կարեւորություն ունեցող խնդիրների արծարծման:

Շահեն Արշակյանն այս անգամ քննում է Համազասպ Բժշկյանի գործը: Վերջինս ակամա հանցագործ է, ունի նախասիրություններ, սովորություններ ու հակումներ. նա բակում արծիվ է պահում ու նաեւ դրա

մեջ է տեսնում կյանքի հետաքրքրությունը, անգամ՝ իմաստը: Սակայն մի օր թռռնուհին եւ նրա ընկերները տանը կերուխում անելուց հետո խոշտանգում են արծվին: Այդ տեսնելով՝ Համազասպ Բժշկյանը կատաղությունից խփում եւ վնասում է թռռանը՝ Աղավնի Բժշկյանին, նրա փեսացուին՝ Գաբրիել Մերկերյանին եւ էլի մեկին: Եվ ահա ծերուկը կանգնած է հարցաքննության առաջ:

Պապը կանգնում է թռռան դեմ. հարազատը չի հանդուրժում հարազատին, նյարդայնանում է նրա պահվածքից, վարքից, կենցաղից, բայց ոչ մի կերպ չի կարողանում ուղղել նրան, մինչեւ անգամ երբ դիմացինն իր թոռն է: Այս վիճակներում առաջացած ջղային գրգռվածությունը մնում է մարդու մեջ, դիտողությունները չեն օգնում, անհանդուրժողականությունը ներքուստ կուտակվում է եւ, ի վերջո, հարազատներին օտարում իրարից: Մելքոնյանի ներկայացրած վիճակի մեջ արդեն կա այդ խզումը. պապը եւ թոռը տարբեր մարդիկ են:

Վիպակի հանրային հնչեղությունը նրանում է, որ քննադատական եւ մերկացնող խոսք է ասվում երիտասարդ սերունդի այն ներկայացուցիչների հասցեին, ովքեր վարում են պորտաբույծ կյանք, նստած են իրենց ծնողների, նաեւ ժողովրդի ուսերին, անկազմակերպ են, աննրբանկատ եւ իրենց հոռի բարքերով ապականում են մարդկանց կյանքը:

Հանրային բարքերի ժամանակակից վիճակը ներկայացնելու տեսակետից ուշագրավ է նաեւ *«Ընթրիք հինգ հոգու համար»* վիպակը: Հեղինակը ներկայացրել է դպրոցական հինգ ընկերների, ովքեր կյանքում ընթացել են տարբեր ճանապարհներով, հասել կեցության տարբեր աստիճանների: Ահա այդ հերոսներն իրենց մասնագիտությամբ եւ դիրքով՝ Նժդեհ Մալխասյան՝ անտառագետ, Գրիգոր Ժամկոչյան՝ ուսուցիչ, Վիրապ Մահիկյան՝ արվեստաբան, Մնացական Բեկյան՝ ավտոհանգրվանի տնօրեն, Արամ Կավկավյան՝ գինու գործարանի տնօրեն: Այս հերոսներից ամեն մեկը ներկայացնում է մարդկային հոգեբանության, բարոյականության եւ կյանքի հանդեպ վերաբերմունքի մի բնագավառ, որ բաժանվում է երկու մասի: Մի կողմից՝ ազնիվ աշխատանք եւ համեստ եկամուտներ՝ այդտեղից էլ կյանքի հանդեպ ունեցած վերաբերմունքի եւ մարդկային հոգեբանության ու բարոյականության մի տարբերակ, մյուս կողմից՝ հանրային դիրքի չարաշահում, անազնիվ եկամուտներ, կյանքն իրեն ծառայեցնող կուշտ մարդու սպառողական հոգեբանություն: Մարդկային նկարագրի այս տեսակները խիստ բնորոշ են մեր կյանքին եւ իրենց բնավորության հիմնական կողմով համապատասխանում են իրականությանը: Կյանքի փաստի ճշմարտացի վերարտադրումն ուղեկցվում է հեղինակային վերաբերմունքով, ինչը երեւում է ոչ թե անմիջական խոսքով, այլ հերոսների հանդեպ ձեւավորվող համակրանքով ու հակակրանքով: Համակրանքը Նժդեհի ու Գրիգորի կողմն է, ովքեր կարողացել են կյանքում պահպանել իրենց հոգու ազնվությունն ու նկարագրի մաքրությունը, հակակրանքը? Մնացականի ու Արամի, որոնցից ամեն մեկն իրենից ներկայացնում է աշխարհի շալակը բարձրացած մի աստիճանավոր թալանչի: Եկամտաբեր պաշտոնյաների, ամեն ինչի իրենց դիրքի ու կուտակածի տեսանկյունից նայող մարդկանց, եւ համեստ ու ազնիվ աշխատանքի տեր մարդկանց միջեւ բնական է, որ պետք է տեղի ունենա բախում: Սակայն կյանքում առճակատումը բախումի չի վերածվում, դառնում է հանդուրժողականություն ու հաշտվողականություն, եւ միայն երբեմնակի ունենում ներքին դժգոհություններ: Հեղինակը վիպակում հարազատ է մնացել հանրային հոգեբանության այս սկզբունքին: Նժդեհը թեեւ զայրույթի նոպաներ է ունենում ընկերների ու նրանց նմանների դեմ (հիշատակելի է խորտկարանում Նժդեհին ծաղրելու եւ ստորացնելու տեսարանը), թեեւ ատամների արանքից ինչ-որ բառեր է շպրտում նրանց հասցեին, սակայն, ի վերջո, լռում է եւ, ներքին ընդվզումով հանդերձ, հա-մակերպվում իր շրջապատին: Ժամհարյանի մեջ եւս կա այս երկվությունը, ինչը դառնում է նրա բնավորության հոգեբանական հիմքը. *«Ինչ է պատահել, ինչ ենք մեկս մյուսից վախենում, հը՞, ինչի, մի բան մտածում, ուրիշ բան ասում, դիմացինին թուքումուր տալով՝ մեր մեջ հայհոյում եւ նույն պահին, նույն, նույն... երեսանց ժպտում: Ախր չի լինի, մեղք են մեր դեմքերը, չե՞ս նկատում, կամաց-կամաց դառնում են դիմակ»:* Նժդեհի ու Ժամհարյանի ազնվությունն արդար լինելով՝ պարուրված է խեղճության քողով: Այս խեղճությունն էլ է հոգեբանական որակ եւ բնորոշ որակ: Կյանքը երբեմն այնպես է ստորացնում ու ծաղրում մարդկանց, այնպիսի շրջանակների մեջ դնում, որ նրանք կորցնում են իրենց համարձակությունը, կուլ տալիս ներքին զայրույթը, ճզմում բողոքի ձայնը եւ դառնում խեղճ ու վախվորած:

Այս ազնիվ խեղճերի եւ լպիրշ համարձակների միջեւ խանգարված բարոյականությամբ կանգնում է արվեստի մեկնաբան Վիրապը:

Բավակա՛ն է, ինչքան սպառողական հոգեբանության մարդկանց՝ զանազան թալանչիների, առեւտրականների, պետերի, մի խոսքով՝ հանրային կյանքում դիրքային առավելություն ունեցողների եւ այդ դիրքը չարաշահողների կերպարները դառնան ֆելիետոնի եւ *«Ոգնու»* ծաղրանկարների նյութ: Այդ նյութն իր մեջ լուրջ խնդիրներ է պարունակում եւ միանգամայն ճիշտ է վարվել Մելքոնյանը՝ իր վերջին երկու գործերում ներկայացնելով կյանքի այդ կողմերը:

Ուրիշ հարց, որ պետք է խոսել նյութի յուրացման գրական վարպետության մասին: Այս տեսակետից Մելքոնյանի նշված գործերում կան ձգձգված, երբեմն ավելորդ հատվածներ, միշտ չէ, որ հերոսները կերպավորվում են շարժման ու գործողությունների ընթացքում, պատումի մեջ իշխում են անհարկի նկարագրությունները:

Ժամանակակից բարքերի, մարդկանց մեջ ստեղծվող հարաբերությունների նոր կողմերի ներկայացման տեսակետից Մելքոնյանի *«Հարցաքննություն»* եւ *«Ընթրիք հինգ հոգու համար»* երկերը գրականություն են բերում նոր հերոսներ, կյանքի նոր վիճակներ եւ, դրանով իսկ, ընդարձակում ժամանակակից արձակի կենսանյութի շրջանակները:

(շարունակելի)

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արծաթե մեդալակիրներ

Արա Աղանյան

Վարազդատ Լալայան

Բրոնզե մեդալակիրներ

Հռիփսիմե Խուրշուդյան



Սիմոն Մարտիրոսյան



Պետրոս Պետրոսյան

Ռաֆիկ Հարությունյան

Նախագիծ

Փոփոխություններ ավարտական վկայականներում եւ ատեստատներում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել կրթության պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձեւերը եւ ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթի (դիպլոմի) միասնական հավելվածի նմուշը հաստատելու մասին Կառավարության որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին նախագիծը:

Նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է էլեկտրոնային փաստաթղթերի տրամադրման ընթացքում որոշ ձեւակերպումների փոփոխության կարեւորությունից, ոլորտի քաղաքականության, ինչպես նաեւ տեղեկատվական համակարգի լավարկման նպատակով իրականացված փոփոխություններից:

Ժամանակակից տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների լայն կիրառումն ուսուցման ու կրթության կառավարման համակարգերում միջոցառման շրջանակում 2022 թվականից սովորողներին եւ շրջանավարտներին ավարտական փաստաթղթերը տրամադրվում են էլեկտրոնային եղանակով, եւ գործարկման արդյունքում որոշակի ձեւակերպումներ փոխելու խնդիր է առաջացել:

Փոփոխությունը պայմանավորված է հանրակրթության ոլորտի քաղաքականության վերանայմամբ, մասնավորապես՝ վկայականում կլրացվեն 5-9-րդ դասարանների ուսումնական հաստատության ուսումնական պլանով նախատեսված եւ սովորողի կողմից ուսումնասիրված առարկաների տարեկան գնահատականների միջին թվաբանականը եւ ամփոփիչ ատեստավորման (քննական) գնահատականները: Ատեստատում կլրացվեն ուսումնառության վերջին 3 տարվա ընթացքում ուսումնական հաստատության ուսումնական պլանով նախատեսված եւ սովորողի կողմից ուսումնասիրված առարկաների տարեկան գնահատականների միջին թվաբանականը եւ պետական ամփոփիչ ատեստավորման (քննական) գնահատականները:

Կլրացվեն այն առարկաները, որոնք ուսումնասիրել է սովորողը, եւ ինքնաշխատ եղանակով համապատասխան միավորները կներբեռնվեն փաստաթղթում՝ բացառելով մարդկային միջամտությունը:

Այսպիսով՝ փաստաթուղթն ամբողջությամբ կձեւավորվի էլեկտրոնային եղանակով եւ զերծ կլինի անճշտություն առաջացնող խնդիրներից:

Նույն նպատակով՝ հանրային քննարկման է դրվել նաեւ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի 2010 թվականի հունիսի 22-ի *«Հայաստանի Հանրապետության հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման եւ պահպանման կարգերը հաստատելու մասին»* թիվ 609-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին նախագիծը:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Արհեստական նեյրոնային ցանցերի կիրառությունը կրթական գործընթացներում

Էլեկտրոնային ուսուցման համակարգերի մշակումը եւ թվայինի ներդնումը ներկայում հանգեցնում են տեղեկատվական հոսքերի անընդմեջ ավելացմանը եւ մեծ տվյալների (Big Data) առաջացմանը, որոնց վերլուծությունն ավանդական կրթական գործընթացում ներգրավված մասնագետից պահանջում է բարձր մասնագիտական ունակություններ՝ մասնավորապես, երբ անհրաժեշտ են փորձագիտական գնահատականներ՝ հիմնաքարային որոշումներ կայացնելու համար: Ընդորում, հաշվի առնելով առկա տեղեկատվական հոսքերի ժամանակակից մակարդակը եւ արտադրված տեղեկատվության ծավալը, մասնագիտական ունակությունների հետ մեկտեղ խիստ անհրաժեշտ եւ պարտադիր է տվյալների զտումն ու տեսակավորումը՝ դրանց հետագա օգտագործման, ուսումնասիրման, վերլուծության նպատակով: Նման դեպքերում հիմնվել միայն էվրիստիկ գիտելիքների եւ մասնագիտական փորձի վրա ոչ միշտ է արդարացված, առավել եւս, երբ կայացվելիք որոշումը կրում է ռազմավարական բնույթ, իսկ ժամանակը սուղ է:

Կրթական գործընթացներում արհեստական բանականության կիրարկումն իրենից ներկայացնում է ուսումնառության ընթացքում մարդու վարքագծի, կարողությունների, ունակությունների բացահայտմանը եւ հետագա զարգացմանն ուղղված մանկավարժական, հոգեբանական, մեթոդոլոգիական եւ դիդակտիկական հետազոտությունների համախումբ՝ նպատակ ունենալով ավելի լավ հասկանալ, թե ինչպես են մարդիկ սովորում եւ ինչպես սովորելն ավելի արդյունավետ դարձնել: Նման պարագայում, արհեստական բանականությունը հանդես է գալիս ինժեներական մտքի վրա հիմնված մանկավարժական պայման:

Արհեստական բանականության հիմնական գործիքակազմն է արհեստական նեյրոնային ցանցը: Նեյրոցանցային տեխնոլոգիաները միտված են փոխարինելու տվյալների քայլ առ քայլ եւ աստիճանաբար վերլուծությունը տեղեկատվության ամբողջ զանգվածի միաժամանակյա՝ զուգահեռ մշակմամբ: Նեյրոցանցային տեխնոլոգիաներում ծրագրավորման դասական գաղափարը փոխարինված է ուսուցանելու ալգորիթմով: Արհեստական նեյրոնային ցանցերն ուսուցանվում են. ուսուցանելու հնարավորությունը դրանց գլխավոր առանձնահատկություններից է: Այս առանձնահատկության շնորհիվ *«վերածրագրավորման»* ու տվյալների բազան փոփոխելու կարիք չկաց ցանցը ունակ է հայտնաբերել տվյալների միջեւ կախվածություններ, ինչպես նաեւ կատարել ընդհանրացում:

Արհեստական նեյրոնային ցանցերի մոդելները կրթության ցանկացած մակարդակում՝ թե՛ ֆորմալ, թե՛ ոչ ֆորմալ, կարող են պրակտիկ նպատակներով կիրառվել կրթության որակի շարժընթացի գնահատման համար՝ սովորողների եւ դասավանդողների բնութագրիչների կանխատեսման միջոցով, օգտագործվեն կրթության որակի կոնկրետ ցուցանիշների վրա ազդող գործոնների որոշման, իրականացված կրթական ռազմավարության ազդեցության գնահատման համար, տվյալների միջեւ բարդ կախվածությունների, որոնք չեն բացահայտվում ստանդարտ վիճակագրական մեթոդներով, հայտնաբերման համար, օգնում են կրթական միջավայրի ձեւավորման, դասընթացների նյութերի եւ կրթական ռեսուրսների կառավարման գործում:

Կրթական գործընթացներում մասնավորապես կարելի է առանձնացնել նեյրոցանցային տեխնոլոգիաների կիրարկման երկու հայեցակետ.

1. նեյրոտեսության բազայի հիման վրա կառուցված ծրագրային փաթեթների օգտագործում՝ կրթական պրոցեսի կազմակերպման, հսկողության/վերահսկողության, վերլուծության գործընթացների ավտոմատացման համար,

2. անմիջականորեն ուսումնառողին կոնկրետ առարկան կամ նյութն ուսուցանելու նպատակով ստեղծված նեյրոցանցային ծրագրային փաթեթի ներդնում:

Այսպիսով, նեյրոցանցային տեխնոլոգիաները կրթական գործընթացի բոլոր մասնակիցների համար, ավանդական կրթական վիճակագրության սահմաններից դուրս, ստեղծում են հնարավորություն կարճ ժամանակահատվածում արագ կայացնելու տեղեկացված որոշում:

Արսեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Երեւանի քաղաքապետարանի ֆինանսական վարչության՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսական գործառույթների կազմակերպման բաժնի պետ

Ոսկե շնորհավորանքի

Կնդամենը 8 տարի է, ինչ Վարինե ԴարՈինյանը (կամ ինչպես նրան դիմում են աշակերտները՝ Վարինա Վաղրամովնան) դասավանդում է Գրիգոր Նարեկացու անվան թիվ N 137 հիմնական դպրոցում, Ոայց հասցրել է այնքան հոգատարություն, սեր ու նվիրում Ոաժանել իր սաներին, այնպիսի հեղինակություն ձեռք Ոերել, ինչպիսին դժվարությամբ է հաղթվում Ոայմաթիվ վաստակաշատ մանկավարժների: Եվ նա դրա համար հատուկ ջանքեր չի գործադրում: Դարպապես ապրում է եւ նույնիսկ իր ապրելու դեսակով կրթում ու դաստիարակում: Էությամբ Ոո կոչումով մանկավարժ Վարինա Վաղրամովնային շատ են սիրում թե՛ ներկա եւ թե դպրոցն արդեն ավարտած, Ոայց միշտ նրան աշակերտող իր առաջին ու առայժմ միակ դասվարական դասարանի սաները:

Ինքը՝ Վարինե ԴարՈինյան-Գեորգյանը, ծնվել է 1967 թ. ապրիլի 30-ին, Երեւանում: Սովորել է Վ. Բրյուսովի անվան օրար լեզուների պետական ինստիտուտում եւ ավարտել ռուսաց լեզվի ու գրականության մասնագետի որակավորմամՈ: 2015 թ-ից աշխատում է Գ. Նարեկացու անվան դպրոցում:

Ասում են՝ դպրոց մտնելու պահից նա դարձյալ դպրոցինը, աշակերտներինը: Ամենի շատ նրանց հետ էր լինում, նրանց հոգսերով ապրում եւ անում ամեն ինչ, որ երեխաները միշտպես սիրով ու զերմությամՈ շրջապատված զգան իրենց: Մի անգամ նույնիսկ ամուսինը կատակեց. այն օրից, երՈ դպրոցը գրավ Վարինա Վաղրամովնային, ինքը նրան կորցրեց: Այդպիսին է նրա նվիրումը իր սաներին՝ 2022 թ. շրջանավարտներին, ովքեր զերմորեն շնորհավորում են սիրելի ուսուցչուհուն ծննդյան 56-րդ տարեդարձի առթիվ:

Երբ ստեղծագործում են աշակերտները

Աստղաֆիզիկոս եւ թարգմանիչ

«Ինձ շատ հոգեհարազատ են Օսկար Ուայլդի հեքիաթները, որոնք առաջին անգամ կարդացի անգլերենով, եւ մայրիկիս աջակցությամբ իմ մեջ եղած կայծը վերածվեց հրդեհի: Ես անցա գործի. ընտրեցի իմ սիրելի հեքիաթը՝ «Սոխակն ու վարդը», եւ սկսեցի թարգմանել: Սկզբում երկմտում էի՝ արդյո՞ք կստացվի: Ստացվեց: Թարգմանեցի այդ հեքիաթը, մայրիկս ներկայացրեց այն մանկական գրքերի թարգմանիչ եւ խմբագիր Նունե Թորոսյանին: Առաջին իսկ տողերից նա հասկացավ լեզուները զգալու իմ կարողությունը, որը ձեւավորվել է իմ հարազատ դպրոցում՝ ինձ դասավանդող ուսուցիչների շնորհիվ ու նրանց ջանքերով:

Տիկին Նունեն ինձ շատ խրախուսեց ու երաշխավորեց անգլերենից հայերեն թարգմանելու «Պանչատանտրան»՝ հնդկական հեքիաթների ժողովածուն: Իրար հաջորդեցին անքուն գիշերներ: Ես տարերքի մեջ էի: Ութ ամսվա տքնաջան աշխատանքից հետո ինձ հաջողվեց թարգմանել մոտ հիսուն հեքիաթ: Տիկին Նունեի խմբագրությամբ՝ գիրքը ներկայացվեց տպագրության: Ես երանության մեջ էի: Կատարվել էր իմ բաղձանքը: Թարգմանությունս հավանության արժանացավ:



Շուտով ես հրավեր ստացա հանրային հեռուստաընկերությունից՝ լինելու «Առավոտ լուսոյի» հյուրը: Դրան հաջորդեց հանրային ռադիոյի «Դպրություն» հաղորդաշարը:

Առաջին հաջողությունն ինձ թեւեր տվեց: Առաջիկայում մեծ պլաններ ունեմ: Ուզում եմ դառնալ աստղաֆիզիկոս եւ այն համատեղել մասնագիտական գրքերի թարգմանության հետ:

Իմ ձեռքբերումների, ինձ վստահելու եւ հավատալու համար շնորհակալ եմ առաջին հերթին մայրիկիս, տիկին Նունե Թորոսյանին, «Անտարես» հրատարակչության տնօրեն պարոն Արմեն Մարտիրոսյանին, Հռիփսիմե Մադոյանին»:

Մանուշակ ՆԵՐՍԻՍՅԱՆ
Երեւանի
Հովհաննես Հովհաննիսյանի անվան
h.52 հիմական դպրոցի
9-րդ դասարանի աշակերտուհի

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի *«Հրազդանի հ. 2 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (15 դասաժամ) թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***ապրիլի 26-ից մինչեւ մայիսի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***մայիսի 16-ին՝ ժամը 13:00-ին,*** ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի հ. 2 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Հրազդան, Կենտրոն 49:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 24-64-54 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի *«Շահումյանի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (2 մասնագետ, 28 դասաժամ), կենսաբանության (10 դասաժամ), ռուսաց լեզվի (6 դասաժամ), ինֆորմատիկայի (6 դասաժամ), ֆիզիկայի (10 դասաժամ) թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***ապրիլի 26-ից մինչեւ մայիսի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***մայիսի 12-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արմավիրի մարզի Շահումյանի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 84-56-57, (055) 73-22-22 հեռախոսահամարներով:

Ոսկե մեդալակիրներ

Արթուր Ալեքսանյան



Մալխաս Ամոյան



Արսեն Հարությունյան



Վազգեն Թեւանյան

Արման Ավանեսյան

Արսեն Խանջյան

Արծաթե մեդալակիր



Վարսիկ Գրիգորյան

Փորձի՛ր լրացնել

Հիշողության ծիրում



Ուղղահայաց

1. *«Ապրելու ապրիլ»* երգի երաժշտության հեղինակը(անունը): **2.** Գավառ Մեծ Հայքի Այրարատ նահանգում: **3.** Հայտնի իրավապաշտպան, փաստաբան՝ …Քլունի, ով ՄԻԵԴ-ի դատարանին ներկայացրել է Հայոց ցեղասպանության վերաբերյալ անժխտելի փաստեր, այդ թվում՝ Օսմանյան կայսրության ղեկավարների ռազմական հանցագործությունները: **5.** Հայոց ցեղասպանության մասին պատմող ֆիլմ, որի ռեժիսորն է Ատոմ Էգոյանը: **7.** *«Նոյյան ճանապարհ»* գրքի հեղինակը՝ ամերիկացի գրող … Դավիթ: **8.** *«Արյունակից եղբայրները»* ֆիլմի ռեժիսորը՝ … Սխապ: 9.Հայոց ցեղասպանության մասին պատմող *«Մայրիկ»* ֆիլմի ռեժիսորը՝ … Վերնոյ (Աշոտ Մալաքյան): **14.** Համաշխարհային մարդասիրական մրցանակի անվանումը: Այդ մրցանակը Վարդան Գեւորգյանի, Նուբար Աֆեյանի եւ Ռուբեն Վարդանյանի մարդասիրական ձեռնարկումն է: **15.** *«Աղետ, մի ցեղասպանություն»* ֆիլմի ռեժիսոր՝ գերմանացի … Ֆրիդլեր: **16.** *«Ապրելու ապրիլ»* երգի խոսքերի հեղինակը(անունը): 17.Հայ ժողովրդի նորվեգացի մեծ բարեկամը: **22.** Հայոց ցեղասպանության 100-ամյակի խորհրդանիշ ծաղիկը: **23.** Ֆիդայի, վրիժառու, ազատագրական շարժման գործիչ, Հայաստանի Առաջին Հանրապետության ռազմական նախարար (1920թ.) Դրաստամատ Կանայանի ֆիդայական անունը: **24.** Հայդուկապետ, ռազմական տեսաբան Հրայր Դժոխքի՝ ժողովրդի շրջանում ստացած անունը: **25.** Ցոփքի եւ Կոմմագենեի միացյալ հայկական պետության թագավոր: **28.** *«Միլիոնավոր կյանքեր»* երգի երաժշտության հեղինակ՝ … Մարգարյան: **29.** Հայ աշուղ, *«Զորավար Անդրանիկ»*, *«Մի ողբերգություն»* երգերի հեղինակ: **30.** *«Էրթանք մըր էրգիրը …, Քաղինք բանջար, նուռ ու նուշ, Ուտինք քաղցր մանանա, Խմինք պաղ ջրերեն անուշ»* (*«Էրթանք մըր էրգիրը…»*, հայրենասիրական երգ): **35.** Ազգային- ազատագրական շարժման գործիչ, հայդուկային շարժման առաջին կազմակերպիչներից (1850-1902)՝ … Թավաքալյան: **36.** *«Ելի՛ր Գեւորգ, ելի՛ր, դուշմանը … է, Հայոց ազգի համար մեռնելը փառք է»* (*«Գ.Չաուշի երգը»*, հայրենաս. երգ): **37.** *«Ամեն թփին կիջնի քաղցրիկ …, Մեկ-մեկ ուտինք փշուր, մըր սիրտ հովանա, Սասնա էրգիր մեր աչվու դեմ թող ծովանա, Քելե՛, լաո, քելե՛ երթանք մըր երգիր»* (*«Քելե լաո»*, ժող. երգ): **41.** *«Միլիոնավոր կյանքեր»* երգի խոսքերի հեղինակը՝ ամերիկացի բանաստեղծուհի՝ …Մեյն: **42.** Հայ ազգային ազատագրական շարժման գործիչ, Աղբյուր Սերոբի կինն ու զինակիցը՝ … Մայրիկ: **47.** Հայաստանի ազգային հերոս, Արցախի հերոս(անունը), ով սպանվել է ահաբեկչության ժամանակ՝ 1999թ. հոկտեմբերի 27-ին: **48.** Հայկական լեռնաշխարհի ամենամեծ լիճը՝ Ուրմիա կամ …: **49.** Ֆրանսահայ հայտնի նկարիչ, *«Ես հայ նկարիչ եմ, ես իմ տառապած ժողովրդի մի բեկորն եմ»* խոսքերի հեղինակ՝ Գառզու կամ … Զուլումյան: **50.** Արցախի հերոս Պետրոս Ղեւոնդյանի կեղծանունը(նա զոհվել է 1999թ, Քարվաճառում): **53.** Հայոց ազատամարտի աննկուն երախտավոր Սեբաստացի Մուրադը Երզնկայում իր զինակից Կայծակ Առաքելի հետ զբաղվել է գերեվարված հայ որբերի ետ գնմամբ: Նշանաբանը՝ *«Մեկ հայը՝ մեկ …»:* **55.** Հայկական լեռնաշխարհի 15 նահանգներից: **57.** Հայ ազգային ազատագրական շարժման գործիչ, ֆիդայի Սարգիս Ցովանյանի ֆիդայական անունը:

Հորիզոնական

4. Կիլիկյան Հայկական թագավորության հզոր ամրոցներից: **6.** *«Արտույտների ագարակը»* ֆիլմի հեղինակներից՝ … Տավիանի: **7.** Այս հայ ազգային-ազատագրական շարժման գործիչի մասին(քրդերի հետ կռվելիս) քրդերը ասել են *«Սա մարդ չէ, սա … է»* (փոթորիկ): **10.** 5-րդ դարի հայ պատմիչ, Վարդանանց պատերազմի (451թ.) ականատես պատմիչը: **11.** *«Իմ որդին պիտի հայ լինի»* ֆիլմի ռեժիսերը՝ կանադահայ Հակոբ…: **12.** Հայ ազգային ազատագրական շարժման գործիչ, ով Գ. Չաուշի հետ իրականացրել է Արաբոյին մատնողի ահաբեկմանը, … Ալիզռնանցի: **13.** Հայ ազգային էպոս՝ դյուցազնավեպ *«… ծռեր»:* **15.** *«Արարատն է վկա»*, առաջին եւ միակ ռուսերեն երգի (նվիրված հայոց ցեղասպանությանը) հեղինակը՝ … Սամատինա: **17.** Հայ մեծանուն գրող Ե. Չարենցի վեպը՝ *«Երկիր …»:* **18.** Կոստանդնուպոլիսում ծնված հայ բանաստեղծ Տիրան Չրաքյանի գրական կեղծանունը: Նա մահացել է գաղթի ճանապարհին (1921թ.): **19.** Վանա լճի կղզիներից: **20.** Հայ զորավար, իրանական խաների եւ թուրքական նվաճողների դեմ Սյունիքի ազատագրական շարժման առաջնորդ՝ Դավիթ …: **21.** Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից՝ … փաշա: **25.** Հայոց վերջին արքա (1465-1471) Սմբատ …: **26.** Հայ ազատագրական շարժման մեծ երախտավոր՝ Իսրայել …: 27.Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ (1871-1904)՝ … Լեւոնյան (Աշոտ Երկաթ): **31.** Մարտակերտի շրջանի Դրմբոն գյուղի համար մղած մարտում զոհված Արցախի հերոս(անունը): **32.** Հայաստանի ազգային հերոս, Արցախի հերոս (անունը), *«Եթե կորցնենք Արցախը մենք կշրջենք հայ ժողովրդի պատմության վերջին էջը»* խոսքերի հեղինակ: **33.** Ազգային-ազատագրական շարժման գործիչ Համբարձում Բոյաջյանի (1867-1915) ֆիդայական անունը՝ Մեծն …: **34.** Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ Մկրտիչ Սահակյանի(1861-1896) մականունը: **38.** Լեռ Սասունում, լեռան գագաթին (2967մ.) կառուցված է Սուրբ Աստվածածին վանքը: **39.** *«4-րդ գնդի հրամանատար՝ … Քեռի, ինքդ արի եւ գործերդ միշտ բարի, Սրտաճմլիկ լուրդ առինք ցավալի, Քաջանց քաջը հերոս, Քեռի պանծալի»* (*«Քեռիին երգը»*, ազգ.երգ): **40.** Միջնադարյան հոգեւոր, մշակութային եւ գիտակրթական նշանավոր կենտրոն Մեծ Հայքի Գուգարք նահանգի Տաշիրք գավառում *«…ի վանքային համալիր»:* **43.** Լեռներ Արեւմտյան Հայաստանում, ուր գտնվում են աշխարհի ամենաբարձր խաչքարերը, որոնք կանգնեցվել են 1191 եւ 1194 թվականներին: **44.** *«Եկեք գնանք հայ աղջիկներ հասնինք ենտեղ … լեռան, Ազգի պաշտպան ֆիդայիններ մեզի համար զոհ դառան»* (*«Լեռան լանջին»*, Ներսիկ Իսպիրյան): **45.** *«Ջորի Միրոն»* կինոնկարի գլխավոր հերոսի դերակատարը(անունը): **46.** *«Սպի»* ֆիլմի ռեժիսորը՝ գերմանաբնակ թուրք ռեժիսոր … Ակին: **50.** *«Ցեղասպանության որբերը»* ֆիլմի ռեժիսորը՝ ամերիկահայ … Մարոնյան: **51.** Վանի թագավորության հիմնադիր առաջին արքան (մ.թ.ա.860-մ.թ.ա.843թթ): **52.** Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ Առաքել Մխիթարյանի (1863-1893) ֆիդայական անունը: 54.Գետ, որի ափին գտնվող դաշտում տեղի է ունեցել ճակատամարտ (451թ)՝ *«Ավարայրի ճակատամարտ»:* **56.** *«Իմ որդին պիտի հայ լինի»* ֆիլմի ռեժիսորը՝ կանադահայ Հակոբ …: **57.** Հայ բանաստեղծ, բժիշկ, 1915թ. թուրքական յաթաղանի զոհ՝ Ռուբեն …: **58.** Արեւմտահայ գրող-երգիծաբան, ում անունը եղել է թուրքական իշխանության համար «անբարեհույս անձանց» ցուցակում՝ Երվանդ …: **59.** *«Չեմ մոռանա»* երգի հեղինակը՝ ֆրանսահայ՝ … Ալթունյան: **60.** *«Գարուն էր: Ամառ եկավ, Չագ հանեց ձորում …, Իսկ հայը զրկվեց ծագից, Իր պոռթկուն թոնրի տաքից, իր մորից, հորից, յարից, Իր բնից ու աշխարհից»* (Պ.Սեւակ, *«Ողոանք եղեռնական»*):

Կազմեց Վոլոդյա ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Երեւանի Գր. Նարեկացու անվան հ. 137 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (21 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***ապրիլի 26-ից մինչեւ մայիսի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***մայիսի 17-ին՝ ժամը 14:00-ին,*** Երեւանի Գր. Նարեկացու անվան հ. 137 հիմնական դպրոցում, ք. Երեւան, Սողոմոն Տարոնցի 17:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 46-66-01 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Երեւանի Գայի (Հայկ Բժշկյանց) անվան հ. 129 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի (տղաների խումբ, 4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***ապրիլի 26-ից մինչեւ մայիսի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***մայիսի 16-ին՝ ժամը 14:30-ին,*** Երեւանի Գայի (Հայկ Բժշկյանց) անվան հ. 129 հիմնական դպրոցում, ք. Երեւան, Հրաչյա քոչար 29:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 22-31-96 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի *«Չարենցավանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան հ. 3 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (13 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ մայիսի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***մայիսի 12-ին՝ ժամը 15:00-ին,*** ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան հ. 3 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Չարենցավան, Երիտասարդության 17:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 52-51-00 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի *«Մրգաշենի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի անգլերենի (2 դասաժամ), ՆԶՊ-ի (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***ապրիլի 26-ից մինչեւ մայիսի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***մայիսի 12-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Կոտայքի մարզի Մրգաշենի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Մրգաշեն, 2-րդ փ., 1-ին փակուղի 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0224) 6-34-20, (098) 65-43-28 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի *«Դվինի Լ. Ազգալդյանի անվան միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (20 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***ապրիլի 26-ից մինչեւ մայիսի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***մայիսի 16-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արարատի մարզի Դվինի Լ. Ազգալդյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ք. Դվին, Օրբելի 14:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 02-29-82 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի *«Քասախի Ա.Հովհաննիսյանի անվան հ. 2 միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի դասվարի (2 մասնագետ, 16 եւ 15 դասաժամ), հայոց լեզվի եւ գրականության (19 դասաժամ), պատմության (15 դասաժամ), ֆիզիկայի (11 դասաժամ), ռուսաց լեզվի (2 մասնագետ, 15 եւ 16 դասաժամ), երաժշտության (4 դասաժամ), կերպարվեստի (4 դասաժամ), մաթեմատիկայի (21 դասաժամ), ինֆորմատիկայի (2 դասաժամ), տեխնոլոգիայի (տղաների խումբ, 4 դասաժամ), ֆիզկուլտուրայի (2 մասնագետ, 9 եւ 21 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ մայիսի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***մայիսի 12-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի Պարույր Սեւակի անվան հ. 2 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Արարատ, Շահումյան 16:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0234) 4-12-09, (077) 04-10-71 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Երեւանի հ. 178 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (16 դասաժամ), երաժշտության (10 դասաժամ), ինֆորմատիկայի (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

